



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3845

15

0-92

14 JUL 2009

ՊՐՕՖԷՍՍՈՐ ՕՐՇԱՆՍԿԻ

ՀՈԳԵՐԱՌԻՆԹԵԱՆ ՏԵՂԸ
ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՉԱՐՔՈՒՄ

ԹԱՐԳ. Ե. Ժ. Վ. ՄՈՒՐԱԳԵՆՆԻ

(Արտատպած Արարատ ամսագրից)

ՎԱՂԱՐՇԱԳԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ա. Էջմիածնի

1906

15
0-92

313

ՏՐՈՏ . ԵՅ . 4 Ո

5
-92
W

ՊՐՈՖԷՍՈՐ ՕՐԵԱՆՍԿԻ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՂԸ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՉԱՐՔՈՒՄ

ԹԵՐԳ. Ե. Ժ. Վ. ՄՈՒՐԱԿԵՆԻ

(Արտատպած Արարատ Ամսագրից)

Վ. Ա. Ղ. Ա. Ր. Շ. Ա. Պ. Ա. Տ.

Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի

1905

Handwritten notes in purple ink on the left side of the page.

04.09.2012

3875

Дозволено цензурою 31 Августа 1905 г. г. Тифлисъ.



232457

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՂԸ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇԱՐԳՈՒՄ

Պրոֆ. Ի. Գ. Օրբանյի

ԳԼՈՒԽ I.

Հոգեկան եւ հիւրական աւխարհի փոխադարձ կապը

Մարդու ողջ գիտութիւնը և այդ գիտութեան մէջ մտնող բոլոր գիտութիւնները բաժանուած են երկու ընդարձակ շրջանների: Գիտութիւններից մի մասը իրեն մէջ բովանդակում է մեզ շրջապատող աշխարհի ուսումնասիրութիւնը, որի մէջ մտնում է նաև մարդու ֆիզիքական աշխարհը, — դա բնագիտութեան շրջանն է: Գիտութիւնների միւսը խումբն ընդգրկում է այն բոլորը, ինչ որ շօշափում է մարդկային կեանքի հոգեկան կողմերը, նրա մտաւոր բարոյական ոյժերը և այդ ոյժերի արդիւնքը՝ — փելիսոփայութիւն, կրօն, բարոյախօսութիւն, լեզուագիտութիւն և մարդկային ցեղի ամբողջ պատմութիւն:

Այս անհատական և ընկերվարական գիտութիւնների շրջանի կեդրոնն է հոգեբանութիւնը, մի գիտութիւն, որի նպատակն է ցուցակագրել և տալ մարդկային հոգու բոլոր հարստութիւնները, որը ձգտում է թափանցել հոգեկան երևոյթների սկզբնաւորութեան և զարգացման գաղտնիքների խորքերը:

Սովորաբար ասում են, որ հոգեբանութիւնը մարդու և բարձր կենդանիների հոգու ուսումնասիրութեան վերաբերեալ գիտութիւն է:

Այստեղ շատ բնական կլինէր հարցնել, ասկայն ինչ բան է մարդու հոգին: Այս հարցի համար կան տարբեր

պատասխաններ՝ նայեաժ թէ ինչ տեսակէտից է քննութեան առնուում մարդու հոգեկան աշխարհը:

Բնագիտականից տարբեր անհատական գիտութիւնների շրջանում դեռ ց'այսօր էլ չի վերջացել այն հին կռիւը, որը գոյութիւն ունի բնագանցական և փորձնական գիտականի կամ ռացիօնալիզմի մէջ: Բնագիտութիւնը վաղուց արդէն ազատուել է ինչ որ իրերի գոյութեան հաւատալուց: Երբ բնագէտը, քիմիկոսը կամ առհասարակ նատուրալիստը խօսում են նիւթի մասին, նրանք այդ բառի տակ հասկանում են իրենց զգայարաններին մատչելի մի առարկայ (օբեկտ), որը կշիռ և չափ ունի: Այժմ այլ ևս չեն խօսում ինչ որ՝ զգայարաններին անմատչելի նիւթի մասին, որը նոյն իսկ կողմնակի կերպով մատչելի չէ մեր ըմբռնողութեան: Նոյնը չենք տեսնում հոգեբանութեան մէջ, որտեղ դեռ պատահում են հետախուզողներ, որոնք ընդունում են առանձին ոյժի՝ էութեան գոյութիւն, որը դրուած է իբրև հիմք և ծառայում է որպէս ազբիւր և սկզբնապատճառ հոգեկան բոլոր երևոյթների: Այդպիսի բնագանց հոգեբանների տեսակէտից մեր հոգեկան կեանքի բոլոր առանձին մոմէնտները՝ այսինքն բոլոր առանձին ձևերն ու մտքերը գաղտնի՝ խորհրդաւոր հոգու միայն մասնակի արտայայտութիւններ են. հոգու, որը՝ իբրև թէ ամբողջական և անբաժան մի էութիւն է հանդիսանում: Սակայն մեր ժամանակ հոգեբանների մեծ մասը հրաժարուեց հոգու մասին այդ հայեացքն ունենալուց և գիտական հոգեբանութեան նպատակը սահմանափակում են մեր հոգեկան այն երևոյթների ուսումնասիրութեամբ, որոնք մատչելի են մեր ներքին ըմբռնողութեան:

Սակայն այս չի նշանակում, որ հոգեբանութիւնից իբրև թէ պէտք է վանել «հոգի» արտայայտութիւնը. բոլորովին ոչ. միայն պէտք է պայման դնել, թէ ինչ պէտք է հասկանալ այդ անուան տակ:

Իրար հետ համեմատելով «հոգի» գաղափարը հասկանալու զանազան եղանակները, մենք գտնում ենք նրանց բոլորին ընդհանուր մի նշանակութիւն—մի ինչ որ ամբողջ

ջական էութիւն, որը միևնոյն ժամանակ հակադիր է առանձնապէս իւրաքանչիւր հոգեկան երևութիւն, բայց և այնպէս այդ բոլորի հետ մի ընդհանուր կապ ունի: Ահա իսկապէս այս զուտ փորձնական (էմպիրիքական) և նկարագրական մտքով էլ մենք գործ կածենք հոգի բառը:

Հոգեբաններն իրաւունք ունին շահագործելու հոգու մասին եղած հասկացողութիւնը, միևնոյն ժամանակ պահպանելով այն նախազգուշութիւնները, որոնցով առաջնորդւում են բնագէտներն, երբ օգտուում են նիւթի մասին եղած հասկացողութեամբ՝ երբէք չըմոռանալով, որ հոգեկան բաժան տարրերից դուրս չկայ առանձին, անկախ հոգի, ինչպէս որ չկայ իւր իրական կոնկրետ երևոյթներից անկախ առանձին նիւթ:

Այսպէս ահա, հոգեբանութիւնը այն նկարագրական գիտութիւնն է, որը պարապում է հոգեկան առանձին երևոյթների, նրանց փոխադարձ կապի և նրանց մեր կազմուածքից և շրջապատից ունեցած կախումն ուսումնասիրելով:

Չեւնարկելով հոգեբանական երևոյթների որևէ բաժնի ուսումնասիրութեան, անհրաժեշտօրէն ի նկատի պէտք է առնել այն բացառիկ պայմանները, որոնց մէջ գտնուում է հոգեբանութիւնը բնագիտութեան հետ համեմատած:

Բնագէտը, բուսաբանը և առհասարակ բնախոյզներից իւրաքանչիւրը կարող է ուղղակի և անմիջապէս ձեռնարկել իւր առարկայի ուսումնասիրութեան, իսկ հոգեբանը հարկադրուած է նախ քան հոգեբանական առանձին երևոյթների նկարագրին ու վերլուծութիւնը, պարզել առհասարակ հոգեբանական երևոյթների ընդհանուր հիմունքների շարքը և նրանց ուսումնասիրելու եղանակի առանձնայատկութիւնները:

Ինչո՞ւ է կայանում բնագիտութիւն և հոգեբանութիւն ուսումնասիրելու այդ տարբերութիւնը: Ահա թէ ինչու է կայանում. ամեն մարդ՝ զարգացման ինչ աստիճանի էլ կանգնած լինի, նոյն իսկ բոլորովին ռամիկը՝ իւր ամբողջ կեանքի ընթացքում՝ այնուամենայնիւ զբաղուած է

իրեն շրջապատող բնութեան ունու մնասիրութեամբ: Արդէն մանուկը՝ իւր կեանքի առաջին իսկ օրերից՝ դիտողութիւններ է կատարում՝ շրջապատող իրերի մասին և ծանօթանում է այն առարկաների յատկութեան և ձևերի հետ, որոնց հետ նա շփուում է:

Մարդու ամբողջ կեանքն անցնում է իւր զգայարաններով օգտուելու մէջ, այսինքն դիտելու և փորձի մէջ: Որևէ հոգուի ամենաաղքատ և հոգեկան տեսակէտից սահմանափակ կեանքն անգամ՝ անհնարին է առանց նրան շրջապատող բնութեան երևոյթների դիտութեան ընդարձակ պաշարի: Վերջինիս կանոնաւորութիւնը, կարգը և օրինականութիւնը զարգացման ամենաստորին աստիճանի վրայ գտնուած մարդուն անգամ՝ հասկանալի է: Ահա թէ ինչու բնական երևոյթների որևէ շարքն հետևողաբար ուսումնասիրել սկսողը արդէն հանդիսանում է պատրաստուած՝ ինչպէս իւր նախնական գիտութիւնների պաշարով, այնպէս էլ բնութիւնը դիտելու մէթոդով (եղանակով) և վերջապէս բնական օրէնքների գիտութեան ընդհանուր պաշարով:

Միանգամայն այլ դրութեան մէջ ենք լինում մենք մեր հոգեկան աշխարհի վերաբերութեամբ: Մարդկանց ահագին մեծամասնութիւնը ոչ թէ բաւականաչափ փորձառութիւն չունի իւր սեփական հոգու երևոյթները տարբարութեամբ, այլ շատերը նոյն իսկ հազիւ թէ նկատելիս լինեն, թէ ինչու մն է կայանում ինքնաբնութիւնը և նա ինչով է տարբերւում մեզ շրջապատող բնութիւնն ուսումնասիրելու շաւղից:

Շատ քչերը կը գտնուեն, որոնք կարողանան պարզ հասկացողութիւն ունենալ հոգեկան կեանքի ընդհանուր յատկութիւնների մասին և աւելի քիչ կը գտնուին այնպիսի անձինք, որոնք պարզ հասկանալիս լինին, թէ գոյութիւն ունին օրէնքներ, որոնց հպատակում է մեր հոգեկան աշխարհը: Մենք շատ յաճախ անպատրաստ ենք լինում ունու մնասիրելու հոգեկան երևոյթներ: Եւ այդ միանգամայն բնական է: Մեր՝ շրջակայ բնութեան մասին ունեցած ծանօթութիւնները կազմում են մեր գոյութեան անհրա-

ժեշտ և պարտադիր պայմաններ, իսկ հոգեկան աշխարհի հետ ծանօթութիւնը շոյալութեան առարկայ է և ծանօթութեան կարիքն արդէն առաջ է գալիս մարդկային քաղաքակրթութեան զարգացման ուշ շրջանում: Երկար ժամանակ մարդկութեան զարգացման պատմութեան ընթացքում իւրաքանչիւր մարդ միւսի համար ունէր միմիայն ֆիզիքական ոյժի նշանակութիւն՝ որպէս բարեկամ կամ թշնամի: Եւ միայն վերջին ժամանակներին է վերաբերում մերձաւորի հոգեոյ խորքում թափանցելու անշահասէր ձգտումը:

Այս պատճառների հիման վրայ սկսնակները՝ մարդկային հոգեկան աշխարհի հետ ծանօթանալու իւրաքանչիւր փորձից առաջ՝ նախապէս պէտք է որոշեն և լուսաբանեն հոգեկան երևոյթների ամբողջ աշխարհը և պարզաբանեն ինքնադիտողութեան եղանակը:

Առաջին և ամենաընդհանուր հարցը, որից պէտք է սկսուի հոգեբանութեան յառաջաբանը, կայանում է հետեւալուով. արդեօք կայ որևէ ընդհանուր բան մարդու հոգեկան աշխարհի և նիւթական բնութեան մէջ և նրանց մէջ արդեօք գոյութիւն ունի փոխադարձ որևէ ազդեցութիւն:

Վերջինիս գոյութեան՝ այսինքն բնութեան ազդեցութեան մասին մարդու հոգեկան աշխարհի վրայ և ընդհակառակն, ոչ մի կասկած չկայ:

Հէնց որ մենք մտնում ենք հոգեկան երևոյթների փերային (շրջանին), համոզոււմ ենք, որ նրանց վրայ չի կարելի նայել որպէս նիւթական բնութիւնից կղզիացած՝ առանձին աշխարհի վրայ: Այլ ընդհակառակն՝ մարդկային կեանքի ամբողջ կազմը, մանաւանդ քաղաքակրթութեան բարձր աստիճանին, իրենից ներկայացնում է բնական և նիւթական գործօնների նեղ և համարեա անխզելի մի հիւստածք: Եւ իրաւ, արդեօք դիտակից մարդկային կեանքի իւրաքանչիւր գործողութիւնը կազմուած չէ երկու մոմէնտներից՝ շրջապատող բնութեան մարդու վրայ ներգործելուց և ընդհակառակն՝ մարդու ազդեցու-

թիւնից բնութեան վրայ՝ որպէս հակադրութիւն: Բնութեան և մարդու փոխադարձ ազդեցութեան ժամանակ կատարուող այն ներքին հոգեկան աշխատանքը, որը և զեկավարում է այդ ազդեցութիւնը, կազմուած է նոյնպէս երկու մոմէնտներէրից՝ տպաւորութիւնից և կամքի գործողութիւնից: Բայց գիտակցութեան այդ երկու մոմէնտներն էլ միայն արտացոլացնում են հոգու մէջ երկու հիմնական ֆիզիքական մոմէնտներ՝ միջավայրի ազդեցութիւնը և անհատի հակադրութիւնը (ըէակցիան): Կասկած չկայ, որ ամենասերտ և անխղիւր կապը միացնում է միջավայրի ազդեցութիւնը տպաւորութեան հետ և կամքը հակադրութեան (ըէակցիայի) հետ:

Հոգեկան ու ֆիզիքական գործոնների փոխադարձ յարաբերութիւնը կարելի է երևակայել զանազանակերպ այսպէս՝ կարելի է նրանց ընդունել բոլորովին մէկուսացած, կամ կարելի է նրանց մէջ տեսնել մի և նոյն գործողութեան (պրօցէսի) զանազան կողմերը. բայց յամենայն դէպս նրանք իրականապէս անբաժան շաղկապուած են իրար հետ: Իսկապէս հոգեկան կեանքը ֆիզիքականի ուղեկիցն է: Գիտակցութիւնը կարծէք արմատացած է նիւթական երկու ծայրագոյն երևոյթների (փոփոխութեան) մէջ՝ շրջապատի ազդեցութեան և կենդանական օրգանիզմի (կազմութեան) հակադրութեան մէջ և բաժանում է այդ երևոյթը: Մենք չենք կարող երևակայել մարդկային խելացի կեանքի ոչ մի գործողութիւն, որ խիստ համապատասխան չլինի գիտակցութեան և ֆիզիքական գործողութեան: Օրինակի համար ենթադրենք, որ տպաւորութիւնը խիստ և միանգամայն ճիշտ չի արտացոլացնում իւր մէջ արտաքին առարկայի բոլոր յատկութիւնները՝ այսինքն նրա յարաբերութիւնները անհատի կեանքի շահերի հետ: Այդ դէպքում հակադրութիւն էլ չի կարող ճիշտ լինել. այսինքն անհատը չի կարող միանգամայն օգտակար կերպով յարմարուել արտաքին որոշ ներգործութեան դէմ: Հէնց նոյն ձևով էլ կամքի գիտակցական գործունէութեան մէջ ամենափոքրիկ սխալը անպատճառ կը ցոլանայ անհատի նիւ-

թական հակադրութեան իսկութեան և նպատակայարմարութեան մէջ: Մէկ խօսքով մեր կաղմուածքը շրջապատող միջավայրին յարմարեցնելու գործը, որը կազմում է մարդուս կուլտուրական կեանքի էութիւնը, անբաժան կապուած է մեր գիտակցութեան և հոգու հետ:

Այս կապը առաւել շօշափելի կացուցանելու համար բաւական է յիշել, որ մարդկային կեանքի գործողութիւնները մեծագոյն մասը բաղկացած է ոչ թէ տպաւորութիւնից յետոյ անմիջապէս հետևող գործունէութիւններից, այլ նրանք իրարից հետոս են ժամանակի փոքր կամ մեծ տևողութեամբ, որն անցել է տպաւորութիւնից մինչև գործը: Այն ամբողջ ժամանակի ընթացքում, որն անցնում է արտաքին շարժառիթի կամ պատճառի և ապագայ՝ երբեմն հեռաւոր գործողութեան մէջ, վերջինս գոյութիւն ունի գիտակցութեան մէջ մի միայն հոգեբանական պատկերի ձևով և մինչև որոշ վայրկեան չի արտայայտուում արտաքին թանձրացեալ ձևով: Այդ ամբողջ ժամանակաշրջանում պատկերը կամ ուրուագիծը, կամ ինչպէս հոգեբաններն են ասում՝ ապագայ գործողութեան երևակայութիւնը կարող է և ընդունակ է զարգանալու, ձևափոխուելու որոշ անձի ներքին հոգեկան կեանքի շնորհիւ: Եւ հոգեբանական պատկերները նախասահմանում են կամքի ապագայ շօշափելի գործողութեան փոփոխութիւնը:

Բայց այն կապի ամենափայլուն ապացոյցը, որ միացնում է մարդուս հոգեկան աշխարհը արտաքին բնութեան հետ, կայանում է մեր այն ընդունակութեան մէջ, որով մենք նախատեսնում ենք ապագայ փաստերը և շրջապատող միջավայրի ապագայում մեզ վրայ ունենալիք ազդեցութիւնը: Մարդուս գործողութեանց մեծագոյն մասը, մասշտաբից նրա կուլտուրական կեանքի բարձր աստիճաններում, ոչ թէ կրում է արդէն ստացուած տպաւորութեան հակադրութեան և միջավայրի ազդեցութեան բնաւորութիւն, այլ ընդհակառակն՝ իրենցից ներկայացնում են նախազգուշացնող հակադրութիւններ ապագայում սպասուող ներգործութեան և տպաւորութիւնների: Գարնան

տաքութեան յուսով աշնանացան անող երկրագործը, ձմեռ ժամանակ հարկաւոր գործիքներ պատրաստող ձկնորսը, երկուքն էլ իրենց գործունէութեան ժամանակ ղեկավարւում են իրենց շրջապատող բնութեան մէջ ապագայում տեղի ունենալիք փոփոխութիւնների նախատեսութեամբ: Ի հարկէ նրանք գործում են այդպէս անցեալ փորձերի, անցեալ տպաւորութիւնների շնորհիւ և այն հաւատով, որ ապագայում կը կրկնուի այն, ինչը որ տեղի է ունեցել անցեալում: Բայց և այնպէս մարդուս արտաքին բնութեան յարմարութեւ (կերպը) եղանակը այս գէպքում հանդիսանում է հակադարձ՝ հոգեկան շարժառիթն է առաջնորդում գէպի գործը, իսկ իրական տպաւորութիւնը լինում է վերջին օղակ այն շղթայի, որը կապում է արտաքին և ներքին աշխարհներն իրար հետ:

Ի՛նչպէր է այս շարքում, որոնք հիմնուած են նախատեսներու վրայ, նշանաւոր դեր է խաղում նախատեսներու հոգեբանական գործողութեան և սպասուող արտաքին գէպքերի զուգորդութիւնը: Անկերական կեանքի ամբողջ կազմը հիմնուած է թէ նախատեսներու իսկութեան և թէ այդ իսկութեան մասին մարդկանց ունեցած հաւատոյ վրայ: Իսկ այդպիսի հաւատ, որը հաստատուում է ամեն օր և ամեն ժամ ամբողջ դարերի ընթացքում, կարող է ծառայել որպէս անհերքելի փաստ մեր հոգեկան ամբողջ կեանքի և մեզ շրջապատող բնութեան կանոնաւոր ընթացքի մէջ եղած անխզելի ներքին կապի գոյութեան: Այդ կապը երևան է գալիս նաև այն բանում, որ մարդուս կեանքը բաժանուած է երկու մասերի՝ գիշերուայ և ցերեկուայ: Իսկապէս կարելի է ասել, որ մարդս գիտակցական հոգեկան կեանքով ապրում է մի միայն ցերեկները, իսկ գիշերը՝ քնած ժամանակ նա ապրում է սոսկ բուսական կեանքով: Ի նկատի չառնելով կրթուած դասակարգի մէջ տեղի ունեցած շեղումն այդ գրութիւնից, այնուամենայնիւ մարդկային կեանքը ներկայացնում է համաչափ իրար յաջորդող — հոգեկան և բուսական կեանքի երկու շրջաններ, որոնք համերաշխ են մեզ շրջապատող բնութեան ընթացքի հետ՝ այսինքն

իրար յաջորդող գիշերուայ և ցերեկի հետ: Կասկած չկայ, որ ինչպիսի էլ լինին այն ներքին ֆիզիոլոգիական պատճառները, որոնցից առաջ է գալիս մարդուս քունը, քնոյ երևոյթը վերջի վերջոյ հետևանք է մեր հոգեկան ներադային համակարգութեան՝ բնութեան կանոնաւոր ընթացքի հետ յարմարութեւ: Հոգեբանը մի հայեացքով գիտելով գիտակցութեան ծագումն ու զարգացումն, ամենայն իրաւամբ կարող է ասել, որ ոչ միայն մեր կենդանական կեանքը, այլ և գիտակցութիւնը հետևանք է արեգակնային էներգիայի (եռանդի): Մարդուս հոգեկան կազմակերպութեան բոլոր մասերի վրայ շրջապատող բնութեան ազդեցութիւնը վաղուց արդէն պարզաբանել են մարդկային մտքի ծնունդը: հաւատալիքները, գիցաբանութիւնն ու բանաստեղծութիւն ուսումնասիրողները: Անապատի բնակիչներն կողմից աստղեր աստուածացները, երկնային մեծ շուսատուներին, կրակին և ծովերին և այլ ֆիզիքական տարերքին երկրպագելը հետևանք է երկու գործոնների փոխադարձ ազդեցութեան՝ — մի կողմից շրջապատող միջավայրի և միւս կողմից մարդկային ոգու ստեղծագործական ոյժերի:

Բայց բնութեան կազմութեան հոգու մէջ արտացոլանալու ամենաբնորոշ ապացոյցն է նախնական բոլոր կրօններին յատուկ երկ — երկու կարգ աստուածների գոյութիւնն ընդունելը — բարւոյ և չարի սկզբունքը: Այդ երկուութեան մէջն են տեսնում արդարացի կերպով բարոյական սկզբունքը կրօնի մէջ, այն ինչ դժուար չէ համոզուել, որ այդ դուռն լիզմն էլ իւր կողմից արտայայտում է բնութեան երկու տեսակ ազդեցութիւնը մարդուս կեանքի վրայ: Ինքը բնութիւնը իւրաքանչիւր քայլափոխում, նրա հետ մեր իւրաքանչիւր շփման միջոցին հանդէս է գալիս երկու տեսակ դերով — երբեմն որպէս մեզ կերակրող, պաշտպանող և բարերար և երբեմն որպէս թշնամի, վտանգաւոր մի ոյժ: Այդ պատճառով էլ պատասխանական հակադրութիւնները շրջապատող աշխարհի ազդեցութեան դէմ, այսպէս կոչուած արտացոլացումները, իրենց կողմից էլ դարձել են երկու կերպ միմեք, որ աշխատում է օգտուել բնութեան մարդուս

ցանկալի և օգտակար ներգործութիւնից, իսկ միւսները պաշտպանողական արտացոլացումներ են, որոնց նպատակն է դիմադրել շրջապատող բնութեան վնասակար ազդեցութեանց:

Ահա այս է մարդու հակադրութեան ֆիզիոլոգիական ձևը բնութեան դէմ: Սորանից յետոյ միթէ զարմանալի է, որ մեր գոյութեան պայմանների հետ յարմարուելու այդ սկզբունքը՝ անգիտակցաբար դարձել է հիմք բնութեան բոլոր արտաքին ոյժերի գնահատութեան և միթէ բնական չէ, որ մենք ամբողջ բնութիւնը բաժանում ենք մեզ նպաստաւոր և թշնամի ոյժերի: Մարդու սկզբնական հաւատալիքները, որոնք ներկայացնում են խառնուրդ կրօնի, փիլիսոփայութեան, բանաստեղծութեան և բարոյախօսութեան, լրիւ արտացոլացնում են մարդու աշխարհայեացքի այդ երկուութիւնը. — բնութեան ազդեցութիւնները մարդու գիտակցութեան մէջ առաջացնում են երկու սկզբունքների աստուածացումն՝ — բարւոյ և չարի: Գիտակցութիւնն ու հոգեբանական կեանքը անխզելի կապերով կապուած են շօշափելի բնութեան հետ իրենց ամբողջ ընդհանուր կազմով: մեր գիտակցութեան իւրաքանչիւր տարրի մէջ երևան է գալիս այդ կապը և անձնականի ու վերացականի հիւստուած դրութիւնը: Մեր իւրաքանչիւր զգացումն, մտապատկերը, միտքը, վերջապէս հոգեկան իւրաքանչիւր երևոյթը (վերամշակութիւն է) ձևափոխումն և արտացոլացումն է այն արտաքին զուտ բնական գործոնի՝ — պատճառի, որն առաջ է բերել հոգեբանական որոշ երևոյթ:

Արդէն անդառնալի անցաւ այն ժամանակը, երբ կարծում էին, որ մենք գիտենք կամ ըմբռնում ենք մեզ շրջապատող առարկաների կամ երևոյթների բնութիւնը:

Պարզ բան է, որ մեր գիտութեան և գիտակցութեան իւրաքանչիւր մօմէնտը կախուած է մեր սեփական կազմակերպութիւնից և իւրաքանչիւր գիտութիւն մեր կազմակերպութեան հակադրութիւն է շրջապատող բնութեան դէմ: Ահա այս է այն տեսութեան միտքը, որը պնդում է,

թէ մեր բոլոր գիտութիւնները վերաբերական են, այսինքն արտայայտում են մեր վերաբերմունքը բնութեան և ընդհակառակն՝ — բնութեան վերաբերմունքը դէպի մեզ: Վերջի վերջոյ մարդու գիտութիւնն ու ամբողջ հոգեկան կեանքը, նրա գիտակցութիւնն ու գործողութիւններն արտայայտում են ներքին յարմարեցումներ շրջապատող արտաքին բնութեան հետ: Գիտակցութիւնը հանդէս է գալիս անխզելիօրէն կապուած՝ ինչպէս արտաքին միջավայրի, այնպէս էլ մարդու կազմակերպութեան՝ և վերջապէս մարդկային կեանքի հետ, այսինքն նրա բնութեան վրայ ունեցած ներգործութեան հետ:

Այ թէ ինչու մարդու հոգեկան աշխարհն ու նրա գիտակցութիւնը կարող են ուսումնասիրուել և հասկանալի դառնալ միայն այն նիւթական արմատների հետ անխզելի կապուած, որոնցից նա, այդ գիտակցութիւնը աճում է, և այն երևոյթներով միասին, որոնց մէջ նա երևան է գալիս: Հոգեբանութիւնը, որպէս կղզիացած գիտութիւն՝ զուտ գիտակցութեան մասին, (գոյութիւն չունի) ոտքի տակին հող չունի: Այդպիսի կղզիացած գիտակցութիւնը մեզ կարող է տալ մեր հոգեկան կեանքի միմիայն բաժան ընկերներ՝ առանց սկզբի և վերջաւորութեան, Դոքա միայն Փրագններից խլուած բաւեր կլինեն: Անհատական գիտակցութեան վերլուծութիւնը իւր իսկական նշանակութիւնը, կենսունակութիւնն ու ամբողջականութիւնը ստանում է միայն այն նիւթական պայմանների հետ կապուած ժամանակ, որոնք գիտակցութեան նախորդ են, նրա ուղեկից (կարապետ) և հետևող:

Սակայն սրանով չի նսեմանում անհատական գիտակցութեան երևոյթների նշանակութիւնը, ինչպէս որ այդ կարող է թուալ առաջին հայեացքից: Գիտակցութիւնը իւր ամբողջական և մասնակի արտայայտութեան մէջ մնում է հոգեբանութեան ուսումնասիրութեան միակ առարկան, որի անփոփոխ նպատակն է ուսումնասիրել գիտակցութեան երևոյթների ձևերը, յատկութիւններն ու փոխադարձ յարաբերութիւնը: Հոգեբանութեան նպատակն ու խնդիրն

այդ ձևով որոշելում միանում է հին և նոր հոգեբանութիւնը: Եւ այժմս, ինչպէս և բոլոր ժամանակներում, առանց գիտակցութեան տարերքի չկայ ոչ հոգեբանական գիտօղութիւն և ոչ հոգեբանութիւն: Բայց գիտակցութեան ուսումնասիրելի երևոյթների ամբողջ ծաւալի և նրանց գիտօղի յարաբերութեան և հետախուզութեան եղանակի մէջ ահագին տարբերութիւն կայ հին գալրօցի փորձնական հոգեբանների և բնական—գիտական հոգեբանութեան նոր ուղղութեան մէջ: Հին գալրօցն հոգեբանական երևոյթների իւր հետազօտութեանց շրջանը սահմանափակում էր ինքնաքննութեամբ և ինքնագիտօղութեամբ: Իհարկ է այդ ինքնաքննութիւնը որոշ չափով բովանդակում էր իւր մէջ ամբողջ մարդկութեան խմբակցական ինքնագիտօղութիւնները, բայց այդ միմիայն կողմնակի կերպով: Հոգեբանութեան ժամանակակից ուղղութիւնը բնորոշում է գիտակցութեան երևոյթների աւելի անկողմնակալ ուսումնասիրութեամբ՝ ինչպէս որ արտայայտում է կենդանիների, հիւանդ մարդկանց և մասսայի կեանքի մէջ, մի խօսքով գիտօղութեանց բուն շրջանը անհամեմատ ընդարձակ է նախկինից և նրա զննութեան նիւթը գիտօղի անհատական գիտակցութեան շրջանակից շատ և շատ ընդարձակ է:

Հոգեբանական երևոյթների ուսումնասիրութեան եղանակի (մէթօդի) զարգացման և աստիճանական աճման պատմութիւնը ներկայացնում է սուբէկտիւ եղանակի աստիճանական փոքրացման պատկերը և գիտական աւարկայական ձևերի աճումն հոգեբանութեան մէջ, որով անշեղ մօտենում են հոգեբանական ձևերը բնագիտական աւարկաների մէթօդին:

Մարդու՝ իւր հոգեկան աշխարհի հետ ծանօթանալու սկզբնական աստիճանին՝ հետախուզողը իւր տրամադրութեան ներքոյ ունէր մի միայն ինքնազննութիւնը կամ այսպէս կոչուած ներքին գիտօղութիւնը, որը խիստ կերպով տարբերում է արտաքին այն գիտօղութիւնից, որը զգայարանների օժանդակութեամբ մարդուս տալիս է տեղեկութիւններ և գիտօղութիւններ շրջապատող բնութեան

մասին: Մարդս իւր հոգեկան աշխարհն իւր մէջ դտնում է անմիջապէս՝ ըստ երևոյթին այդ բանում՝ շատ քիչ կարիք ունենալով միջավայրի ազդեցութեան և իւր մարմնի՝ այսինքն զգայարանների, և այդ բանն ըստ երևոյթին մեծ առաւելութիւն պէտք է տար ներքին իւրացման կամ ինքնազննութեան: Այդ՝ առաջին հայացքից մեծ թուացող տարբերութիւնն իրականապէս այնքան էլ մեծ և կարեւոր չէ և ինքնազննութեան առաւելութիւններն իսկ՝ երբ մօտից ծանօթանում ենք, չափազանց կասկածելի են:

Եւ իրօք, ինչպէս ինքնազննութեան, այսինքն զուտ հոգեբանական վերլուծութեան, այնպէս էլ արտաքին բնութիւնը գիտելու ժամանակ մենք գործ ունինք մի և նոյն նիւթի հետ,—մեր զգացողութիւնների, մտաօրատկերների և այլ հոգեկան դրութիւնների հետ: Դիտօղութեան և ինքնազննութեան տարբերութիւնը կայանում է գլխաւորապէս հետևեալում.—ինքնազննութեան ժամանակ մենք արուեստականապէս մի առ ժամանակ հրաժարում ենք արտաքին աշխարհից, կարծես ժամանակաւորապէս մոռանում ենք անցեալը և կանգ ենք առնում մեր զգացողութիւնների վրայ, որոնց կզգիացնում ենք արտաքին բնութիւնից, որի հետ նրանք այնուամենայնիւ անխզելի կապերով են կապուած:

Իսկ արտաքին բնութիւնը գիտելիս մենք միշտ մեր մտաւոր աչքի առաջ ունինք երկու մոմէնտներն էլ—թէ մեր զգացողութիւններն և թէ արտաքին բնութիւնը: Բնութիւն գիտելն ու ուսումնասիրելը այդ պատճառով ամենից առաջ երկու՝ ներքին և արտաքին աշխարհների համեմատութիւն է, համադրութիւն ու կապը, մինչդեռ ինքնազննութիւնը զուտ հոգեբանական վերլուծութիւն է, փակուած ներքին գիտակցութեան սահմաններում և նա, ով որ քննում է հոգեբանական դրութիւնները որպէս իրենց մէջ փակուած մի բան, իւր տրամադրութեան ներքոյ չունի բնութիւնն ուսումնասիրելու գլխաւոր գործիքը— համեմատութիւնը:

Ճիշտ է, մտաւոր կեանքի սկզբնական քայլերին իսկ՝

մարդկութիւնը ցոյց է տալիս ձգտումն հոգեբանական ինքնազննութիւնը գիտողութիւն և համեմատութիւն դարձնելու: Որպէս առաջին քայլ այս ուղղութեամբ ծառայում է գիտակցութեան և նրա արտաքին հակադրութեան՝ այսինքն գիտակցութեան և խօսքի մէջ կապ հաստատելը: Խօսքը արտաքինն իրականացնելու և մարդուս գիտակցութիւնն առարկայական դարձնելու առաջին աստիճանն է: Խօսքը հանդիսանում է որպէս զգացողութեան չափ և համեմատական արժէք (էկվիվալէնտ): Խօսքը միևնոյն ժամանակ գլխաւոր գործիք է, որի օգնութեամբ ստեղծւում է և մշակւում ոչ թէ անհատական, այլ խմբակցական գիտակցութիւն, իսկ անձնական գիտակցութեան հոգեբանական վերլուծութիւնն ընդարձակւում է և դառնում խօսքի ձևով առարկայականացած հանրամարդկային գիտակցութիւն: Ծնորհիւ այդ բանի է, որ հնարաւորութիւն է ստեղծուել գիտակցութեան զանազան աստիճանների հոգեբանական երևոյթներն համեմատելու, այսինքն գիտակցութեան ուսումնասիրութիւնը բնութեան ուսումնասիրութեան նման որոշ չափով յարաբերական և համեմատական դարձնելու:

Սակայն անվիճելի է, որ հոգեբանական երևոյթներն ուսումնասիրելու գործում զգալի յառաջադիմութիւն է տեղի ունեցել շնորհիւ ժամանակակից հոգեբանութեան փորձերի, որոնցով աշխատում են կապ և յարաբերութիւն հաստատել մի կողմից գիտակցութեան և միւս կողմից արտաքին բնութեան կամ գրգռիչների մէջ, որոնք մեր տպաւորութիւնների աղբիւրն են կազմում: Այստեղ մտնում է ամբողջ հոգեբանութիւնն ու բնագիտութիւնը (Психология — физика), որի հիմնադիրներն են Վերէրն ու Յեխնէրը: Այս քայլի շնորհիւ հոգեբանութիւն ուսումնասիրելու եղանակը զգալի կերպով մօտեցաւ բնագիտութեան և համեմատաբար աւելի համեմատական և առարկայական դարձաւ: Այդ ուղղութեամբ հետևեալ քայլն եղաւ գիտակցութեան և արտաքին հակադրութիւնների, կամ գիտակցութեան զանազան շարժումներով արած արտայայտութեանց մէջ եղած

կապի ուսումնասիրութիւնը, և վերջապէս փորձերի հնարաւորութիւնը, փորձերի հոգեբանութեան մէջ, որ բնական հետևանք եղաւ այն նիւթի առարկայականութեան, որոնցից օգտւում է ժամանակակից հոգեբանութիւնը: Մեր աչքի առաջ հոգեոյ ուսումնասիրութիւնը աւելի և աւելի է մօտենում բնագիտութեան և իւրաքանչիւր քայլը հոգեբանութեան մէջ նշան է բնութեան երկու թագաւորութիւնների՝ ֆիզիքական և հոգեկան աշխարհների ուսումնասիրութեան աւելի և աւելի մերձեցման և ի մի ձուլուելու ձգտման:

Մինչդեռ հին հոգեբանութիւնը քննում էր գիտակցութեան երևոյթները՝ որպէս անշարժ քարացած և աւարտած ձևեր, ժամանակակից հոգեբանութիւնը ձգտում է թափանցել գիտակցութեան երևոյթների սկզբնաւորութեան մէջ և նրա առանձին տարրերի ձևերի զարգացման օրէնքների մէջ՝ այն է զգացողութեան, երևակայութեան և այլն: ժամանակակից հոգեբանութեան մէջ արդէն մուտք է գործել լեթէ ոչ բուն սկզբունքը, գոնէ աստիճանական էվոլուցիայի (զարգացման) ոգին. այն, ինչ որ կազմում է 19-րդ դարու ամենաարժէքաւոր գիւտը բիօլոգիայի— կենդանական ոյթի ուսումնասիրութեան շրջանում և ամենաուժեղ լծակ է, որը շարժում է կեանքի մասին եղած ամբողջ գիտութիւնը: Այդ լծակը խոստանում է ապագայում նոյն ծառայութիւններն անել հոգեոյ մասին եղած գիտութեան շրջանում, ինչպէս որ այդ արել է ընդհանրապէս բիօլոգիայում:

Հաղիւ թէ հարկաւոր լինի ապացուցանել, որ հոգեբանութիւն ուսումնասիրելու մէթոդը իւր հիմունքներով կարող է միայն այն լինել, որն այդքան առատ պտուղներ է տուել բնագիտութեան մէջ: Բայց լեթէ դեռ հարկաւոր է այդ բանում որ և է մէկին համողել, այդ դէպքում մէթոդի նոյնութեան ամենածանրակշիւ ապացոյցն է այն փաստը, որ հոգեբանութեան և բնագիտութեան մէջ գիտակցութեան երևոյթների և բնութեան մէջ բոլորովին գոյութիւն չունի այն անանցանելի վիճը, որի մասին յաճախ խօսում



232454

են: Ընդհակառակն՝ մեր գիտակցութեան ներքին աշխարհը
և արտաքին բնութիւնը միացած են այսպէս կոչուած
անգիտակցական հոգեկան կեանքի կամուրջով: Ինչպէս
յայտնի է, մարդու հոգեկան կեանքը մի միայն մեր
գիտակցութեան երևոյթներով չի սահմանափակուում:
Մարդու հոգեկան աշխատանքի զգալի մասն անցնում է
առանց գիտակցութեան հասնելու՝ երբեմն երեւն
գալով և երբեմն արտայայտուելով գործողութեան մէջ,
կամ ցոլացնելով իւր գաղտնի ազդեցութիւնը հոգեկան
գիտակցական գործողութիւնների վրայ, երբեմն էլ սրու
պայմաններում ժամանակաւորապէս մտնելով գիտակցու
թեան մէջ:

Երբ մեր իւրացրած գիտութիւնը ժամանակաւորապէս
մոռացում է, այսինքն դուրս գալիս մեր գիտակցութիւ
նից, որպէս զի առաջին յարմար առթին յայտնուի գի
տակցութեան մէջ, մենք ասում ենք, որ այդ գիտութիւնը
ամբողջ ժամանակ պահւում է մեր գիտակցութեան մէջ,
մինչև որ կը յիշենք. այդ նշանակում է որ մտապատկեր
ները՝ չը գտնուելով մեր գիտակցութեան մէջ, այնուամե
նայնիւ գոյութիւն ունին հոգու մէջ, բայց մեզ անհասկանալի
ձևով, այսինքն նրանք գտնուում են մեր հոգու անգիտակց
ըջանակում:

Երբ մենք մտածուելի մէջ խորասուզուած անցնում
ենք առարկայի կամ անձնաւորութեան մօտով, չենք տեսնում
և չենք լսում, այսինքն չենք գիտակցում. բայց այդ հան
գամանքը այնուամենայնիւ մեզ չի խանգարում ապագայում
յիշելու մեր չը նկատած առարկան կամ անձնաւորութիւնը:
Դա ապացոյց է, որ այդ առարկաների կամ անձերի մտա
պատկերները թէև չը հասան մեր գիտակցութեան, այնու
ամենայնիւ մուտք գործեցին մեր հոգեկան աշխարհը և
մի ինչ որ տեղ՝ գիտակցութիւնից դուրս, կամ աւելի
ուղիղն ասած՝ անհասկանալի ձևով գոյութիւն ունէին մեր
հոգու մէջ: Այս տեսակ բազմաթիւ փաստերը մեզ համո
զում են, որ գիտակցութիւնը այն միակ ձևը չէ, որում
գտնուում են հոգեբանական երևոյթները և որ վերջիններս

կարող են գոյութիւն ունենալ անգիտակցական ձևով: Ուրիշ
խօսքով՝ հոգեկան աշխարհը չի սահմանուում միայն գի
տակցութեամբ, այլ բովանդակում է իւր մէջ երկու մաս՝
գիտակցական և անգիտակցական:

Այդ երևոյթների մանրակրկիտ ուսումնասիրութիւնը
ցոյց տուաւ, որ գոյութիւն ունին գիտակցութեան պայ
ծառութեան ամբողջութեան տարբեր աստիճաններ և նոյն
չափով էլ գոյութիւն ունին անգիտակցական դրութեան
տարբեր աստիճաններ, — այսինքն գոյութիւն ունի հազիւ
նկատելի փոփոխութիւնների մի երկար շարք՝ միանգամայն
պարզ գիտակցութիւնից մինչև անգիտակց դրութեան
խորքերը:

Ինչպէս հոգեբաններն են ասում, իւրաքանչիւր պատ
կեր կամ հասկացողութիւն, որը գտնուում է մեր հոգեկան
աշխարհում, կարող է լինել մեր գիտակցութեան ամենա
լուսաւոր, պայծառ կէտում. այսպէս ասած մեր գիտակ
ցութեան լուսանկարչական գործիքի հնոցում (կեդրոնում),
կամ գիտակցութեան ծայրին, կամ մուտքի մօտ և կամ
վերջապէս այդ մուտքից հեռու՝ ներքեւում, ինչ որ անգի
տակցութեան սահմանում՝ կատարեալ մոռացութեան և
հոգեկան մահուան սահմանում:

Հոգեկան անգիտակցական երևոյթները գիտողութիւն
ները գտնում են նրանց մէջ մի կարևոր առանձնայատ
կութիւն. իսկապէս այն, որ հոգեկան անգիտակցական
երևոյթները (արտայայտութիւնները) աւելի ակնյայտնի,
աւելի շօշափելի և անմիջական կապով են կապուած ֆի
զիքական կեանքի, մեր ամբողջ կազմուածքի և ներարդային
համակարգութեան գործունէութեան հետ: Այդ կախումը
երկու տեսակ է՝ — մի կողմից մեր կազմուածքի ամբողջ
ներքին կեանքը շատ աւելի է արտացոլանում անմիջապէս
մեր հոգեկան անգիտակցական՝ քան գիտակցական կեան
քում: Մեր իւրաքանչիւր սննդառութեան փոփոխութիւնը,
արեան շրջանառութեան, մեր աշխատանքի մէջ և այն
ուղղակի հետք է թողնում մեր հոգեկան անգիտակցական
կեանքում, որն այդպիսով շատ աւելի սերտ կախումն ունի

մեր ֆիզիքական կեանքից, քան գիտակցական մասը: Միւս կողմից այդ անգիտակցական մասն էլ իւր կողմից անմիջապէս և ուժեղ կերպով է արտացոլանում մեր կազմուածքի ամբողջ ֆիզիքական կեանքում. հոգեկան անգիտակցական մասը շատ աւելի է ազդում, քան գիտակցութիւնը մեր մարմնի շարժումները, սննդառութեան, արեան շրջանառութեան և մարմնի բուսական բոլոր գործողութիւնների վրայ: Հոգեկան անգիտակցական մասի (աւտոմատ) ակամայ կախումն նեարդային համակարգութեան դրութիւնից նրա արեան շրջանառութիւնից և սննդառութիւնից շատ աւելի խիստ է երևան գալիս:

Դրանով հոգեբանութեան շրջանը աւելի է մօտենում բնութեան և հոգեբանութիւնը՝ որպէս գիտութիւն, կապուում է բնագիտութեան հետ:

Ի հարկէ, այդ կապով, որը գոյութիւն ունի գիտակցական և անգիտակցական աշխարհների միջև, դեռ բոլորովին չի լուծւում գիտակցութեան և անգիտակցութեան երևոյթների ներքին յարաբերութեան պրոբլէմը: Դեռ ևս անվերժանելի գաղտնիք է մնում նոյն իսկ անգիտակցութեան ծագումը և նրա նեարդային համակարգութեան նիւթական գործողութեանց հետ ունեցած կապը: Բայց և այնպէս հոգեկան անգիտակցական մասի փաստերում մենք գտնում ենք մեր հայեացքն ընդարձակելու հենակէտը մարդուս հոգեկան գործողութիւնների բովանդակութեան մասին: Մենք արգէն իրաւունք չունինք մեր հոգեկան աշխարհը շփոթելու գիտակցութեան հետ, այսինքն այն շրջանի հետ, որը հին ժամանակներից սկսած «հոգի» հասկացողութեան նոյնանիշ էր համարւում:

Հոգեկան աշխարհն իւր ծաւալով աւելի ընդարձակ է, քան գիտակցութեան շրջանը և իւր արժանատիքով գետեղուած է մարդուս կազմուածքի բոլոր գործողութեանց մէջ՝ մանաւանդ նրա նեարդային ուղեղային սխտեմի կեանքի և գործունէութեան մէջ. վերոյիշեալ նկատողութիւնները մեզ հասցնում են այն եզրակացութեան, որ միակ ուղիղ հանապարհը, ինչպէս ուսումնասիրելու, այնպէս էլ հոգւոյ

մասին ձեռք բերած գիտութիւնն արտայայտելու համար, գտնւում է բնագիտութեան մէթոդի և այն ընդհանուր օրէնքների մէջ, որ ունինք մենք մեր ձեռքի տակ ֆիզիքական բնութեան մասին:

Մարդուս ներքին աշխարհն և գիտակցութեան արտայայտութիւններն ուսումնասիրելիս՝ ոչ թէ միայն պէտք է ղեկավարուել որպէս ուղեցոյց կողմնացոյցով, բնութեան մասին եղած գիտութեամբ, այլ հոգեկան խաւար աշխարհում լողալիս անհրաժեշտ է, որքան կարելի է չը հեռանալ ավերից, այսինքն ոչ մի րօպէ աչքից չը կորցնել ֆիզիքական բնութեան և մեր կազմուածքի փաստերն ու օրէնքները:

Չուտ ինքնազննութեան և հոգեբանական վերլուծութեան շրջանում կատարած զբօսանքները անվտանգ են. այսինքն ապահովագրուած են սխալանքներից միայն այն սահմաններում, քանի որ մենք պարանով կապուած ենք երկրից, այսինքն գիտում ենք բնութիւնը:

Որոշելով մեր յենման՝ և այն տեսակէտը որ հոգեկան և ֆիզիքական երևոյթներն անխզելի կապով կապուած են իրար հետ, մենք մեր առաջ դնում ենք հետեւեալ խնդրը. — Որո՞նք են հոգեբանական և բնական երևոյթների ընդհանուր յատկութիւնները և որո՞նք են գիտութեան թագաւորութեան այդ երկու կէտերի տարբերութիւնները:



ԳԼՈՒԽ II.

Յասկոսթիւններ, ուոնք թէ գիտակցութեան և թէ բնութեան համար միեւնոյն են:

Հոգեկան ու ֆիզիքական աշխարհները ոչ թէ ընդհանուր շատ կէտեր ունին և փոխադարձ կապերով կապուած են իրար հետ, այլև ունին ընդհանուր շատ տարրեր և յատկութիւններ:

Ինչպէս յայտնի է, բնութեան մէջ ոչ մի նիւթական երևոյթ չի կարող հասկանալի դառնալ առանց տարածութիւն երևակայելու: Այսպիսով իւրաքանչիւր առարկայի ձևը ոչ այլ ինչ է, եթէ ոչ տարածութեան որոշ ձև. շարժումն անժխտելի կապուած է տարածութեան հետ և ինչպէս յայտնի է, ժամանակակից բնագիտութիւնը ձգտում է բոլոր ֆիզիքական, քիմիական, և բիօլոգիական (կենսագիտական) պրօցէսները (գործողութիւնները) բացատրել շարժման զանազան ձևերով: Հոշակաւոր Լապլասը երազում էր գտնել մի ընդհանուր բանաձև (ֆօրմուլայ), որով կարելի լինէր արտայայտել բոլոր այն գործողութիւնները (պրօցէսները), որոնք կատարւում են բնութեան մէջ: Այդ պատճառով առաջ է գալիս շատ հետաքրքիր մի հարց. տարածութեան մասին հասկացողութիւնը ինչչափով կարող է գործածուել հոգեբանական պրօցէսներէ շրջանում: Ինքնադիտողութիւնը կամ մեր մէջ կատարուող հոգեկան երևոյթների անմիջական վերլուծութիւնը այդ հարցին բացասական պատասխան է տալիս: Քննելով մեր սեփական մտքերը, մտապատկերները և այլ հոգեկան տարրեր, մենք չենք կարող երևայկայել այդ մտապատկերները որպէս տարածական ձև. ունեցող: Ընդհանրապէս ձևով էլ մենք չենք կարող մտածել նրանց մասին, որպէս տարածութեամբ իրարից բաժան երևոյթների մասին: Մեր գլխում ինչքան էլ խոնուած լինին մտքերն ու մտապատկերները, մենք չենք կարող երևակայել մեզ այդ բոլորը իբրև կոյտ: Որպէս զի կարողանանք երևակայել նրանց բաժան բաժան, մենք ստիպուած պէտք է երևակայենք ժամանակը, դիմենք ժամանակի օգնութեան: Այսպէս ահա, ինքնադիտողութիւնը հոգեկան աշխարհից վանում է տարածութիւնը: Բայց այդ վճիռն անմիջապէս փոխւում է, հէնց որ անցնում ենք ինքնադիտողութիւնից հետևեալ ձևի՝ ուրիշ մարդկանց հոգեբանական երևոյթների յատկութիւնների վերլուծութեան:

Իրապէս քանի որ մարդս հոգեկան աշխարհի մասին իւր ծանօթութիւնը սահմանափակում է ինքնագի-

տողութեան սահմաններով, նա ստանում է շատ թերի՝ սաղմնային ծանօթութիւն հոգեկան կեանքի մասին: Բայց հէնց որ դիտողը մտքով փոխադրւում է իւր մերձաւորի ներքին աշխարհը, հիմք ունենալով այն՝ որի վրայ հիմնուած է ամբողջ հոգեբանութիւնը, որ այն բոլորն, ինչ որ կատարւում է իրեն սեփական հոգում, կատարւում է նաև ուրիշ մարդոց հոգւոյ մէջ. միայն այդ լուռ և բոլորից ընդունուած շափով, որ բոլոր մարդկանց հոգեկան կեանքը նոյն է, հոգին կարծես ազատւում է անհատական կեանքի նեղ շրջանակներից, փոխադրւում է ամբողջ մարդկութեան և դառնում, թէև որոշ չափով, ինչ որ առարկայական: Անհատական ինքնադիտողութիւնը ընդարձակւում է և դառնում խմբակցական ինքնադիտողութիւն: Այդ վերջինը մեր հոգեկան կեանքում բաց է անում այնպիսի յատկութիւններ և կողմեր, որոնք անհատական ինքնադիտողութիւնից խուսափում են: Այդ յատկութիւնների թուին, որոնք յիշեալ ճանապարհով երևան են գալիս մեր հոգեկան աշխարհում, թէև կողմնակի, բայց պարզւում է տարածութեան տարրի անհրաժեշտութիւնը հոգեկան աշխարհում:

Եթէ սեփական գիտակցութիւնը գիտակցող անհատը տարածութեան կարիք չունի, դրա փոխարէն մեզ շրջապատող մարդկանց գիտակցութիւնը անխզելի կապուած է այդ մարդկանց մարմնապէս երևակայելու հետ, այսինքն տարածութեան հետ: Այլ մարդկանց գիտակցութիւնը զետեղուած է այդ մարդկանց մարմնի մէջ և եթէ անգամ մենք խօսում ենք այդ մերձաւորների մտքերի և զգացմունքների մասին կարծես ուշադրութեան չառնելով՝ մուսացութեան տալով ֆիզիքական աստառը, մենք ոչ մի բոպէ չենք մոռանում այդ զգացմունքների և մտքերի անխզելի կապը նրանց տէրերի ամբողջ կազմուածքի հետ: Ինչպէս առօրեայ, այնպէս էլ գրական և գիտնական իօսակցութեան ժամանակ միշտ պատահում են այնպիսի պարբերութիւններ. «մտքի մեծութիւնը», «գաղափարների տարածումը», և այլն, որոնք ցոյց են տալիս, թէ ինչքան

խորն է բուն դրած մեր մէջ հոգեկան աշխարհի տարածականութեան մասին անգիտակցական հաւատը:

Իսկապէս կողմնակի դիտողութեան առնուած միտքը, այսինքն ոչ իմ անձնական միտքս, այլ ուրիշների, միշտ կարող է տարածութեամբ դիտողութեան առնուել ճիշտ այնպէս, ինչպէս բնութեան իւրաքանչիւր երևոյթը:

Այն միտքը, որ զբաղեցնում է միլիոնաւոր մարդկանց գլուխները, ամենայն իրաւամբ կարելի է տարածութեամբ աւելի մեծ համարել, քան մի մարդու գլխում բուն դրած միտքը: Բայց միևնոյն ժամանակ չըպէտք է մոռանալ, որ անհատականապէս, այսինքն իւրաքանչիւր մարդու մէջ առանձին վերցրած՝ հոգեկան աշխարհը չի կարող գետնուել տարածութեան մէջ, այլ տեղաւորուում է միմիայն ժամանակի մէջ:

Յամենայն դէպս պէտք է նկատել, որ այլ մարդկանց հոգեկան կեանքն անհասկանալի է առանց տարածութեան և երկրորդ՝ որ մարդուս խմբակցական հասկացողութիւնը՝ որպէս խմբակցական ինքնագիտողութիւն, նիւթական աշխարհի նման ընդունում է տարածական դասաւորութիւն:

Այնուհետև նիւթական աշխարհի երևոյթների մասին մեզ յայտնի է, որ նրանք կատարուում են ժամանակի և տարածութեան մէջ: Իսկ ինչ վերաբերում է հոգեկան երևոյթների, ինչպէս արդէն ասել ենք, մեր անձնական անհատական դրութեանց վերլուծութիւնը պարզում է հոգեկան կեանքի հետեւողականութիւնը ժամանակագրական կարգով: Այդ հոսանքը մեր գիտակցութեանը ներկայանում է որպէս իրար անընդհատ յաջորդող և փոխարինող մտքեր և տրամագրութիւններ: Այստեղ հարց է առաջ է գալիս, արդեօք իրենք հոգեկան տարրերը, մտապատկերներն ու զգացմունքներն ունին ժամանակական տեղութիւն, թե նրանք մեր գիտակցութեան մէջ պահպանուում են վայրկենաբար: Ինքնագիտողութիւնը դրականապէս լուծում է այդ խնդիրն այն մտքով, որ իւրաքանչիւր առանձին վերցրած հոգեբանական երևոյթ որոշ ժամանակ գոյութիւն ունի գիտակցութեան մէջ և որ

այդ ժամանակի մեծութեամբ փոփոխուում է ուշադրութեան՝ այսինքն հոգեկան էներգիայի (աշխուժի) ներքին ոյժը: Հոգեբանութեան մէջ մինչև վերջին ժամանակներս գոյութիւն ունէր այն վարդապետութիւնը, որը որևէ հոգեբանական երևոյթի կազմակերպութեան համար մերժում էր ժամանակի կարևորութիւն: Պնդում էին, իբրև թէ ինքը՝ գիտակցութիւնը և այն՝ ինչ որ կատարուում է նրա մէջ, ծնունդ է առնում վայրկենաբար և որ մեր հոգու մէջ արտաքին գրգռիչների պատճառով ստացուող մտապատկերները իրենց ձևակերպութեան համար ժամանակի կարիք չունին: Հոգւոյ այդ վայրկենականութեան մէջ նկատուում էին իբր հոգւոյ նիւթական պայմաններից անկախ լինելու ապացոյցներից մինը, այսինքն մարդուս կազմուածքից և մասնաւորապէս ուղեղից անկախ լինելու ապացոյցը: Հոգին, ասում էին հոգեբանները, կարիք ունի նիւթական աստառի, այսինքն ուղեղի՝ որպէս մի գործիքի արտաքին հում նիւթերից ապաւորութիւններ ստանալու և հոգւոյ հրամանները կատարելու համար:

Դեռ 1898 թուականին հռչակաւոր բնագէտ Միւլլէրը ասում էր.— Մնչպէս որ չի կարելի հաշուել ծովափնեայ աւազի հատիկները, այնպէս էլ երբէք չի յաջողուել չափել կամ հաշուել հոգեբանական պատկերների ծագման արագութիւնը կամ ժամանակը:

Սակայն մի քանի տարուց յետոյ Միւլլէրի աշակերտ Հելմհոլցը չափեց այդ արագութիւնը և գտաւ շատ աննշան: Նա ցոյց տուեց, որ արտաքին որևէ առարկան նկատելու համար, այսինքն այդ առարկայի մտապատկերը կազմելու, մարդուցս պահանջուում է մոտաւորապէս $\frac{1}{10}$ վայրկեան:

Ահա այդ գիւտով վճռական հարուած տրուեց հոգեկան աշխարհի լիակատար ինքնավարութեան և պարզուեց նրա ունեցած միջին կապը ֆիզիքական աշխարհի հետ: Եւ իբր, չէ որ, եթէ հոգեկան պատկերների ծագման համար ժամանակ է հարկաւոր, ապա ուրեմն պարզ է, որ այստեղ կատարուում է նիւթական գործողութիւն (պրո-

ցէս)։ Մին նոյն ժամանակ հոգեկան մտապատկերները կազմակերպութեան համար ժամանակի անհրաժեշտութիւնը աւելի մօտեցրեց հոգեկան և նիւթական (ֆիզիքական) աշխարհները, վերացնելով ամենախորունկ տարբերութիւնները մինը, որը գտնուում էին այդ երկու աշխարհների մէջ։ Այսուհետև մենք գիտենք, որ ամբողջ հոգեկան կեանքը՝ նիւթականի նման անձնականապէս տարածուում է ժամանակի ընթացքում և առարկայականապէս էլ ստեղծուում և զարգանում է ժամանակի ընթացքում։

Այժմ տեսնենք, թէ արդեօք մարդուս հոգեկան կեանքում կ'այնպիսի ֆակտոր (գործոն), որը համապատասխանի նիւթական աշխարհի շարժմանը։ Ճիշտն ասած, անձնական հոգեկան կեանքում տարածութիւն չընդունելը անխուսափելիօրէն տանում է մեզ հոգեկան կեանքում նաև շարժումն մերժելուն, որովհետև ուր որ չկայ տարածութիւն, չի կարող լինել և շարժումն։ Այդ պատճառով մեր հասկացողութեամբ չի կարող նոյն իսկ խօսք լինել զգացողութիւնների, մտապատկերների և մտքերի շարժման մասին այն մտքով, ինչպէս որ այդ հասկացում է նիւթական աշխարհում։ Իրա փոխարէն, երբ հոգեկան աշխարհը չենք քննում սուբեկտիւ (անձնական) կերպով մեր անձնական գիտակցութեան մէջ, այլ քննում ենք մարդկութեան խմբակցական գիտակցութեան մէջ, արդէն հնարաւոր է դարձնում շարժման հասկացողութիւնը, որովհետև այդ սփերայում, ինչպէս մենք տեսանք, կարելի է հոգեկան երևոյթները դասաւորել տարածութեան մէջ։ Իսկ երբ մենք ընդունում ենք, որ միտքը տարածուում է, նշանակում է, որ նա շարժուում է։

Սակայն դառնալով կրկին (սուբեկտիւ) անձնական գիտակցութեան, մենք հիմք ունենք ընդունելու, որ այստեղ էլ հնարաւորութիւն կայ շարժման՝ միայն թէ որոշ մտքով։ Կրփորձենք պարզել, թէ ինչ ենք հասկանում ռաբժումն ասելով։ Մենք այդ բառի մեխանիքական մտքին այնքան ենք ընտելացել, այսինքն այն բանի, որ նա նշանակում է տարածութեան մէջ դրութեան փոփոխութիւն։

որ մեզ համար նոյն իսկ դժուար է այդ տերմինը հասկանալ այլապէս։ Բայց կարելի է պայմանաւորուել շարժում բառի տակ հասկանալու ամեն տեսակ փոփոխութիւն երևոյթների կամ՝ առարկաների փոխադարձ յարբերութեան մէջ՝ բոլորովին նկատի չառնելով տարածութիւնը։ Նոյն տեսակէտից կարելի է խօսել նաև հոգեկան շարժման մասին այն մտքով, որ գիտակցութեան մէջ հոգեկան որոշ տարրերին փոխարինում են միւսները և որ իւրաքանչիւր զգացողութիւն և պատկերացումն՝ կարող է տևել — այսինքն շարժուել տևողաբար։ Եթէ ինկատի առնենք այն, որ գիտակցութիւնը միշտ կապուած է փոփոխութիւնների հետ և որ փոփոխութիւնը հիմք է ամենայն տեսակ շարժման, ապա այդ դէպքում գիտակցութեան ամբողջ ընթացքը (հոսանքը) կարող է դիտելի դառնալ որպէս անընդհատ շարժումն։

Եթէ ինկատի ունենանք, որ հոգեկան երևոյթները դասաւորուում են ըստ ժամանակի և որ հոգեկան մի խումբ պատկերներ կարելի է շարայարել միմիայն որպէս շղթայ անցեալից, ներկայից և ապագայից, որի միջոցին ժամանակագրական դիժը փոխարինում է տարածութեան, այդ դէպքում մենք իրաւունք ունինք ընդունելու հոգեբանական պատկերների շարժումն ըստ ժամանակի։

Նորից հանդէս է գալիս նիւթական աշխարհի և գիտակցութեան մէջ նմանութիւն (նոյնութիւն), ժամանակը հանդիսանում է տարածութեան համանշան, իսկ հոգեկան շարժումը մեքենայականի համարժէք։

Հոգեկան շարժման վերաբերեալ գաղափարը հոգեբանութեան մէջ վաղուց արդէն օգտուում է քաղաքացիականութեամբ։ Գերմանական փիլիսոփա Հերբարտը հնարաւոր գտաւ հոգեկան աշխարհի վերաբերմամբ գործածելու նաև արագութեան մասին հասկացողութիւնը գիտակցութեան մէջ առանձին պատկերների շարժման ոյժի և արագութեան մասին։ Նա փորձում էր մտցնել նաև հասկացողութիւն մասսայի մասին, որից կազմուած է որոշ մտապատկերը և ընդունում էր, որ առանձին մտապատ-

կերները հոգեկան շարժման ժամանակ՝ այդ վերջիններն իրար վրայ ճնշում են գործ դնում:

Ըստ Հերբարտի զանազան մտապատկերների և հասկացողութիւնների փոխադարձ ազդեցութիւնը կատարում է մեխանիկայի օրէնքներով՝ այն է ոյժերի գումարմամբ: Իհարկէ գիտակցութեան և հոգեկան կեանքի վերաբերեալ օրէնքները մեխանիկայի ֆորմուլաներով բացատրելը պէտք է անյաջողութեամբ վերջանար՝ հէնց թէկուզ մի միայն նրա համար, որ մենք դեռ չափ չունինք հոգեկան ոյժերի և (հասկացողութիւնների) մտապատկերների մեծութիւնը չափելու, և այսպէս կոչուած հոգեկան շարժման ծաւալը որոշելու համար: Յամենայն դէպս գլխաւորն այն է, որ հնարաւոր է գիտակցութեան երևոյթները, շարժման պրոցէսի և բնութեան ֆիզիքական ոյժերի փոխադարձ ազդեցութեան նմանութիւնը գտնել:

Եթէ դեռ հնարաւորութիւն կայ կասկածելու, որ հոգեկան աշխարհում գոյութիւն ունի շարժման նման մի բան, այնուամենայնիւ չի կարող գոյութիւն ունենալ ամենափոքր կասկածն անգամ, որ հոգեկան աշխարհում գիտակցութիւնը իւրաքանչիւր քայլափոխում արտայայտում է լարուած դրութիւն, եռանդ ու աշխատանք:

Մեր ինքնագիտակցութեան ներքին ձայնը իւրաքանչիւր քայլափոխում ասում է մեզ, որ մեր ամբողջ հոգեկան կեանքը ասպարէզ է մի ինչոր աշխատանքի, մի ինչոր անհասկանալի եռանդի սպառման, հոգեկան զանազան երևոյթների տարրերի և ոյժերի մի փոխադարձ կռուի և գործակցութեան:

Միտքը, կամքն ու զգացմունքը, պատկերներ, յիշողութիւններ, ձգտումներ և կրքեր անընդհատ երբեմն կուտում են իրար հետ, երբեմն դուրս կոչում ու վերարտադրում իրար, երբեմն իրար վրայ ճնշումն գործ դնում, ներգործում, երբեմն զօրացնում և ամբապնդում են իրար, երբեմն էլ ընդհակառակն՝ իրար դուրս վանում:

Հոգեկան բաժան երևոյթների կռիւն անընդհատ շարունակում է գիտակցութեան մէջ իշխելու, «ես»-ի վրայ

տիրանալու և մեր կամքն ու ընթացքը կառավարելու համար:

Մենք պարզ գիտակցում ենք, որ մի որոշ միտք կամ զգացմունք մեր մէջ երբեմն ուժեղանում է, այսինքն ձեռք է բերում աւելի լարուած դրութիւն և ահագին ազդեցութիւն գործում մեր հոգեկան աշխարհի վրայ, երբեմն ընկնում և բոլորովին թուլանում, նսեմանում է: Մի խօսքով անձամբ մենք զգում և գիտակցում ենք մեր ներքին աշխարհը, ոյժերի ասպարէզը, որոնք՝ արտաքին բնութեան ոյժերի նման, երբեմն հակառակ են իրար և երբեմն գործակից:

Նոյն ձևով մենք հաւատում ենք, որ մարդուս գործողութիւնների մէջ արտայայտուած ոյժը, նրանց արագութիւնը և եռանդը՝ թէ մեր մէջ և թէ այլ մարդկանց մէջ՝ կախուած է մեր գիտակցութեան մէջ կատարուող հոգեբանական գործողութիւնների եռանդից և լարուած դրութիւնից: Մենք համոզուած ենք, որ մարդուս գործողութեանց ժամանակ խիստ համապատասխան է նրա հոգեկան և ֆիզիքական եռանդը:

Դիտելով մարդկանց փոխադարձ ազդեցութիւնը և ներգործութիւնը, որ ունենում են մինի մտքերը, զգացմունքներն ու կամքը միւսների հոգու վրայ, մենք նոյնպէս համոզուած ենք, որ այդ ազդեցութեան մէջ արտայայտուած է էներգիա հաղորդելու (եռանդ ներշնչելու) օրէնքը:

Ուրիշների վրայ ազդելու ոյժը մարդկանց մէջ տարբեր է. զգացմունքներից և մտքերից մի քանիսը աւելի են ազդում շրջապատող մարդկանց վրայ, քան միւսները: Մարդկանց կեանքն ու գործունէութիւնը ներկայացնում է հոգեկան եռանդի արտայայտութեան ամենատարբեր աստիճաններ՝ ինչպէս զուտ հոգեկան, այնպէս ֆիզիքական՝ արտաքին արտայայտութեան ժամանակ:

Ամբողջ քաղաքակրթութիւնը, տեխնիկան և գեղարուեստը ամբողջապէս վերցրած, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մարդուս հոգեկան ոյժերի աշխատանքի արտայայտութիւն:

Եւ որևէ հասարակութեան կամ ժողովրդի քաղա-

քակրթական աշխատանքի չափը պատմաբանի համար ծառայում է որպէս չափ հոգեկան էներգիայի, որով այդ ժողովուրդն օժտուած է եղել:

Վերջապէս լեզուն, մարդկութեան խմբակցական այդ խելքը, վաղուց արդէն նախազգուշացրել է գիտութիւնը, ստեղծելով որոշ արտայայտութիւններ և տերմիններ (գիտական արտայայտութիւններ), որոնք ցոյց են տալիս մարդու հոգւոյ մէջ աշխատանքի, ոյժի և եռանդի գոյութիւնը:

Հզոր, խորունկ և կարող մտք, զգացմունքներ յափըշտակող, բռնի երևակայութիւն, անյաղթելի կամք, անսպառելի հոգեկան եռանդ, մտքի բեղմնաւոր աշխատանք, ուժեղ և թոյլ անձնաւորութիւն, և այլ արտայայտութիւնները ցոյց են տալիս, թէ որքան խորն է մեր մէջ այն համոզւումը, որ մեր հոգեկան աշխարհը փիզիքականի նման, ոչ այլ ինչ է, եթէ ոչ հոգեկան առանձին եռանդի արտայայտութեան ասպարէզ:

Յայտօր չի յաջողուել գտնել հոգեկան էներգիան չափելու եղանակը, դեռ չի գտնուած վերջնիս միաւորը. այդ պակասը լրացնելու խնդրով է զբաղուած ներկայումս փորձնական հոգեբանութիւնը: Թէպէտ մենք դեռ հեռու ենք այդ նպատակից, սակայն նրան հասնելու յոյսը դեռ կորսուած չէ և կազմում է հոգեբաններին զբաւող ուղեցոյց աստղը:

Մեզ շրջապատող ամբողջ նիւթական աշխարհը կազմուած է երևոյթների երկու մեծ դասակարգերից՝ անշունչ, մեռած, կամ անօրգանական բնութիւնից և այսպէս կոչուած՝ կենդանական թագաւորութեան երևոյթներից: Առաջին խմբի մէջ թագաւորում են բնական — մեքենական օրէնքներ, այստեղ ոյժերի թագաւորութիւն է. բազմազան երևոյթների ամբողջ հարստութիւնը բացատրւում է զանազան ձևի շարժումներով:

Կենսական երևոյթների շրջանում — բուսական և կենդանական թագաւորութեան մէջ՝ մենք տեսնում ենք աւելի բարդ ոյժերի արտայայտութիւն, քան թէ բնական և մեքենայականները. այն գործողութեան եղանակները (պրո-

ցէաները), որոնք կազմում են կեանքը, գոնէ ցոյսօր կարելի չի եղել շարժումով բացատրել: Իսկ այդ ձևի երևոյթների ամենաբնորոշ առանձնայատկութիւնները կայանում են նրանում, որ նրանց մէջ արտայայտւում է որոշ ուղղութեամբ դարգանալու և կատարելագործուելու ընդունակութիւն: Զարգանալու այս տրամադրութիւնը արտայայտւում է արդէն կենդանի էակների բնութեան հետ յարմարուելու մէջ, պահպանւում է և ամրապնդւում ժառանգականութեան շնորհիւ, երբ յարմարուելու արդէն մշակուած ձևերն հաղորդւում են սերնդէ սերունդ: Միւս կողմից էլ կենդանի էակները իրենց փոփոխուելու ընդունակութեան հետ ունին նաև հակառակ առանձնայատկութիւն — պահպանելու մի անգամ ընդունած տիպը՝ ձևը: Հիմնական տիպարը պահպանելու և փոփոխութեան տրամադրութեան երկու բևեռների վրայ է պահպանւում այն առանցքը, որի շուրջը գտնւում է կենդանի էակների զարգացման դարաշրջանը:

Էւօլյուցիայի կամ զարգացման օրէնքի հիմնական արտայայտութիւններից մէկն է անհատների աճումն ու բազմանալը, որով բնութիւնը վճռել է անհատի պահպանութեան խնդիրն ու նրա փոփոխութիւնը ի դէմս իւր սերունդների:

Ընդհանրապէս կենդանի նիւթի և կենդանի էակների ամենահիմնական առանձնայատկութիւնն է շրջապատող բնութեան պայմանների հետ աստիճանական զարգացումն:

Անցնելով մեր հոգեկան աշխարհի, բնականաբար մեզ հարց ենք տալիս՝ արդեօք այստեղ էլ պատահում ենք նիւթական բնութեան նման երևոյթների:

Ինչքան էլ տարօրինակ է թւում այդ հարցը, սակայն հոգեկան երևոյթների ուշադիր վերլուծութեան ժամանակ մենք հանդիպում ենք բաւարար փաստերի, որոնք իրաւունք են տալիս դրած հարցին դրական պատասխան տալու:

Մարդու ներքին հոգեկան աշխարհը մի անհրաժեշտ բան չէ, սակայն իւրաքանչիւր քայլափոխում տալիս է զարգանալու ընդունակութեան արտայայտութիւններ, իւրա-

քանչիւր առանձին վերցրած միտք կամ զգացմունք ընդունակ է աճելու թէ ծաւալով և թէ ոյժով: Յաճախ մի միտքը ծնում է ուրիշները, որը յիշեցնում է բազմանալու գործողութիւնը (պրօցէսը): Մարդուս ամբողջ հոգեկան անհատական կեանքը՝ մանկան հոգու մէջ գիտակցութեան առաջին նշոյլից մինչև խորին ծերութիւնը՝ արդեօք մեր հոգեկան աշխարհի աճման ու զարգացման մի անընդհատ շարքը չէ:

Մարդկային քաղաքակրթութեան յառաջադիմութիւնը և մարդուս պատմական զարգացումը կրօնական, մտաւոր և բարոյական ուղղութեամբ հնարաւոր է մի միայն հոգեկան կեանքի ժառանգականութեամբ՝ այսինքն դէպի գիտակցութեան որոշ երևոյթները կազմակերպուած ընդունակութեանց ժառանգաբար՝ ծնողներից սերունդների անցնելուն:

Յարմարուելն էլ հոգեկան կեանքի հիմնական յատկութիւններից մէկն է: Քաղաքակրթուած մարդու բոլոր բարդ հասկացողութիւնները, զգացմունքներն ու հակումները առաջ են եկած արտաքին՝ ֆիզիքական և ընկերվարական կեանքի պայմանների մարդուս հոգեկան գործունէութեան վրայ ազդելուց: Մեր ընկերվարական պահանջները, բնագոյններն ու սովորութիւնները պարզ արդիւնք են մեր հոգու յարմարուելու ընդունակութեան:

Յարմարուելու նոյն երևոյթները մենք գտնում ենք իւրաքանչիւր անհատի հոգեկան կեանքի շրջանում: Մեր հոգու մէջ իւրաքանչիւր նոր ծնունդ առնող պատկերը զարգանում է ոչ թէ մեր հոգեկան կեանքի ամբողջ կազմից անկախ, այլ ձևակերպուում է՝ ենթարկուելով արդէն կազմակերպուած իրեն նման պատկերներին և հոգեկան երևոյթներին:

Զընայած հոգեկան և ֆիզիքական կեանքի զարգացման (էվօլյուցիայի) այս զարմանալի նմանութեան, զարձեալ կարող էր կասկած մնալ, թէ արդեօք սա իսկապէս ներքին նոյնութիւն է, թէ արտաքուստ երևցող նմանութիւն: Այս կասկածը տեղի պէտք է տայ խորին համոզման, երբ մենք յիշենք, որ կենդանի էակների ամբողջ սերխան

(շարքերը), որոնք հոգեպէս մարդուց ստոր են, արտայայտում են պարզ գործունէութիւն հոգեկան ոյժերի՝ հոգեբանական ձևերի աստիճանական տոհմային զարգացման՝ սկսած ստորին՝ հազիւ գիտակցող էակներից մինչև այն կենդանիները, որոնք հոգեպէս արդէն բաւական մօտ են երկրի թագաւորին—մարդուն:

Այստեղից ակնհայտ է դառնում, որ նիւթական ձևերի և հոգեբանական կեանքի զարգացումը կենդանական թագաւորութեան մէջ՝ մի ինչ որ մեզ անհասկանալի ձևով անխղճի կապուած են իրար հետ և որ ամենայն հատման կանոնութեամբ նիւթական և հոգեկան զարգացումը ներկայացնում է միևնոյն գործողութեան (պրօցէսի) երկու կողմեր:

Այս ձևով մենք կրկին գալիս ենք մեզ ծանօթ եզրակացութեան՝ մարմնաւոր և հոգեւոր աշխարհների փոխադարձ կապի մասին և այդ երկու աշխարհների համար էլ ընդհանուր հիմունքների և սկզբունքների գոյութեան:

Մեզ շրջապատող ֆիզիքական աշխարհում կատարուող երևոյթների գիտօգութիւնները մեր առաջ պարզում են այդ երևոյթների յարաբերութեանց երկու դասակարգը՝ որակական և քանակական:

Մարդուս մտքի մէջ քանակութեան մասին հասկացողութիւնը առաջ է գալիս իւրաքանչիւր անգամ, երբ մեր աչքի առաջ կրկնում է իրար ամեն կերպ նման տուարկաների շարքը: Այդպիսի դէպքերն են օրինակ՝ երբ մենք հայեացք ենք ձգում նոյն ցեղի անասունների նախրի վրայ: Այդ պատկերի մէջ թէպէտ իւրաքանչիւր կենդանին ունի որոշ առանձնայատկութիւններ, սակայն գերիշխող է հանդիսանում ամբողջ խմբի բաժան անհատների միատեսակութեան, նմանութեան և լիակատար համեմատութեան տպաւորութիւնը՝ մանուսնդ երբ դիտում ենք որոշ տարածութիւնից: Այս տեղից է առաջ գալիս քանակութեան մասին հասկացողութիւնը:

Քանակութեան մասին հասկացողութիւնը ամենից առաջ պարզում է շարժման միջոցին, որովհետև տարածու-

թեան մասերը, կամ շարժման ճանապարհները շատ աւելի հեշտ համեմատելի են և բնութեան աւելի միատեսակ երևոյթքս. յս գաղափարն ըմբռնելու և մշակելու գործում մարդիկ ամենից շատ պարտական են արտաքին բնութեան մէջ գոյութիւն ունեցող բազմաթիւ միատեսակ կրկնուող երևոյթներին և շարժումներին, որոնք են՝ աստղեր, գազաններ, ծառեր, ցերեկուայ և գիշերուայ կանոնաւոր յաջորդութիւններն և այլն:

Քանակութեան մասին հասկացողութիւնն էլ միւս կողմից ապացոյց է երկու կամ մի քանի երևոյթների արմատական տարբերութեան, նրանց համեմատելու անհնարինութեան և անհամանմանութեան: Այդպէս են գոյները ձայների հետ համեմատած և կենդանիները՝ բոյսերի նկատմամբ:

Մարդկային գիտութեան յառաջադիմութեան պատմութեան մէջ կարելի է նկատել ձգտումն աւելի և աւելի որոնելու և գտնելու քանակութիւնն այնտեղ, որտեղ առաջ ենթադրուում էր յատկութեան տարբերութիւնը:

Բնախօսութեան յաջողութիւնները մեր առաջ բաց են անում ներքին (նմանութիւնը) ազգակցութիւն արտաքուստ տարբեր թուացող ֆիզիքական երևոյթների մէջ: Այսպէս զանազան բարձրութեան ձայներն իրարից տարբերում են մի միայն օդի տատանման (ալիքների) քանակութեամբ:

Քիմիան տարրալուծել է օրգանական բնութեան հազարաւոր իրարից տարբեր մարմիններ և ապացուցել, որ այդ մարմիններից շատերը, որոնք ըստ երևոյթին նման չեն իրար, բաղկացած են բոլորովին համանման տարրերից, որոնք միայն միացած են տարբեր համեմատութեամբ (տարբեր օճով):

Կարելի է ասել, որ բազմաթիւ գէպքերում գիտութեան իւրաքանչիւր նոր յազմանակը հասցնում է մեզ թուական յարաբերութեան այնտեղ, ուր մինչև այդ ենթադրում էին որակական տարբերութիւն:

Անցնելով հոգեկան աշխարհին՝ գիտակցութեան երևոյթներին, մենք այստեղ էլ գտնում ենք ինչպէս որակական

տարբերութիւն, այնպէս էլ քանակական յարաբերութիւն մեր հոգեկան կեանքի բաժան երևոյթների մէջ:

Երբ մենք ստիպուած ենք լինում տարբերել մեր զգացմունքներն ու յիշողութիւնները և նրանց իրար հետ համեմատելով վճուել որակով են տարբերում նրանք, թէ քանակով, մենք ղեկավարուում ենք այն մասշտաբով, որը մեզ ծառայում է շրջապատող բնութիւնը համեմատելիս:

Այստեղ՝ գիտակցութեան մէջ էլ մենք որակով տարբեր ենք ընդունում մեր այն տրամադրութիւնները, որոնց իրար հետ համեմատել չի կարելի և տարբեր են:

Դասաւորելով լուսոյ, գոյների կամ տեսողութեան մտապատկերները ձայների մտապատկերների հետ, ոչ մի կերպ հնարաւորութիւն չենք գտնում այդ երկու ըստ երևոյթին իրար հետ ոչ մի նմանութիւն չունեցող մտապատկերների շարքերն իրար հետ համեմատելու:

Ձայնն ու լոյսը գիտակցութեան մէջ միշտ իրար խորթ տպաւորութիւն են մնում. — գիտակցութեան համար նրանք հանդիսանում են զանազան դասակարգերի երևոյթներ, այսինքն նրանք յատկութեամբ տարբեր են:

Իսկ երբ մենք գիտակցութեան մէջ համեմատում ենք լուսոյ տպաւորութիւնների երկու տեսակը, օրինակ կարմիր և դեղին լոյսը, այդ գէպքում՝ չը նայած այդ տպաւորութիւնների ամբողջ տարբերութեան, մենք նրանց մէջ գտնում ենք ընդհանուր տարրեր՝ — լուսաւորութիւն և տեղութիւն: Երբեմն մենք նկատում ենք երկու տպաւորութիւնների խառնումն և նրանց մէջ միջին տպաւորութիւնների առաջ գալը: Ահա թէ ինչ պատճառով այդ երկու տպաւորութիւններն իրենց յատկութեամբ մեզ այլ ևս տարբեր չեն երևում՝ ինչպէս գոյնն ու ձայնը:

Միևնոյն շարքի տպաւորութեանց սահմանում, ինչպէս օրինակ կարմիր գոյնի, մենք գտնում ենք ուժեղութեան որոշ աստիճաններ, գոյնի խտութիւնը, լուսաւորութեան պայծառութիւնը, և այդպիսի գէպքերում մեր մէջ արմատանում է այն համոզմունքը, որ այդ բոլոր տպաւորութիւն-

ներն իրենց յատկութեամբ համանման են և իրարից ասար-
բերում են մի միայն թուով:

Բարձրանալով վեր՝ դէպի հոգեբանական տպաւորու-
թիւնների աւելի բարդ երևոյթները, մենք այստեղ էջ
դանում ենք որակ և քանակ:

Մեր զգացմունքները բնաւորութեամբ երբեմն խստիւ
տարբերում են իրարից, ինչպէս գայրոյթն ու սէրը, ցաւը,
երկիւղը և ուրախութիւնը. կամ ներկայանում են որպէս
միևնոյն զգացման տարբեր աստիճաններ՝—ինչպէս օրինակ
—ուրախութիւնը, բաւականութիւնը, յոյսը և գեղագի-
տական բաւականութեան զանազան տեսակները՝—օրինակ՝
տեսողականը, երաժշտականը և այլն:

Երկնային լուսատուների շարժման պարբերականու-
թիւնը, հիմք կազմելով բնութեան մէջ ժամանակի և շարժման
մասին մեր ունեցած հասկացողութեան, միևնոյն ժամանակ
ծառայում է որպէս աղբիւր թուի և քանակութեան մասին
ունեցած տպաւորութիւնների՝ ինչպէս ֆիզիքական աշխար-
հում, այնպէս էլ գիտակցութեան մէջ: Այստեղ ի մի են
ձուլուած կրկնողութիւնն ու արտաքին և ներքին, ֆիզի-
քական և հոգեկան համանմանութիւնը: Այստեղ է թուի
մասին հասկացողութեան սաղմը, որը միատեսակ չափով
ընդգրկում է արտաքին բնութիւնն ու գիտակցութեան
աշխարհը:

Մարդու հոգեկան աշխարհը իրար վրայ ներգործող
ոյժերի ասպարէզն է, որտեղ շարժում և փոխադարձ
ազդում են մտքի և զգացմունքների առանձին հեռանք-
ները:

Այս փաստերի մէջ արդէն անմիջական կերպով բո-
վանգտելում է այն օրէնքը, որ հոգեկան աշխարհն հանգի-
սանում է մի ամփօփ ամբողջութիւն, որի մէջ բոլոր
տարրերը, այսինքն առանձին մտապատկերներն, հասկա-
ցարթիւններն և այլն, գանւում են սերտ փոխազդեցու-
թեան մէջ և նրանց մէջ կատարուող փոփոխութիւնը
պէտք է փոխադարձաբար կապուած լինի: Ուրիշ խօսքով
մեր հոգեկան՝ ինչպէս և նիւթական աշխարհում պէտք է

իշխի պատճառականութեան խիստ օրէնքը, որի հիման
վրայ ոչ մի փոփոխութիւն չի կատարում՝ առանց նրա
նախորդ փոփոխութիւնների:

Գիտակցութեան մէջ այդ պատճառականութեան
օրէնքներն ընդունելը շատ էլ դիւրին գործ չէ: Հէնց հոգե-
կան երևոյթների կարճատեւութիւնն ու շուտափոյթ փոփո-
խութիւնը գիտակցութեան մէջ, նրանց երբեմն առանց
յայտնի շարժառիթների երևան գալը գլխաւոր պատճառն
է, որ մեզանից խուտափում է մեր գիտակցութեան մէջ
շարժուող մտապատկերների կապը, իսկ նրանց երևան
դալն ու անյայտանալը մեզ թւում է որպէս պարտականու-
թեան մի խաղ:

Բացի դրանից մեր հոգեկան կեանքում կան որոշ
առանձնայատկութիւններ, որոնք սքողում են հոգեկան
երևոյթների պատճառական կապը և նրանց կանոնաւոր
հետևողականութիւնը: Մենք խօսում ենք այն ցնորքի
մասին, որը մեզ հարկադրում է հաւատալ մեր կամքի
ազատութեան, այսինքն որ նա անկախ է մեր հոգեկան
գործունէութիւնից, մտիւններից (պատճառներից), զգաց-
մունքներից և այլն:

Կամքի ազատութիւն ընդունող հոգեբանները երբեք
չեն մերժել այն բոլորի ներքին կապը, ինչ որ կատարում է
մեր հոգու մէջ, և ոչ էլ հոգեկան առանձին գործողու-
թիւնների պատճառական հետևողութիւնը:

Բայց, «կամքի ազատութիւն» ընդունելով, հոգեբան-
ները դրանով արտայայտում են այն միտքը, որ ընտրու-
թեան և վճռի բուն գործողութիւնը առանձին տեսակի
գործողութիւն է, որի մէջ մտնող հոգեբանական տարրերից
բացի, ինչպէս մտապատկերներ, գաղափարներ, զգաց-
մունքներ և այլն, մասնակից է առանձին մի ոյժ, կամ
առանձին հոգեկան օրդան՝—մեր եսը, որ վերջնական
ուղղութիւն է տալիս կամքի վճռահատութեան:

Նոյն իսկ այն ենթացողութիւնը, որն ընդունում է
առանձին ոյժի գոյութիւն և կամքի գործունէութիւն,
որը կառավարում է հոգեկան բաժան գործողութիւնները

և նրանց միջից ընտրութիւն անուժ, դեռ ապացուցուած չէ: Կարելի է կամքի գործունէութեան մէջ երևան եկող ընտրութիւնն ու վճիռը բացատրել նրանով, որ հոգեբանական բաժան ֆակտորների մեր հոգու մէջ որոշ րոպէյում կատարուող մրցման (կռուի) մէջ հոգեբանական ոյժերի փոխադարձ ազդեցութեան օրէնքով առաջ է գալիս հաւասարագորութիւն, որը հէնց այն է, ինչ որ մենք զգում ենք մեր ներսը և ընդունում իբրև առանձին գործողութիւն մեր ազատ կարծուած կամքի:

Յամենայն դէպս մեր ինքնագիտակցութեան ներքին ձայնը խօսում է յօգուտ ազատութեան, այսինքն հոգեբանական երևոյթների պատճառական անողոր օրէնքի դէմ:

Ուրիշ ոչ պակաս լուրջ արգելքը, որը մարդկանց խանգարում է անպայման հաւատալ, որ հոգեկան աշխարհում կայ պատճառական հետևողութիւն, գոյութիւն ունի անգիտակցական երևոյթների մէջ: Հոգեբանական դրութիւնների գիտակցականից միշտ անգիտակցականի փոփոխուելը և ընդհակառակն, մոռացկոտութիւնն ու յիշողութիւնը, զգայախաբուութիւնն ու զառանցանքը, այդ բոլորը միասին վերցրած հնարաւորութիւն չի տալիս, որ ամբողջ հոգեկան աշխարհը, թէ գիտակցական աշխարհն ինքն ըստ ինքեան ամփոփ ամբողջութիւն է, որտեղ կատարուածը որոշում է սեփական ոյժերով ու գործողութիւններով:

Այդ փաստերը պէտք է լրջօրէն ի նկատի ունենալ: Ակնբեր է, որ ընդարձակելով հոգեկան աշխարհի մասին հասկացողութիւնը, ընդարձակելով այն և անգիտակցական շրջանի վրայ, կարելի է փարատել ամենայն կասկած, որ ամբողջ հոգեկան աշխարհը նոյնչափ խիստ ենթակայ է պատճառական կապի, ինչպէս և նիւթական աշխարհը:

Ժամանակակից գիտական հոգեբանութեան տեսակէտից, որը հոգեկան աշխարհում տեսնում է նիւթականի արտացոլացումն, այդ ինքն ըստ ինքեան ակներև է և ոչ մի ապացոյցի կարիք չունի: Եթէ զգացմունքները մեր գիտակցութեան մէջ ծնունդ են առնում արտաքին բնութեան

ազդեցութեան շնորհիւ՝ մեր զգայարանների և նեարդային սխտեմի գործունէութեան հետ կապուած, եթէ հոգեկան անգիտակցական կեանքը հետևանք է ուղեղի անզգայ (աւտօմատ) գործունէութեան, եթէ հոգեբանական որևէ երևոյթի գիտակցական դրութիւնից անգիտակցականի անցնելն ու ընդհակառակն՝ կապ ունի որոշ տրամադրութեան՝ այսինքն նեարդային կեդրոնների գործունէութեան հետ, այն ժամանակ հասկանալի է, որ հոգեկան կեանքի ամբողջ ընթացքում ընդհատումներ ու թռիչքներ տեղի ունենալ չեն կարող և նա հոգեկան և ֆիզիքական ոյժերի գործողութիւնների ամբողջական անընդհատ մի շղթայ է:

Այդ շղթայի մէջ որևէ հոգեբանական երևոյթի դրութեան իւրաքանչիւր փոփոխութիւնը, գիտակցութեան մէջ լինի այն, թէ գիտակցութիւնից վեր, գիտակցութեան մէջ որոշ մտապատկերի, զգացման երևան գալը, այդ երևոյթների ուժեղանալն ու թուլանալը, նրանց ժամանակաւորապէս անգիտակցական դրութեան հասնիլը և նրանց փոխադարձ ազդեցութիւնը, բոլորը խստիւ ստորադրուած է հոգեբանական ոյժերի օրէնքներին, թէ և իրենք՝ այդ ոյժերը և ինքը՝ փոխադարձ ազդեցութեան օրէնքը դեռ ծածկուած է մեզանից:

Հոգեբանական երևոյթների այս թուղթիկ տեսութիւնը մեզ հասցրեց այն եղրակացութեան, որ հոգեկան աշխարհը երևան է հանում այն հիմնական բազմաթիւ գծերն ու յատկութիւնները, որոնք յատուկ են ֆիզիքական բնութեան: Թէ այստեղ և թէ այնտեղ մենք գտնում ենք ներքին ոյժերի գործողութեանց արտայայտութիւն և փոփոխութիւններ, որոնք կատարուում են տևողութեամբ և տարածութեամբ:

Գիտակցութեան՝ ինչպէս և ֆիզիքական բնութեան մէջ պատահում են գծեր, որոնք ընտրուում են կեանքի՝ այսինքն զարգացման երևոյթներ:

Քանակութեան մասին հասկացողութիւնը որոշ չափով կարելի է գործադրել նաև հոգեկան աշխարհի վերաբերութեամբ, վերջապէս հոգեկան կեանքն էլ նոյնպէս պատ-

ճառական կապակցութեան օրէնքի ենթակայ է այնպէս, ինչպէս ամբողջ բնութիւնը:

Այդ բոլորը միասին վերցրած իրաւունք է ապիս յուսալու, որ վաղ թէ ուշ հոգեբանական երթոյթները խորհրդաւոր աշխարհը նուաճուած կլինի գիտութեան համար: Մարդուս խողարկու միտքը հաստատուն գիւրք է ձեռք բերել՝ հոգեպէս յաղթանակելով ֆիզիքական բնութեան վրայ: Մի և նոյն զէնքի, այսինքն այն եղանակների օգնութեամբ, որոնք նպաստեցին նրան բնութեան օրէնքներին տիրանալու, նա կը թափանցի և իւր սեփական հոգու ամենազաղտնի աղբիւրների խորքերը:

ԳԼՈՒԽ III.

Հոգեբանական երևոյթների առանձնայատկութիւններն և նրանց արբերութիւնը Բիզիական աբխարհից:

Հոգեբանական երևոյթներն հասկանալու համար չափազանց կարևոր է պարզել, թէ ինչով է տարբերուում հոգեկան աշխարհը ֆիզիքականից, ինչո՞ւն են կայանում գիտակցութեան որոշ առանձնայատկութիւնները. հոգւոյ մէջ կան արդեօք որ և է յատուկ սկզբունքներ կամ յատկութիւններ, որոնք չեն պատահում կամ չեն արտայայտուում նիւթական աշխարհում:

Առաջին բանը, որ աչքի է ընկնում հոգեկան աշխարհը նիւթականի հետ համեմատելիս, այն է, որ իւրաքանչիւր հոգեբանական երևոյթ բացառիկ՝ անձնական բնաւորութիւն ունի, այսինքն անխզելի կապուած է այն անձի հետ, որն այդ երևոյթը զգում է իւր մէջ:

Եթէ ես գիտում եմ որ և է առարկայ, այդ գէպքում նրանից ստացուած մտապատկերը սեփականու-

թիւնս է, կամ իմ գիտակցութեան որոշ կացութիւն. կարելի է ընդունել, որ որոշ վայրկեանին ես միակ անձնաւորութիւն եմ, որն օժտուած է հասկանալու շրջապատող բնութիւնը և որ գիտակցութեանս մէջ գոյութիւն ունեցող պատկերը՝ միակ հոգեբանական երևոյթ է, առարկայի արտաքին որոշ աղբեցութեամբ առաջ եկած: Բայց եթէ անգամ լինին բազմաթիւ անհատներ, որոնք օժտուած են միատեսակ ընդունակութեամբ ըմբռնելու իրենց գիտակցութեան մէջ շրջապատող առարկաների մտապատկերները, գիտակցութեան իւրաքանչիւր երևոյթն առանձին վերցրած, իւրաքանչիւր պատկերն իրենից ներկայացնում է կղզիացած երևոյթ, որը նախ և առաջ չի կարող անմիջապէս հաղորդուել մի ուրիշին, և երկրորդ՝ անխզելի կապուած է այն անհատի գոյութեան հետ, որը նրան գիտակցում է:

Բնութեան իւրաքանչիւր առարկայի մասին մենք կարող ենք մտածել որպէս ինքնուրոյն կերպով գոյութիւն ունեցողի մասին, որը մեզանից անկախ է. իսկ մեր գիտակցութեան իւրաքանչիւր կացութեան մասին, օրինակ հէնց այդ առարկայի մտապատկերի մասին այն վայրկեանին, երբ մենք գիտում և գիտակցում ենք այն, մենք չենք կարող մտածել այլապէս, քան որպէս մեր գիտակցութեան մասին, որպէս մեր անձի որոշ մոմէնտի մասին: Այդ պատճառով էլ գիտակցութիւնը, կամ աւելի ուղիղն ասած նրա իւրաքանչիւր վայրկեանը աւելի բարդ է, քան բնութեան սր և է երևոյթը այն մտքով, որ գիտակցութեան իւրաքանչիւր երևոյթը միշտ կրկին յատկութիւն ունի, սրովհետև նրա մէջ՝ բացի մեր գիտակցութեան բովանդակութիւնից, մտնում է նաև մեր անձնական գործակցութիւնը:

Հոգեկան երևոյթների այդ առանձնայատկութիւնը առաւելապէս խիստ է արտայայտուած կամքի և զգացմունքների շրջանում: Ախորժեղին ու անախորժը, ուրախութիւնն ու վիշտը, յոյսն ու երկիւղը և այլ նման զգացմունքները, մեր բոլոր ցանկութիւնները, ձգտումներն ու

ծրագիրները, նպատակները, համակրանքն ու հակակրանքը, մեր անձի, մեր սեփական ներքին հոգևոր էութեան տարբեր գրութիւններ են: Նոյնիսկ այն դէպքերում, երբ այդ զգացմունքները մեր մէջ առաջ են գալիս արտաքին պատճառների շնորհիւ, օրինակ՝ — երաժշտութեամբ, մենք մեր գիտակցութեան մէջ պարզ կերպով տարբերում ենք հոգեկան գործողութեան երկու կողմեր՝ — մինը, որ վերաբերում է արտաքին պատճառի, օրինակ երաժշտութեան բնաւորութիւնը և մի ուրիշ բան, որը պատկանում է մեր «եսին» — մեր տրամադրութիւնը:

Երբ մեր ուշադրութիւնը կանգ է առնում որ և է պատկերի վրայ, մենք, թէև գիտենք, որ այդ պատկերներն ու տպաւորութիւններն առաջ են եկած արտաքին բնութեան առարկաների կամ պատճառների շնորհիւ, բայց նոյնաժամանակ մենք գիտակցում ենք, որ այդ պատկերները, որպէս գիտակցութեան որոշ գրութիւններ, պատկանում են մէկին, ով որ ընդունում է այդ տպաւորութիւնները, այսինքն ըմբռնում է այդ զգացողութիւնը և այդ մէկը դարձեալ մեր ներքին հոգեկան էսն է: Միանգամ մեր էսը ըմբռնում է այն, ինչ որ կատարում է մեր գիտակցութեան մէջ, միւս անգամ այդ էսը այն օբեկտն (գիտողին երևացող առարկան) է, որի վրայ կատարում է հոգեկան կեանքը: Գիտակցութեան և մեր էսի մէջ գոյութիւն ունեցող անխզելի կապն է, որ կազմում է հոգեկան աշխարհի անձնականութիւնը: Այդ անձնականութիւնը այնքան բազմատեսակ է երևան գալիս և ունենում այնքան նշանաւոր հետեանքներ մեր ամբողջ հոգեկան կեանքի նկատմամբ, որ մեզ հարկադրում է փոքր ինչ աւելի կանգ առնել հոգևոյ այդ առանձնայատկութեան վրայ:

Հոգեկան աշխարհի անձնական անհատական բնաւորութիւնն ամենից առաջ արտայայտում է նրանում, որ հակառակ ֆիզիքական աշխարհի, հոգեբանական երևոյթները մարդուց անկախ՝ ինքնուրոյն գոյութիւն չունին:

Հոգեբանական իւրաքանչիւր երևոյթ, զգացողութիւն,

մտապատկեր, միտք կամ զգացմունք, ընդհանրապէս գիտակցութեան իւրաքանչիւր արտայայտութիւնը գոյութիւն ունի միմիայն այն անձի համար, որի մէջ նա ծնունդ է առել: Միտքս, որպէս գիտակցութեան երևոյթ, բացի ինձանից՝ ուրիշ ոչ ոքի համար գոյութիւն չունի: Ինձանից դուրս գիտակցութիւնս գոյութիւն չունի:

Արտաքին աշխարհի նիւթական երևոյթներն՝ ընդհակառակն ընտրուում են նրանով, որ նրանց գոյութիւնը կախումն չունի ոչ իմ անձնական և ոչ էլ ուրիշ մարդկանց գիտակցութիւնից:

Մեռնում են մարդկանց սերունդներ, նրանց փոխարինում են նորերը, իսկ արտաքին առարկաները մնում են: Արտաքին առարկաների այդ՝ մեր գիտակցութիւնից անկախ գրութեան մէջն է կայանում ֆիզիքական աշխարհի առարկայականութիւնն ու իրականութիւնը:

Արտաքին աշխարհի մասին մեր ունեցած բոլոր տեղեկութեանց աղբիւրն են մեր տպաւորութիւնները, այսինքն զգացողութիւններ, մտապատկերներ և պատկերացումներ, մի խօսքով մեր գիտակցութեան զանազան գրութիւնները: Այդ պատճառով էլ կարող է թուալ, որ նոյն իսկ արտաքին աշխարհի առարկաների գոյութիւնն անխզելի կապուած է մեր գիտակցութեան, մեր էս ի հետ: Բայց իրօք այդ կապը այնքան էլ հաստատուն չէ: Նախ՝ արտաքին առարկաների կրկին գիտողութիւնը մեզ համոզում է, որ մենք այդ առարկաները միշտ գտնում ենք մեր աչքի առաջ, որ այդ առարկաները չեն փոխուել այն ժամանակի ընթացքում, որն անցել է մեր գիտողութիւնից:

Բացի դրանից մենք ուրիշ մարդկանց ցուցումներից գիտենք, որ այդ առարկաները շարունակում էին գոյութիւն այդ մարդկանց համար և այն ժամանակ երբ մենք նրանց չէինք գիտում: Այս տեղից վերջ ի վերջոյ առաջ է գալիս այն համոզմունքը, որ մեզ շրջապատող առարկաները թէ և գոյութիւն ունէին մեզ համար մի միայն մեր զգացումների շնորհիւ, բայց նրանք ինքն ըստ ինքեան

գոյութիւն ունին մեր մարդկային գիտակցութիւնից անկախ։
 Կարող է պատահել, որ եթէ գոյութիւն ունենար մի
 միայն մի իւրացնող անհատ, կամ եթէ առարկաներն
 անընդհատ փոփոխելիս լինէին իրենց յատկութիւններն,
 այդ անհատի մէջ չէր կարող համոզմունք գոյանալ ար-
 տաքին բնութեան անկասութեան և իրական լինելու
 մասին։

Գիտակցութեան ամենաբնորոշ յատկութիւններից մինը
 կայանում է նրանում, որ գիտակցութեան երևոյթները
 չեն ձգւում անընդհատ գծի նման, իրար հետ չեն ձուլ-
 ւում, այլ բաժան են իրարից։ Մեր հոգեկան կեանքն
 ընթանում է թռիչքներով, գիտակցութեան մի երևոյթից
 մինչև միւսը կայ անպատճառ դատարկ տարածութիւն։
 Այդ աւելի նկատելի է մտքերի շրջանում, որտեղ հա-
 տուածականութիւնն ու անկայունութիւնը աչքի են ընկ-
 նում շատ պարզ (ընդհանր) կերպով. նոյն իսկ ամենալար-
 ուած խելքի տէր մարդը չի կարող որոշ կարճ ժամա-
 նակից աւելի պահպանել և պայծառ սրահել իւր գիտակ-
 ցութեան մէջ որ և է միտքը։ Այն դէպքերում, երբ
 միևնոյն միտքը դիմացկուն կամ հաստատուն կերպով զբա-
 ղեցնում է մեր միտքը, նա իսկապէս առ երևոյթս միայն
 հաստատուն է, նա երբեմն անյայտանում և երբեմն նու-
 րից երևան է գալիս մեր գիտակցութեան մէջ—նա մեր
 գիտակցութեան մէջ գոյութիւն ունի մի միայն պարբերա-
 բար։ Այն հազուադիւր դէպքերում, երբ որ և է անբաժան
 միտքը տիրանում է մարդուս խելքի վրայ, մենք նկատում
 ենք գրութեան անբնականութիւն և խօսում ենք *idée*
fixe-ի՝ սեւեռման մասին։ Նոյն բանն է մեր զգացմունք-
 ների, մեր ձգտումների և կամեցողութիւնների վերաբե-
 րութեամբ։

Հոգւոյ միակ ասպարէզը, որտեղ կարծէք գոյութիւն
 ունի գիտակցութեան կայունութիւնը—դա մեր տգաւու-
 րութիւնների (սֆերան է) սահմանն է, այսինքն զգացու-
 ղութիւնների և մտապատկերների։

Երբ մեր առաջն է որ և է առարկան, որը միևնոյն

ժամանակ հանդարտ է մնում և չի փոխում իւր յատ-
 կութիւնները, այդ առարկայի մտապատկերն ու առաջ
 բերած զգացողութիւնները որոշ ժամանակ յայտնում են
 մեր գիտակցութեան մէջ. մենք ստանում ենք գիտակ-
 ցութեան ընդհատուող մի դրութիւն։ Բայց այստեղ երե-
 ւան է գալիս մեր հոգւոյ այն արմատական առանձնա-
 յատկութիւնը, որը գիտակցութեան պայծառութեան
 ամենայաջող պայմաններում—երբ այդ գիտակցութիւնը
 արտաքին պայմաններից զրգիւ է ստանում և պահպան-
 ւում է արտաքին առարկաներով, նա զարձեալ կը մնայ
 անփոտահելի և կայուն մի միայն շատ կարճ ժամանակով։
 Մանրակրկիտ դիտողութիւնները ցոյց տուին, որ մեր ուշա-
 գրութեան ամենալարուած ու կեդրոնացած դրութեան
 ժամանակ որ և է առարկայի կամ երևոյթի մասին, մենք
 ժամանակ առ ժամանակ պարբերաբար կորցնում ենք
 տպաւորութեան թելը։ Օրինակ, երբ երաժշտական գոր-
 ծիքը մեր մօտ որոշ ոյժ և բարձրութիւն ունեցող ձայն է
 հանում տեսողաբար, մենք կանոնաւոր պարբերականու-
 թեամբ վայրկենաբար զազարում ենք լսել այդ ձայնը։
 Արդեօք դա մեր ուշագրութեան զգայարանի յօգնածու-
 թեամբ է բացատրւում, թէ այդ ընդհատումները հետե-
 ւանք են մեր հոգու անընդհատ աշխատանքին անընդու-
 նակ լինելու։ Մի բան միայն պարզ է, որ մեր գիտակ-
 ցութիւնը չի կարող անընդհատ լինել, այլ նա պարբերա-
 կան բնաւորութիւն ունի։

Նոյն իսկ ամենանպաստաւոր պայմաններում մեր
 գիտակցութեան ընթացքը նման է շղթայի, որի օղակները
 պարբերաբար դուրս են ընկնում։ Գիտակցութեան այդ
 առանձնայատկութիւնն է պատճառը, որ նա չի կարողա-
 նում հասնել ձուլածոյ ամբողջութեան և դատապար-
 տուած է երևալու մեզ՝ որպէս իրար հետեղ անկապ
 մի մասսա։

Ի հարկէ մեր անմիջական գիտակցութեան մէջ ար-
 տաքին առարկաները և երևոյթները նոյնպէս պէտք է
 անջատ երևան, բայց վերոյիշեալ խմբակցական գիտակ-

ցութեան կոնտրօլի շնորհիւ մեզանում արմատանում է հաւատարմութիւնն աշխարհի և նրա երևոյթների մշտականութեան մասին:

Մի հանգամանք նոյնպէս նպաստում է մեր՝ արտաքին աշխարհի մասին, ամբողջացած կանոնաւոր հայեացք ունենալու— դա արտաքին բնութեան շատ խոշոր երեւոյթների յաճախակի և միևնոյն ժամանակ կանոնաւոր կրկնողութիւնն է: Այդպէս են երկնային մարմինների շարժումները, ցերեկուայ և գիշերուայ, տարուայ եղանակների և բնութեան բազմաթիւ երևոյթների կանոնաւոր կրկնութիւնը: Այդպիսի կանոնաւոր պարբերականութիւնը մեր մտքի մէջ կապակցում է բնութեան երևոյթների մէջ շղթայի բաժան օղակները և մեզ շրջապատող աշխարհը հիւսումնանկալի մի ամբողջութիւն է դարձնում: Իսկ մեր ներքին աշխարհի երևոյթները միացնելու այդ պայմանները շատ էլ նպաստաւոր չեն դասաւորում:

Ճիշտ է, մեր գիտակցութեան մէջ շատ երևոյթներ կրկնուում են նոյն կանոնաւորութեամբ, ինչպէս և այն արտաքին երևոյթները, որոնք նրանց շարժառիթն են, բայց մենք բնագրամբ շատ կանոնաւոր կերպով հոգեբանական կրկնուող երևոյթների այդ մշտականութիւնը վերագրում ենք այն արտաքին պատճառների, որոնց հետ նրանք կապուած են:

Մենք այդ մշտականութիւնն ու կանոնաւորութիւնը վերագրում ենք բնութեան և ոչ թէ մեր անձնական գիտակցութեան:

Բայց կայ հոգեբանական երևոյթների մի դասակարգ, որը մեր մէջ ծնունդ է առնում կանոնաւոր կերպով և կարծես առանց արտաքին բնութեան ներգործութեան՝ կարծէք վերջինից բոլորովին անկախ— դա մեր մարմնի գիտակցութիւնն է, մեր զգացմունքները, ցանկութիւնները, ձգտումները և գործողութիւնները: այդ բոլորը վերաբերում է մեր անձնաւորութեան, մեր եսին: Այդ տեսակ կրկնուող երևոյթների գիտակցութեան ազդեցութեան շնորհիւն է կազմակերպում մեր այն հա-

մողմունքը, կամ աւելի ճիշտն ասած՝ հաւատը, որ մեր ներսը գոյութիւն ունի մի ինչ որ մշտական, արտաքին բնութիւնից անկախ, մեր հոգեկան եսը:

Մարդկանց իրար հետ համեմատելով, մենք տեսնում ենք՝ թէ նրանք իրար հետ են տարբերում յիշողութեան տևողութեամբ և այն կայունութեամբ, որով օժտուած են մտապատկերները, մտքերը, ձգտումները, զգացմունքներն և այլն նրանց գիտակցութեան մէջ: Վարժութիւնը բարձրացնում է այդ ընդունակութիւնը, իսկ յօգնածութիւնն ու հիւանդութիւնը— թուլացնում: Մանուկներն ու ծերունիներն այդ կողմից աւելի թոյլ են, քան կեանքի առոյգ հասակում եղածները: Կանայք յաճախ աւելի թոյլ են իրենց գիտակցութեան պայծառութեամբ և կայունութեամբ: Շնորհալիութիւնն ու տաղանդաւորութիւնը հետեանք են գիտակցութեան մէջ սեփական դրութիւններ պայծառ և տևողաբար վերարտադրելու ընդունակութեան:

Գիտակցութեան այդ սահմանափակ տևողութեան (Фиксация) վրայ արդեօք իբրև ճակատագրական, անփոփոխութեան պէտք է նայենք, թէ կարելի է յուսալ, որ մարդկային ցեղի էվոլյուցիան մեզ կըհասցնի հոգեկան այդ յատկութեան մեծանալուն և կընդարձակի այդ ընդունակութեան սահմանների շափը:

Արդէն այդ ընդունակութեան վերոյիշեալ անհատական տատանումները և տարբերութիւնները մեր վերջին ենթադրութիւնը հնարաւոր են դարձնում: Փորձը ցոյց է տալիս, որ ուշագրութիւնը, այսինքն գիտակցութեան որոշ երևոյթը տևողաբար վերարտադրելու ընդունակութիւնը պարբերական կանոնաւոր կրթութեանց շնորհիւ կարող է զգալի կերպով զարգանալ: Ժառանգականութեան ճանապարհով գիտակցութեան այդ ուժեղացումն կարող է հաղորդուել յետագայ սերունդներին և յառաջադիմել սերնդէ սերունդ: Այդ պատճառով էլ ցնորք չի լինիլ, եթէ յոյս տածենք, որ հեռաւոր ապագայում մարդիկ կարող կլինին իրենց հոգեկան երևոյթներն աւելի կայուն դար-

ձեռնու եւ կարող է պատահել, որ մեր տպաւորութիւնս
 էերի աւելի մեծ ծառայութեան և տեղութեան ժամանակ
 նակ մենք ընդունեալ կրթաւորեանք մեր հոգեկան աշխարհի
 մտաւորապէս անաւել անբողջացած, աւելի անգիտի երե-
 ւակայելու, քան ինչ որ կարողանում ենք այժմս: Այն
 ժամանակ արագէ անցարտանայ հոգեկան և ֆիզիքական
 աշխարհի ամենամեծ ստարգերութեաներից մինչ, գուցէ
 քանգուի այն խոչընդոտոր, որ ներկայումս խոնգարում է
 ըմբռնել գիտակցութեան և ֆիզիքական երևոյթիւների համա-
 նամութիւնը:

Իսկ առ այժմս գիտակցութեան երևոյթիւների անկա-
 յունութիւնն ու աղօտութիւնը (թեղ ֆիզիկայիւն) արդեւ
 է գաւանսում այդ երևոյթիւների համադրութեան և բաժա-
 նում նրանց ըստ ժամանակի: Հոգեբանական երևոյթի-
 ների համադրութեան գէժ պակաս արդեւ չի ներկայա-
 ցնում այն՝ իւրաքանչիւր մարդուն անձնական փորձից
 ծանօթ հանգամանքը, որ մենք որոշ ընդհանրում մեր գի-
 տակցութեան մէջ չենք կարող միաժամանակ պահպանել
 երեք չորս պայծառ տպաւորութիւն: Երբ մենք գիտում
 ենք մեր առաջ գրոսած պատկերը, որի վրայ նկարած են
 մի քանի դէպքեր կամ ստաբիլաներ, մենք կարող ենք որոշ
 աստիճանի պարզ և պայծառ տեսնել մի միայն մի դէպք,
 այսինքն — որքան աւելի պարզ և գիտակցաբար ենք մենք
 իւրացնում պատկերի որ և է մտքը, այնքան սահմանափակ
 է լինում տպաւորութեան ծառայը, այնքան փոքր է գի-
 նում մեր գիտակցութեան ծառայը ներկայ յուսկցում:
 Երբ գիտակցութեան տարարիցի այդ սահմանափակու-
 թիւնը, կամ մի վայրկեանում մեզ մտայնի տպաւորու-
 թեանց շրջանակի սահմանափակ լինելը, հոգեբանութեան
 մէջ յայտնի է գիտակցութեան միութեան օրէնքը ա-
 նանով:

Երբեմն ժամանակներ լրելին ժարդկանց մեծագոյն ստոր-
 իրարանջիւր փոքրիկներում զբոսնում է այս կամ այն
 ձայնը և մի միայն քերթ՝ երկարածեայ փորձաւորութիւնից
 յետոյ ընդամանակներին մեծ ենք բերում միաժամանակ

կամ շատ կարճ միջոցում ըմբռնելու գանազան գործիք-
 ների հանած բոլոր հիմնական ձայները և եղանակի ամ-
 բողջութիւնը, որը ստացւում է մասնակի ձայների հա-
 մագումարից:

Իայց և այնպէս ամենափորձուած երաժշտական
 ականջ ունենալիս անգամ բաւական է, որ ուշադրութիւնը
 կեդրոնացնենք որ և է նուայի կամ գործիքի ձայնի վրայ
 և խելոյն մնացած բոլոր ձայներն անյայտանում են մեր
 գիտակցութիւնից:

Մեղանից իւրաքանչիւրի ամենօրեայ կեանքը լի է
 այնպիսի օրինակներով, երբ մեր ուշադրութիւնը կեդրո-
 նացնելով որ և է մտքի վրայ, դադարում և չենք նկատում
 ինչ որ մեր շուրջն է կատարում: — չենք տեսնում ու-
 չենք լսում: Այդ երևոյթը նրանով է բացատրւում, որ
 մեր գիտակցութեան մէջ տեղ չկայ միաժամանակ մի
 քանի պայծառ մտապատկերների համար, և երբ մեր գի-
 տակցութիւնը դրադուած է, կամ ինչպէս ստորաբար
 տսում են, կեդրոնացած է որ և է մտապատկերի կամ
 մտքի վրայ, մի ուրիշն այնտեղ ծնունդ առնել չի կարող:

Մեր գիտակցութեան շրջանակի այդպիսի սահմանա-
 փակ դրութիւնը ստեղծում է գիտակցական երևոյթների
 մեծամեծ խմբերի կազմակերպութեան գէժ արդեւք, և
 թէև քանգարում է գիտակցութեան բաժան մոմէնտների
 ձուլուելու գործողութիւնը, սակայն հէնց դրանով է պահ-
 պանում հոգեկան աշխարհի երևոյթների բաժան դրու-
 թիւնը: Վերև մասնանշած միջոցների շնորհիւ արտաքին
 աշխարհից իւրացնելիք երևոյթների բաժան դրութիւնը
 վերացւում է, այն ինչ հոգեկան աշխարհում այդ դրու-
 թիւնը մնում է սրագէտ տիրող սկզբունք:

Ըստ երևոյթիւն գոյութիւն ունի շատ սեղս մի կողմ
 հոգեկան աշխարհի մեր մասնանշած սահմանափակու-
 թեան — մեր գիտակցութեան ծառայ սահմանափակ դրու-
 թեան և գիտակցութեան բաժան երևոյթների անկալու-
 նութեան մէջ: Գիտակցութեան ծառայի սահմանափակ
 դրութիւնը՝ անկալունութեան նման անշուշտ կողմ ունի

մեր ուղեղի գործունէութեան ֆիզիոլոգիական պայմաններին հետ: Յայտնի ընագէտների կարծիքով դոնէ տեսողութեան և լսողութեան մտապատկերների համար գիտակցութեան շրջանակի սահմանափակ գրութիւնը պայմանաւորուում է նրանով, որ գիտակցութեան կեդրոնացման ժամանակ գրգռուում են նեարդային կեդրոնների և զգայարանների որոշ տեղերը: Գիտակցութեան ծաւալն էլ զանազան անձանց մօտ և տարբեր ֆիզիոլոգիական պայմաններում ներկայացնում է անհատական աչքի ընկնող տարբեր աստիճաններ (տատանումներ):

Վարժութիւնը այստեղ էլ զգալի ազդեցութիւն է ունենում. մարդիկ, որոնք իրենց ուշադրութիւնը միշտ մարզում են որոշ ուղղութեամբ, գիտակցութեան ծաւալը զգալի կերպով ընդարձակուում է՝ օրնկ. երաժիշտները ընդունակ են միաժամանակ ըմբռնելու շատ բարդ մեղեդին և նկատելու բազմաթիւ ձայներից իւրաքանչիւրի շեղումն ըստ յատկութեան:

Տեսողական մտապատկերների վերաբերութեամբ գիտակցութեան ծաւալի ընդարձակման որպէս պայծառ ապացոյց կարող են ծառայել յայտնի շախմատ խաղացողները, որոնց գիտութիւնը ամենից առաջ հիմնուած է գիտակցութեան տեսողութեան շրջանում բարդ դասաւորութիւններ համադրելու և այդ խմբերը գիտակցութեան մէջ պահպանելու մէջ:

Ժառանգականութեան շնորհիւ գիտակցութեան ծաւալի այդ աստիճանական զարգացումն կարող է անցնել սերնդէ սերունդ և պայծառանալ ցեղերի մէջ: Գիտակցութեան ծաւալի այդպիսի ընդարձակումն իւր կարգին պէտք է կապուած լինի ամբողջ մտաւոր գործիքի զգալի զարգացման հետ և պէտք է աղբիւր դառնայ բարձր ընդունակութեանց: Կը փորձենք գիտակցութեան այդ երկու հիմնական յատկութիւնները—նրա անկայունութիւնն ու ծաւալի սահմանափակութիւնը կապել միևնոյն սկզբունքի հետ:

Գիտակցութեան իւրաքանչիւր երևոյթի անկայունու-

թիւնը կարող է կախուած լինել հոգեկան կեանքի բաժան տարրերի գաղտնի կռուից, որոնցից իւրաքանչիւրը ձրգտում է անցնել գիտակցութեան շրջանակը:

Այդպիսի կռուի գոյութիւնը ապացուցուում է ինքնադիտողութեան բազմաթիւ փաստերով: Երբեմն՝ գիտակցութեան շրջանակից աւելի ուժեղ մտապատկերներով հալածուած թոյլ տպաւորութիւնը՝ շրջապատող միջավայրերից օժանդակութիւն ստանալով՝ այն աստիճան ուժեղանում է, որ նորից յաղթանակ է տանում իւր հակառակորդների դէմ, որոնք տեղ էին գրաւում գիտակցութեան մէջ, հալածում է նրանց այդտեղից և ինքն է բռնում նրանց տեղը: Բայց դժուար չէ նկատել, որ գիտակցութեան ծաւալի սահմանափակութիւնը նոյնպէս ցոյց է տալիս հոգեկան աշխարհի զանազան մտապատկերների փոխադարձ կռիւր, որոնք ձգտում են նուաճել գիտակցութեան շրջանակը: Արդէն հին դիտողները նկատել են այն փաստը, որ երբ մտապատկերը կամ զգացմունքը թափանցում են գիտակցութեան շրջանակը, իսկոյն այն տեղից վանում են այն բոլորը, ինչ որ այնտեղ կար առաջուց և արգելք են հանդիսանում ուրիշ տպաւորութիւնների նոյն շրջանակը ներս թափանցելուն:

Մտապատկերների այս կռիւր գիտակցութեան մէջ, որ փոխադարձ արգելք է հանդիսանում նրանցից մի մասի միւսների վրայ ազդելուն, շատ գեղեցիկ կերպով նկարագրել է Հերբարտը, որը նոյն իսկ փորձում էր այդպիսի փոխազդեցութեան օրէնքներ և տարազներ (ֆօրմուլաներ) գտնել:

Ուշադրութեան և նրա ֆիզիոլոգիական յատկութիւնների ուսումնասիրութիւնը պարզեց նրա մէջ այն առանձնայատկութիւնը, որ ուշադրութեան իւրաքանչիւր գործողութիւնը բաղկացած է երկու հակառակ մոմէնտներից՝ մի կողմից հոգեբանական որոշ գործողութեան՝ մտապատկերի, մտքի կամ կամքի ձգտման վրայ կեդրոնացած ուշադրութիւնից, որը ձգտում է վերարտադրել այդ գործողութիւնը գիտակցութեան շրջանակում, միւս

կողմից հէնց նոյն ուշադրութիւնը ճնշում է, թուլացնում ներքաշինն ու հոգեբանական միւս գործողութիւնները, կասեցնում է նրանց մուտքը գիտակցութեան մէջ և թուլացնում այն տղաւորութիւններ գիտակցելու աստիճանը, որոնք գրանից առաջ գտնուում էին այնտեղ: Ուրեմն հոգեբանական երևոյթների գիտակցութեան մէջ թափանցելու կռիւր, կռիւ այն երեոյթների մէջ, որոնք տրդէն թափանցել են գիտակցութեան մէջ, կազմում է գիտակցութեան անկայունութեան և նրա ծաւալի սահմանափակութեան պատճառը:

Գիտակցութեան տիրանալու կռիւր—ահա այն յատուկ հիմունքը, որը բնորոշում է գիտակցութեան երևոյթների ամբողջ աշխարհը:

Կրկին մի քայլ անենք մեր գիտակցութեան մէջ:

Այն բոլորը, ինչ որ ասուեց նախընթաց վերլուծութեան մէջ գիտակցութեան մասին, վերաբերում է ինքնագիտակցութեան, այսինքն սեփական անձը գիտակցելուն: Եւ թէպէտ մարդակազմութեան գիտութիւնը գեռչի յայտնագործել ինքնագիտակցութեան կազմութիւնը, բայց բազմաթիւ հիմունքներ կան կարծելու, որ վերոյիշեալ ամբողջ կռիւր կայանում է «ինքնագիտակցութեան» համար մղւած սոյքարի մէջ, որիչ խօսքով որ է մտապատկերի «ես»ի հետ լիակատար ձուլուիլը ներկայացնում է վերին ատիճանի անկայուն դրութիւն, որի համար անհրաժեշտ է ֆիզիոլոգիական մեղ անյայտ որոշ պոյմանների առանձին զուգակցութիւն: Այդ անկայունութեան պատճառով մեր գիտակցութեան մէջ կարող են մնալ մի կամ մի քանի մտապատկերներ՝ այն էլ շատ կարճ ժամանակով: Այստեղից է առաջ գալիս մտապատկերների անընդհատ փոփոխութիւնն ու իրար յաջորդելը, որոնք ժամանակաւորապէս ձուլւում են «ես»ի հետ և այդպատճառով թափանցում գիտակցութեան շրջանակը: ահա այստեղից է առաջ գալիս զանազան մտապատկերների մշտական կռիւր ինքնագիտակցութեան համար:

Մեր վերլուծութիւնը մեզ հասցրեց փոստամայն

անապատերի եզրակացութեան՝ որ գիտակցութեան սովորական առանձնայատկութիւնների մի ամբողջ շարքը—ինչպէս օրինակ նրա անկայութիւնը, նրա ծաւալի սահմանափակութիւնը և կռուի սկիզբը, վերջի վերջոյ հանգչում են մի ազբիւրի՝ գիտակցական իւրաքանչիւր երեւոյթի անխզելի կապի մեր անձնաւորութեան՝ մեր «ես»ի հետ: Անհատականութիւն և անձնականութիւն—ահա գիտակցութեան ամբողջ աշխարհի այսին ու քէն՝ նրա ամբողջական և իւրաքանչիւր մասնակի երևոյթի մէջ:

Գիտակցութեան անձնական և անհատական բնատրութիւնից է առաջ գալիս այն նշանաւոր առանձնայատկութեանց ամբողջ շարքը, որոնցով գիտակցութիւնը տարբերւում է ֆիզիքական աշխարհից:

Բնական աշխարհը մարդուս մտքին, նրա կուլտուրական զարգացման զանազան ատիճաններում ներկայանում է որպէս բաժան երևոյթների փոխադարձ խիստ կապի և օրէնքի թագաւորութիւն:

Դա անխուսափելիօրէն առաջ է գալիս նրանից, որ արտաքին աշխարհը մեզ երևում է կապակցած, անընդհատ մի ամբողջութիւն, որտեղ միևն անցնում է միւսի, որտեղ իւրաքանչիւր երևոյթը մի օգակ է մեծ շղթայի և մասնիկ մի մեծ ամբողջութեան: Ընդհատումների և դատարկ տարածութիւնների բացակայութիւնը բաժան առարկաների և երևոյթների մէջ՝ մարդուս մտքի մէջ բնական նարար առաջ է բերում այն համոզմունքը, որ արտաքին բնութեան մէջ ամեն ինչ կապուած է փոխադարձաբար, մի երևոյթից առաջ է գալիս միւսը և ինքն էլ կախումն ունի կամ ծագում է միւսից: Ահա այս է պատճառական կապի և օրէնքի թագաւորութեան ծագման ազբիւրը:

Այլ է մեր գիտակցութեան աշխարհում: Գիտակցութեան բաժան մօմէնտների հատուածականութիւնը, նրանց կղզիացած լինելը, փոխանցման բացակայութիւնը, անկայունութիւնը, նրանց յանկարծական յայտնուիլը գիտակցութեան մէջ, ուր նրանք յաճախ դուրս են լողում առանց արտաքին պատճառի, նրանց նոյնքան յանկարծական

չքանալը մեր գիտակցութեան շրջանակից, մեզ համար հասկանալի կապակցականութեան բացակայութիւնը՝ որպէս ներկայ վայրկեանին, այնպէս էլ նրանց ամբողջ տեւողութեան ժամանակ, նրանց ըստ ցանկութեան նորէն դուրս կոչելու համոզման բացակայութիւնը, վերջապէս նրանց անխղելի կապը մեր անհատականութեան հետ — այս բոլորը մեր գիտակցութեան աշխարհը դարձնում է ինչ որ դեռ մեզ անհասկանալի ոյժերի խաղասպարէզ:

Փոխանակ օրէնքի և պատճառական կապի՝ մենք այնտեղ տրամադիր ենք տեսնել «պատահականութեան» խաղակամայականութիւն», որն ուրիշ բան չի արտայայտում, քան օրէնքի և պատճառական կապակցութեան բացակայութիւն:

Մարդկային միտքը բնականաբար չի կարող հանգիստ մնալ այդպիսի բացասական վճիռ տալուց. միշտ աչքի առաջ ունենալով մեզ շրջապատող բնութիւնը, որտեղ իւրաքանչիւր նոր քայլը մեր առաջ բաց է անում օրէնքի և պատճառական կապակցութեան տիրապետութիւն, մարդս որոնում և գտնում է օրինականութեան և պատճառական կապակցութեան հետքեր նաև գիտակցութեան իւր ներքին աշխարհում: Գտնելով այդ հետքերը իւր ինքնագիտակցութեան անմիջական շաղկին, մարդս այստեղ էլ փորձում է ճշմարտութեան մօտենալ կողմնակի ճանապարհով, ուսումնասիրելով մարդկային հոգու արտաքին արտայայտութիւնները, մարդկային հոգու արդիւնքները: Այս գէպքում էլ, ինչպէս և ուրիշ բոլոր կէտերում, որտեղ անհատական գիտակցութեան ձայնը բաւական չէ ճշմարտութիւն հասկանալու, մարդս դիմում է հոգեկան երևոյթներ հասկանալու ամենաուժեղ զէնքի՝ ուրիշ մարդկանց հաւաքական հոգեկան կեանքի դիտողութեան:

Դիտելով այլ մարդկանց հոգեկան կեանքի բազմատեսակ արտայայտութիւնները, մենք զգալի չափով ազատւում ենք մեր սեփական գիտակցութեան խարուսիկ և կցկտուր ցուցումներից և այստեղ էլ մեր առաջ հանդէս

են գալիս օրէնքի և պատճառական կապի նոյն սկզբունքների իշխանութեան հետքեր, որոնց մենք հանգիպում ենք ֆիզիքական աշխարհում:

Այդ ճանապարհը դանդաղ է և դժուարին: Մարդկութեան մտաւոր զարգացման ամբողջ պատմութիւնը պատկերացնում է այդ երկու տրամադրութեան կռիւր՝ որոնցից մինը ծագում է անմիջական ինքնագիտակցութեան ձայնից, իսկ միւսը հետևանք է այլ մարդկանց հոգեկան աշխատանքի և գիտակցական կեանքի առարկայական դիտողութեան: Առաջին տրամադրութիւնը ծնունդ է տալիս ցնորքների մի ամբողջ շրջանի, որոնք ահագին դեր են կատարում մարդու ընկերվարական կեանքում — այդպէս է մեծ և գուցէ յաւիտենական ցնորքը «կամքի ազատութեան» մասին, ցնորք, որը քողարկում է այն իրողութիւնը, որ մեր անմիջական ինքնագիտողութիւնը մեր սեփական գիտակցութեան մէջ երեւան չի հանում մեր ցանկութիւնների և դրդիչների պատճառական կապը մեզանից դուրս եղած երևոյթների կամ պատճառների հետ:

Ճիշտ է, այժմս աւելի քան երբ և իցէ ժամանակակից մարդկութիւնը անցնում է նոր աւելի առարկայական (օբեկտիւ) հայեացքներ մշակելու մի շրջան այդ խնդրի մասին, օրէցօր անհատական ցնորաբանութիւնը տեղի է տալիս աւելի օբեկտիւ հայեացքների: Հաւատը դէպի կամայականութիւն, որը կամքի ազատութիւն է կոչուում, տեղի է տալիս այն համոզման, որ մեր վճիռների և ճշգտումների մէջ թագաւորում է օրէնք և պատճառական կապը: Սակայն չենք կարող մեզանից ծածկել, որ այս մասում մարդկութեան մեծամասնութիւնը դեռ կանգնած է նախնական աստիճանի վրայ և դեռ չի հասել այն գաղափարի, որ հոգեկան աշխարհը կառավարւում է նոյնքան որոշ և անփոփոխ օրէնքներով, ինչպէս և ֆիզիքական շօշափելի աշխարհը:

Ղեկավարուելով աստիճանական զարգացման տեսակէտով, նկատելով մարդկային ցեղի բնութեան զարգաց

ման մէջ նոյնքան անշեղ կատարելագործութիւն, ինչպէս
 և ֆիզիքական աշխարհում, մենք կարող ենք յոյս տա-
 ծել, որ մարդու իրեն հոգեկան աշխարհի մէջ թափան-
 ցելու ընդունակութիւնը, նրա՝ գիտակցութեան տարբեր
 երևոյթների և մոմէնտների միջի փոխադարձ կապը հաս-
 կանալու գիտութիւնը աստիճանաբար և անընդհատ կաճի
 և կը զարգանայ, հետեւելով՝ թէկուզ դանդաղ, մարդու
 յառաջադիմութեան և շրջապատող բնութիւնը հասկանա-
 լու նրա միշտ աճող ընդունակութեան:

Իսկ առ այժմս պէտք է չմոռանանք այն անվիճելի
 հանգամանքը, որ ֆիզիոլոգիական և հոգեբանական բազ-
 մաթիւ առանձնայատկութիւնների շնորհիւ՝ մեր անմիջա-
 կան գիտակցութեան մէջ քննուող հոգեկան աշխարհը մեծ
 ընդգիտադրութիւն է ցոյց տալիս իւր վերաբերութեամբ
 էլ գործադրելու իւրաքանչիւր գիտութեան հիմնական
 սկզբունքը՝ պատճառական կապակցութեան օրէնքը:

Մեզ շրջապատող աշխարհի բոլոր առարկաներն ու
 երևոյթները մենք պատկերացնում ենք դասաւորուած
 ասարածութեան մէջ, որոնք կատարուում են ժամանակի
 ընթացքում. առարկաները փոխում են իրենց դիրքն ու
 ձևը՝ այդ նշանակում է, որ փոփոխուում է նրանց տա-
 րածութիւնը, փոփոխուում նրանց գծերը: Դէպքերն իրարից
 բաժանուած են ժամանակի որոշ տեսողութեամբ: Մեզ
 համար ամբողջ արտաքին աշխարհը առարկաներով և նրանց
 շարժման ուրուագծերով լեցուն մի տարածութիւն է: Սա
 կայն արտաքին աշխարհը մենք կարող ենք երեւակայել
 առանց ժամանակի. իւրաքանչիւր վայրկեանում վերցրած
 աշխարհը ըմբռնելու համար հարկաւոր է մի միայն տա-
 րածութիւն, առանց որոյ մենք չենք կարող երեւակայել,
 որ մեզանից դուրս գոյութիւն ունի որ և է առարկայ,
 մանաւանդ բազմաթիւ առարկաներ:

Նոյն իսկ շարժումը կարելի է ենթադրել առանց
 ժամանակի. եթէ մեզ շրջապատող բնութեան բոլոր երե-
 ւոյթները սահմանափակուէին մի միայն շարժմամբ, միայն
 ձևերը փոփոխելով, որ նոյն ուրուագծերի փոփոխութիւն է,

աշխարհը կարելի կլինէր երեւակայել առանց ժամանակի:

Ուրեմն սրտեղից է ծագում ժամանակի մասին դա-
 դափարը, որը մեր գիտակցութեան մէջ ձուլուած է ար-
 տաքին աշխարհի պատկերացման հետ և ձուլուած այն-
 պէս, որ վերջինս մեզ արտաքոյ ժամանակի անհասկանալի
 է թւում: Այդ կարելի է ասել մանաւանդ շարժման մա-
 սին, որը նոյն իսկ գիտնականների, մատիմատիկոսների
 աչքում անհասկանալի է թւում:

Այդ հարցի պատասխանը մեզ տալիս է մեր գիտակ-
 ցութեան վերլուծութիւնը: Ինչպէս որ տարածութիւնը
 արտաքին աշխարհի մասին հասկացողութիւն ունենալու
 անպայման անհրաժեշտ տարրն է, այնպէս էլ ժամանակը
 ներկայացնում է այն տարրը, առանց որոյ անհասկանալի
 է մեր գիտակցութեան մէջ որ և է երևոյթի գոյութիւնը:

Կարիք չկայ տպացուցանելու, որ մեր ներքին աշ-
 խարհն ու գիտակցութիւնը կարիք չունին տարածութեան
 գաղափարի: Երբ մենք գտնուում ենք բազմաթիւ տպաւո-
 րութիւնների ներքոյ, զգում մտքերի հոսանք, գիտու-
 թեանց աւելի մեծ պաշար ունինք, յիշողութեամբ մենք
 այդ բոլորը կարող ենք դուրս կոչել գիտակցութեան մէջ,
 միանգամայն զանց առնելով տարածութեան գոյութիւնը:

Նրա փոխարէն մենք մեր գիտակցութեանց մէջ կա-
 տարուող երևոյթները գնահատելիս՝ երբէք չենք կարող
 առաջնորդուել առանց ժամանակ երեւակայելու: Գիտակ-
 ցութեան շրջանը զանազան զգացմունքների և մտապատ-
 կերների կուռի դաշտն է հոգեբանական այն երևոյթների
 հետ, որոնք ձգտում են տիրանալ գիտակցութեան շրջա-
 նակին: Հէնց որ մի մտապատկեր մուտք է գործում՝ գի-
 տակցութեան մէջ, իսկոյն հարածում է այնտեղ եղածը:

Մենք այդ երկու մտապատկերներն ըմբռնում ենք՝
 մինը որպէս նախընթաց, միւսը որպէս յետնորդ՝ որպէս
 յաջորդող գիտակցութեան շրջանում. նրանցից մինը այն-
 տեղ էր գտնուում նախքան, միւսը յետոյ, նրանց փոխա-
 դարձ կապը մեզ հասկանալի է որպէս ժամանակի տես-
 ղութիւն՝ հոսանք. եւ այն բոլորը, ինչ որ կատարուում է

գիտակցութեան մէջ, մենք այլապէս չենք կարող ըմբռնել և հասկանալ քան որպէս ժամանակի ընթացքում դասաւորուած՝ — ըստ ժամանակի զետեղուած:

Եւ ինչպէս որ արտաքին աշխարհի առարկաների դասաւորութեան մէջ իւրաքանչիւր փոփոխութիւն մեզ ներկայանում է որպէս շարժում, այնպէս էլ իւրաքանչիւր ձեւափոխութիւն, ամեն մի նոր քան, որը կատարուում է գիտակցութեան մէջ. մենք ըմբռնում ենք որպէս փոփոխութիւն: Փոփոխութիւնը գիտակցութեան ըստ ժամանակի շարժումն է. շարժումը բնութեան տարածական երևոյթների փոփոխութիւն է: Գիտակցութեան մէջ կատարուած փոփոխութիւնը համապատասխանում է բնութեան մէջ կատարուող շարժման: Եւ ճիշտ այն ձևով, ինչպէս որ տարածութեան մասին հասկացողութիւնը կազմակերպուել է շարժման տպաւորութիւնից, նոյն ձևով էլ ժամանակի գաղափարը գիտաւորապէս մշակուել է գիտակցութեան մէջ կատարուող փոփոխութիւններից:

Ժամանակին այն ներքին միջոցն է, որը հարկաւոր է գիտակցութեան երևոյթները՝ հէնց գիտակցութեան մէջ զետեղելու համար, ճիշտ այնպէս, ինչպէս որ տարածութիւնը այն արտաքին միջավայրն է, որտեղ թէ մտքով և թէ տեսողապէս մենք զետեղում ենք մեզ շրջապատող ֆիզիքական աշխարհի պատկերները:

Ինչպէս որ առանց տարածութեան չի կարելի մտածել և երևակայել արտաքին բնութիւնը, այնպէս էլ առանց ժամանակի մասին հասկացողութեան չի կարելի մտածել սեփական ներքին գիտակցութեան մասին: Այդ մտքով յաւիտեան կը մնայ Կանտի մեծ ծառայութիւնը, որը կարողացաւ բաժանել տարածութեան և ժամանակի մասին հասկացողութիւնը և ճանաչել նրանց մէջ մեր մտածողութեան՝ կամ աւելի ճիշտն ասած, մեր ըմբռնողութեան երկու հիմնական ձևեր:

Կանտն այդ հասկացողութիւններն ընդունում էր որպէս ստորագրութիւններ, այսինքն բնածին ձևեր, որոնք գիտակցելու պրոցէսի նախընթաց են: Կանտի կարծիքով

տարածութեան և ժամանակի մասին հասկացողութիւնը հանդիսանում է արտաքին և ներքին փորձերից առաջ նախապատրաստուած, որը միայն լրացնում է այդ ձևերը:

Մարդկային հոգու բնութեան և գիտակցութեան զարգացման յատկութիւնների մասին մեր ունեցած գիտութեան ներկայ կացութեամբ, մենք ի հարկէ չենք կարող մնալ նոյն հայեցակէտի վրայ, որի վրայ կանգնած էր Կանտը:

Նախ և առաջ մենք այլ ևս չենք ընդունում մտքի որ և է ձևերի գոյութիւնը վերջինիցս դուրս, ինչպէս որ չենք խօսում որ և է վերացական գիտակցութեան մասին, այլ գիտակցութիւն ասելով միշտ ըմբռնում ենք որոշ փոքրիշատէ թանձրացեալ կամ հասկանալի բովանդակութիւն:

Նոյն ձևով մենք չենք ընդունում որ և է, թէկուզ ամենաընդհանուր հասկացողութեանց կանխածագումն, հետևապէս և չենք կարող ընդունել, որ տարածութեան և ժամանակի մասին հասկացողութիւնները կարողանային առաջ դալ առանց մարդկային փորձառութեան մասնակցութեան:

Մարդկային մտքի վերջին յիսուն տարուայ ընթացքում ձեռք բերած ամենագնահատելի գանձն է ֆիզիքական բնութեան բոլոր երևոյթների մէջ աստիճանական զարգացման ընթացքի ըմբռնողութիւնը և նոյն այդ օրէնքի գործադրութեան ճիգը հոգեկան աշխարհի և գիտակցութեան երևոյթների վերաբերութեամբ:

Այդ աստիճանական զարգացման ուղղութեան՝ էվոլյուցիայի ազդեցութեամբ՝ տարածութեան և ժամանակի գաղափարների ծագման խնդիրը նոր ուղղութիւն ստացաւ՝ — գենետիքական՝ սկզբնաւորական: Մենք այդ երկու հասկացողութիւններն այլ ևս անշարժ մեծութիւններ չենք ընդունում, այլ ձգտում ենք՝ նախ թափանցել նրանց ծագման գաղտնիքի մէջ, ուսումնասիրում ենք նրանց ծագման բնական և հոգեբանական պատճառները. երկրորդ՝ որ առանձնակի մեծ նշանակութիւն ունի և այն էլ զուտ

գործնական, մենք ընդունում ենք այդ մտապատկերները
ապագայ ձևափոխութիւնը:

Այդ նկատողութիւններով բաւականապէս, մենք
միայն կը կրկնենք, որ ժամանակն ու տարածութիւնը ֆի-
զիքական աշխարհի և գիտակցութեան ամենաբնորոշ նշան-
ներ են, իսկ այն վիճը, որը բաժանում է այդ երկու հաս-
կացողութիւններն ու մտապատկերներն իրարից, միևնոյն
ժամանակ ծառայում որպէս անանցանելի սահման, որով
բաժանուած են իրարից բնական և գիտակցական աշ-
խարհները:

Սակայն մենք գիտենք, որ արտաքին աշխարհի մասին
մեր ունեցած տպաւորութիւնների մէջ՝ բացի տարածու-
թիւնից՝ մասնակցում է և ժամանակի գաղափարը: Երբ
մենք տեսնում ենք մեր առաջ կատարուող շարժումը,
կամ երբ ինքներս շարժում ենք առաջ բերում, ժամա-
նակի գաղափարը միշտ՝ ինչպէս մեր տպաւորութիւնների,
այնպէս էլ այդ շարժման մասին արած գատողութիւնների
ժամանակ, մեր մտքից անբաժան է: Մեր բնական գիտու-
թեան մէջ (մեխանիկա), որն ուսումնասիրում է շարժումը
տարածութեան մէջ, ոչ մի քայլ անել չի կարելի առանց
արագութեան գաղափարի, այսինքն այն ժամանակամի-
ջոցի, որի ընթացքում կատարւում է շարժման մի միու-
թիւնը—անցնում են տարածութեան մի միութիւնը:

Երբ մենք մտածում ենք մեզ շրջապատող բնութեան
մէջ կատարուող դէպքերի, տարուայ եղանակների, պտուղ-
ների և բանջարների աճման, պտտմական անցքերի, մեր
սեփական կեանքի մէջ կատարուող փոփոխութիւնների
մասին, մենք ոչ մի վայրկեան չենք կարող առանց ժա-
մանակի ղեկավարուել, որը մեզ և մեր գիտակցութեան
համար բնական նոյնքան անհրաժեշտ ֆակտոր է, ինչպէս
և տարածութիւնը:

Որպէս զի այս խնդիրն աւելի պարզ լինի մեզ հա-
մար, պէտք է ի նկատի ունենալ, որ այն բոլոր մտքերը,
որ մենք ունինք մեզ շրջապատող բնութեան մասին, ոչ
այլ ինչ են, եթէ ոչ մեր տպաւորութիւններից և զգաց-

մունքներից՝ այսինքն մեր գիտակցութեան տարրերից հա-
նած եզրակացութիւններ:

Բնութեան մասին մեր ունեցած տեղեկութիւնների
միակ ազդեւորը այն զգացողութիւններն են, որոնք առաջ
են գալիս մեր զգայարանների մէջ արտաքին առարկաների
չնորհու: Ինչպէս ծայրահեղ իգէպլիստներն են տաում, այդ-
ի հարկէ չի նշանակում, որ մենք իրեն՝ բնութեան մասին
ոչինչ չը գիտենք, որ մենք գիտենք մի միայն մեր գիտակ-
ցութեան դրութիւնը: Այդպիսի հայեացքը միակողմանի
է: Մեր զգայութիւնները ծառայում են որպէս նիւթ,
որոնցից մենք եզրակացութիւններ ենք հանում արտաքին
բնութեան յատկութիւնների մասին: Եւ եթէ բնութեան
մասին մեր գատողութիւններն իրենց մէջ չեն կարող բու-
վանդակել ոչ մի բան, որի ծագումը մեր տպաւորութիւն-
ներից չը լինի, այդ դեռ չի նշանակում, որ բնութեան
մասին մեր ծանօթութիւնն ու հասկացողութիւնը հասա-
րակ արտացոլացում է այն բանի, ինչ որ բովանդակում
է գիտակցութեան մէջ: Եւ թէպէտ «արտացոլացումն»
բառը արգէն գործածական է գարձել և քաղաքացիակա-
նութիւն գտել, սակայն աւելի ուղիղ կլինէր եթէ այդ-
երևոյթը մենք մեր զգացմունքների բեկումն անուանե-
ինք: Յստեանայն դէպս կասկած չկայ, որ արտաքին բնու-
թեան մասին մեր տպաւորութիւնները մշակելիս՝ մեր
զգացմունքների յատկութիւնները շատ նշանաւոր դեր են
կատարում:

Ահա թէ ինչու մեզ չը պէտք է զարմացնի այն հան-
գամանքը, որ բնութեան մասին մեր ունեցած հասկացո-
ղութեան մէջ մտնում են գիտակցութեան տարրեր և այդ-
տարրերի մէջ յայտնի տեղ է բռնում ժամանակը, որը
մենք փոխադրում ենք արտաքին աշխարհի և այնքան սեր-
կապակցում բնութիւն պակերացնելիս, որ մենք նոյն
խոսքով մտնում ենք այդ Քալիսորի անձնական (սուրբկ-
սիս) ծագումը, և նրա մէջ սովորում ենք տեսնել ֆիզի-
քական աշխարհի անխոզելի յատկութիւններից մինը: Գի-
տակցութեան յատկութիւնների այդ կերպ արտաքին

աշխարհ փոխադրելը ներկայ դէպքում է աւելի բարդ գործողութեան մի միայն մի արտայայտութիւն, որի շնորհիւ մենք գիտակցութեան անգիտակցական բովանդակութիւնը փոխադրում ենք արտաքին աշխարհի մասին մեր ունեցած տպաւորութիւնների վրայ:

Մի փոքր կանգ առնենք փոխարկութեան այս գործողութեան վրայ. մանուկների և անասունների գիտակցութեան երևոյթների զանազան շրջաններում կատարած ասուումնասիրութիւնը մեզ հասցնում է այն եզրակացութեան, որ գոյութիւն ունի գիտակցութեան աստիճանների մի ամբողջ ժայռ՝ գիտակցութեան սկզբնական նշոյլներից մինչև նրա բարձր արտայայտութիւնը չափահաս և նորմալ մարդու մէջ: Ստոր աստիճանի վրայ՝ մանուկների մօտ, մենք գիտակցութիւնը գտնում ենք այն շրջանում, երբ նա չի շոկում «ես»ի և ոչ «ես»ի տարբերութիւնը, երբ դեռ չի կարող տարբերել իւր անձնական գիտակցութիւնը այն բանից, ինչ որ արտաքին աշխարհներին է վերաբերում. երբ որ նորածին մանկան աչքի առաջ անցնում է շարժուն առարկան, նա տեսնում է առարկան, այսինքն նրա գիտակցութեան մէջ ստացւում է պատկեր, բայց նա դեռ որոշ ուղղութիւն չի ստացել, դեռ մի տեղ չի տեղաւորւում: Այդ ժամանակ դեռ սեփական «ես»ի մասին հասկացողութիւն չկայ:

Գիտակցութեան ստորաբաժանումն սեփական «ես»ի և «արտաքոյ ես»ի դեռ հաստատուած չէ: Մանուկներին գիտելիս մի միայն չորրորդ տարում խիստ կերպով դատւում՝ բաժանւում է գիտակցութեան մէջ անձնական—անհատականը՝ առարկայականից և արտաքինից: Այն, ինչ որ մարդուս կեանքում կատարւում է չորս տարուայ ընթացքում, անասունների աստիճանական զարգացման մէջ դրաւում է բազմաթիւ դարեր: Նոյն իսկ գիտակցութեան վերլուծութիւնը երկու առանձնացած մասերի՝—անձնականի և առարկայականի, «ես»ի և «արտաքոյ ես»ի, ակնբերե է, որ գիտակցութեան զտման մի երկարատև և բարդ (պրօցէսի) գործողութեան վերջին աստիճանն է. Որքան

աճում է փորձառութիւնը, այնքան էլ գիտակցութեան իւրաքանչիւր գործողութեան մէջ՝ լինի նա տպաւորութիւն, զգացողութիւն կամ շարժուելու ձգտումն, աւելի և աւելի որոշակի են առաջ գալիս այն նշանները, որոնցով անձնականը տարբերւում է առարկայականից: Ամենամեծ չափով զտւում են և կարգաւորւում այն զգայութիւնների և տպաւորութիւնների շրջանները, այսինքն գիտակցութեան այն գրութիւնները, որոնք միշտ կապուած են արտաքին բնութեան մեզ վերայ ունեցած ազդեցութեան հետ: Ահա այստեղ է երևան գալիս հոգեկան այն հիմնական անըմբռնելի ընդունակութիւնը, որտեղից և ծագում է արտաքին աշխարհի մասին հասկացողութիւնը: Վրկնում ենք՝—որոշ զգացողութիւնները կամ տպաւորութիւնները արտաքին աշխարհի մասին հասկացողութիւն են դառնում միայն այն վայրկենից, երբ նրանք հեռացւում և նկատւում են մեր «ես»ից հեռու՝ որոշ տարածութեան վրայ:

Մինչ այդ վայրկեան, քանի որ նրանց նկատում ենք մեր գիտակցութեան հետ ձուլուած և մեզանից չենք հեռացնում, նրանք դեռ արտաքին աշխարհի մասին հասկացողութիւններ չեն:

Դժուար է յուսալ, որ մենք մօտ ապագայում կըկարողանանք թափանցել փոխադրութեան այդ խորհրդաւոր գործողութեան կուլիսների ետևը, որի գործարանը գիտակցութիւնից դուրս՝ ինչ որ տեղ է գտնւում, թէ և նրա գործունէութեան արդիւնքներն արտայայտւում են գիտակցութեան մէջ: Մենք առ այժմս պէտք է բաւականանանք նրանով, ինչ որ ունինք գիտակցութեան աստիճանական զարգացման գիտողութեան շնորհիւ՝ այն է ապացոյցներով, որ այդպիսի գործողութիւններ կատարւում են:

Գիտենալով այդ գործողութեան գոյութիւնը, մենք չենք զարմանալ, երբ բնութեան մասին մեր ունեցած մտապատկերների մէջ նկատենք գիտակցութեան յատկութիւններից մինի՝ ժամանակի ֆակտորի ներկայութիւնը:

Սակայն ժամանակի մտապատկերի արտաքին աշ-

խարհի երևոյթները մէջ փոխադրելը պահպանուած է
դարձեալ մի յատուկ ազգիւրի՝ արտաքին առարկաների
շարժման երևոյթով:

Երբ որ և է առարկան՝ գիշուք երկնքի լուսատուն,
շարժուած է տարածութեան մէջ, ստանում ենք յաջոր-
դական տպաւորութիւնների մի ամբողջ շարք, տպաւորու-
թիւնների, որոնք շարուած են մեր գիտակցութեան մէջ
և շարժուած ըստ ժամանակի: Երկնային լուսատուների՝
մանաւանդ արևի կանոնաւոր շարժումը՝ մարդուս մտաւոր
դարգացման հէնց առաջին աստիճաններին՝ սերտ կապ է
հաստատել արտաքին տարածութեան մէջ կատարուող
շարժման և մեր տպաւորութիւնների ներքին ընթացքի
մէջ ժամանակի (կերպարանքով) ձևով: Նոյն իսկ այն հա-
մագմունքը գոյացաւ, որ արտաքին տարածութիւնը և հա-
մապատասխան ժամանակի միութիւնը կարելի է իրարով
չափել: Ժամանակն ու տարածութիւնը կարծէք համապա-
տասխան մեծութիւններ են դառնում, որոնք ընդունակ
են իրար փոխարինելու. ժամանակի և տարածութեան
չափը դառնում է փոխադարձ՝ նման մեծութիւն: Փոքր
առ փոքր մոռացւում է այն հանգամանքը, որ հէնց ար-
տաքին շարժման մէջ ոչ մի ժամանակ գոյութիւն չունի,
որ ժամանակը արտաքին բնութեան մէջ կատարուող փո-
փոխութեան համապատասխան ներքին իրողութիւն է:

Միանգամայն աննկատելի կերպով է կատարուած
գիտակցութեան և արտաքին ֆիզիքական երևոյթի ձուլ-
ման գործողութիւնը և ժամանակը փոխադրութեան օրէն-
քով տարւում է արտաքին աշխարհ և դառնում՝ տարածու-
թեան գուղընթաց:

Նրա փոխարէն գիտակցութեան շրջանում (սֆերա-
յում) ժամանակն իշխում է մշտապէս անբաժան, որով-
հետև հոգեբանական երևոյթների մէջ տարածութիւն
փոխադրելը նոյն իսկ երևակայել չի կարելի:

Մի հայեացք ձգելով մտաւոր և ֆիզիքական աշխարհ-
ների տարբերութեան մասին բոլոր ասածների վրայ, մենք
համոզուած ենք, որ առաջին հայեացքից մեզ բազմաթիւ

երևցող տարբերութիւնները ունին մի ծագումն՝ մի հիմք,
գիտակցութեան մի հիմնական յատկութիւն՝ — անձնակա-
նութիւնը: Այդ անձնականութիւնը ամենալրիւ և շօշա-
փելի կերպով արտայայտուած է գիտակցութեան այն ան-
հատի մէջ բացարձակ վակուած լինելում, որի մէջ նա
ծնուած է ու արտայայտուած: Այդ կատարեալ կղզիացումն
է, որ կազմում է գիտակցութեան անհատականութեան
հիմքը: Գիտակցութիւնս գոյութիւն ունի մի միայն ինձ
համար և ուրիշ ոչ ոքի: Ինչքան էլ բուռն կերպով ցանկա-
նանք մեր գիտակցութիւնը հաղորդել ուրիշ մարդկանց,
ինչքան էլ մեծ ճիգ գործ դնենք այդ բանի վրայ, մենք
չենք կարող մեր ներքին աշխարհը բանալ նոյն իսկ մեզ
ամենամօտ անձանց: Մենք այդ գոյութիւնը մի որոշ
աստիճան վերացնում ենք՝ աշխատելով արտայայտութեան
բազմատեսակ միջոցներով՝ շարժումների, բառերի, վար-
մունքի և այլն շնորհիւ դուրս կոչել ուրիշների գիտակ-
ցութեան մէջ գէթ գուշակութիւն այն բանի, ինչ որ կա-
տարւում է մեր հոգու մէջ: Մենք փորձում ենք մեր
գիտակցութեան համապատասխան տրամադրութիւն դուրս
կոչել նաև ուրիշ մարդկանց հոգու մէջ: Մեր բոլոր դա-
տողութիւնները գիտակցութեան և առհասարակ այլ
մարդկանց հոգեկան կեանքի մասին մի միայն գուշակու-
ղական, ենթագրական և միջակ բնաւորութիւն ունեն,
որովհետև գիտակցութեան աշխարհը վերջիվերջոյ մնում
է փակ, անթափանցելի մի թաղաւորութիւն, որը մատ-
չելի է մի միայն մի անձի՝ այդ աշխարհի սեփականատի-
րոջ համար:

Գիտակցութեան անհրաժեշտութիւնը ահագին հե-
տեանքներ ունի մարդկային կեանքի ամբողջ կազմակեր-
պութեան համար և կազմում է ամենադժուար յաղթա-
նակելի արգելքներից մինը մարդկային գիտակցութեան
ներքին աշխարհն ուսումնասիրելու շաղի վրայ:

Կարիք չկայ պնդելու այն մեծ նշանակութիւնը, որ
ունի խմբակցական աշխատանքն ու ընդհանրապէս խմբակ-
ցական կեանքը մարդկութեան զարգացման համար և թէ

այդ խմբակցականութեան գործում որպիսի մեծ արգելք էր հանդիսանում մարդկութեան զարգացման ստոր աստիճաններին անհատական գիտակցութիւնն ուրիշներին յայտնելու, հաղորդելու անհնարինութիւնը:

Մարդկութեան ամբողջ պատմութիւնը՝ նրա վայրենութիւնից սկսած մինչև մեր օրերը՝ կարող է քննուել որպէս մարդկանց մտքերի, զգացմունքների և ցանկուկութիւնների փոխանակութեան միջոցների աստիճանական զարգացման և կատարելագործութեան պատմութիւն: Լեզուն, թէ գիրը, թէ գեղարուեստն ու երգեցողութիւնը, թէ պարերն ու միմիկան և այլն՝ մարդու համար իւր մերձաւորի հոգեկան աշխարհի մէջ թափանցելու միջոցներ են: Այդ մերձեցման և թափանցելու գործողութիւնը գեռ ց'այսօր աւարտուած չէ. դրան պարզ ապացոյց են նորագոյն գիւտերը՝ հեռագիրը, հեռախօսը և ձայնագիրը (ֆօնոգրաֆը):

ԳԼՈՒԽ IV.

Հոգեկան երեւոյթների ուսումնասիրութիւնը.

Այժմս դառնանք խնդրի միւս կողմին, տեսնենք թէ գիտակցութեան փակ գրութիւնը որպիսի դեր է կատարում որպէս խոչնդոտ գիտակցութեան երևոյթներն հասկանալու, նրանց գիտնականօրէն ուսումնասիրելու և վերլուծելու համար:

Երբ մենք ծանօթանում ենք արտաքին օր և է առարկայի հետ, մենք այդ կարող ենք անել այլ անձանց հետ խմբակցաբար: Հազարաւոր մարդիկ կարող են միաժամանակ իւրացնել, տեսնել արևի խաւարումը, սքանչանալ ծիածանով, ուշադրել փոթորկի, լսել որոտը և այլն: Եւ թէև մենք ուղիղ ապացոյցներ չունենք, որ բոլոր գիտողները միեւնոյն բանն են զգում, բայց նրանք հնարաւորութիւն ունին ստուգելու իրենց տպաւորութեան և առաջ-

ներում ստացած նման տպաւորութեանց նոյնութիւնը: Հէնց միաժամանակ գիտելու հնարաւորութիւնը և խմբակցաբար ստացած տպաւորութիւնը զգալի կերպով նպաստում է մարդկանց աւելի առարկայօրէն հասկանալու բնութիւնը: Բացի դրանից միեւնոյն երևոյթն երբեմն հետևողաբար գիտում են զանազան անձինք, երբ որոշ երևոյթը հէնց որ անյայտանում է մէկի գիտողութեան շրջանակից, իսկոյն ընկնում է միւսի գիտողութեան շրջանը: Այդպէս ահա, անտառում ցրուած որսորդները իրար ետևից տեսնում են մօտով վազող զազանին: Այստեղ էլ շնորհիւ խմբակցական՝ թէև ոչ միաժամանակ կատարուած գիտողութեան, կողմնակի կերպով կազմում է խմբակցական գիտողութիւն, այսինքն՝ առաւել առարկայական, քան մի անձի գիտողութիւնը:

Բնութիւնը խմբակցաբար գիտելու հնարաւորութիւնը իւր կողմից ծառայում է որպէս աղբիւր, որից մարդիկ քաղում են համոզմունք բնութեան երևոյթների իրականութեան, նրանց մշտականութեան, նրանց առարկայականութեան և իւրաքանչիւր մարդու գիտակցութիւնից անկախ լինելու մասին առանձնապէս:

Միեւնոյն ժամանակ նոյն տարիկան զանազան անձինքները կողմից միաժամանակ կամ հետևողաբար գիտելու հնարաւորութիւնը տարբեր պայմաններում ընդարձակում է հէնց գիտողութեան գործողութիւնը, դարձնում նրան բազմակողմանի և աւելի լրիւ, և գիտողների մտքերի կողմնակի փոխանակութեան շնորհիւ ստեղծում է միջոց մեզ շրջապատող աշխարհի երևոյթներն աւելի լրիւ կերպով հասկանալու, քան թէ սուբեկտիւ՝ անհատական կերպով:

Դիտելու այդ բոլոր բարեյաջող հանգամանքները միանգամայն բացակայում են ինքնագիտողութեան ժամանակ, մինչդեռ ֆիզիքական բնութեան իւրաքանչիւր երևոյթը մատչելի է բոլոր մարդկանց և այն բարձր անասուններին, որոնք մարդու նման զգայարաններ ունին, գիտակցութեան երևոյթները կազմում են նրանց տիրոջ անկապտելի սեփականութիւն: Նոյն իսկ սեփական գի-

տակցութեան այն կողմնակի արտայայտութիւնը, որ մենք կատարում ենք շարժման, արտայայտութեան, խօսքի և այլ միջոցներով, որոնցով մարդս որոշ չափով թէև մասնակից է անում՝ այլ մարդկանց իւր գիտակցութեան, գտնուում է նրա անձնական իշխանութեան ներքոյ։ Բաւական է որ մարդս ցանկանայ բանալ իւր գիտակցութիւնը, կամ ծածկել ուրիշներից իւր տպաւորութիւնները, մտքերը, զգացմունքներն ու ցանկութիւնները և նա այդ անելու համար ահագին իշխանութիւն ունի իւր ձեռին։ Նա իւր մերձաւորներից կարող է ծածկել ոչ թէ միայն իւր գիտակցութիւնը, այլ գիտէ մոլորեցնել նրանց՝ տալով միանգամայն կեղծ ցուցումներ այն բանի մասին, ինչ որ կատարուում է իւր հոգու մէջ։

Այդ կողմից հոգեկան աշխարհը արտայայտում է մի յատկութիւն, որը Ֆիզիքական աշխարհին ծանօթ չէ։ Կեղծիքը բոլորովին ծանօթ չէ Ֆիզիքական աշխարհին. օգը չի կարող ջերմութեան բարձր աստիճան ցոյց տալ, երբ դուրսը սառնամանիք է, եղանակացոյցը (բարօմետրը) չի կարող լաւ եղանակ ցոյց տալ, երբ դուրսը անձրև է գալիս և այլն։

Կեղծիքի տխուր երևոյթը յատուկ է միայն հոգեկան աշխարհին և աճում է գիտակցութիւնն արտայայտելու միջոցների դարգացման և մարդու իւր եղբայրակիցների հետ շփուելուն զուգընթաց։ Մարդս ամենաընդարձակ չափով միշտ տէր է մնում այն գործիքի, որը ծառայում է նրան իւր հոգեկան աշխարհում կատարուածները շրջապատողներին հաղորդելու։

Բացի դրանից մարդս ինչքան էլ լարելու լինի իւր ոյժերը հաղորդակից անելու շրջապատողներին իւր գիտակցութեան հետ, նրան շատ հազիւ է յաջողում անել այդ շատերի համար։ Մեծաւ մասամբ նա հաղորդակցում է մէկ կամ մի քանի անձանց հետ, այնպէս որ նոյն իսկ միջակ և զուտ պայմանական կերպով մարդկանց՝ ուրիշի գիտակցութեան մէջ թափանցելը մասսայաբար (խմբովին) անկարելի է, մինչդեռ մեզ շրջապատող Ֆիզիքական աշ-

խարհի միաժամանակ դիտումն մասսայի համար միշտ հնարաւոր է։ Այդ պատճառով էլ գիտակցութեան արտաբերին արտայայտութիւնների համեմատութեան համար մեծ նիւթ չկայ, մինչդեռ մասսայական դիտողութիւնների այդպիսի համեմատութիւնն է կազմում արտաբերին աշխարհի մասին մեր դատողութեանց հիմքը։

Այստեղ պէտք է մատնացոյց լինել բնութեան մասին մեր ունեցած հասկացողութիւնների բնատրութեան վերաբերութեամբ բաւական տարածուած մի մոլորութեան վրայ։ Մեր զգացմունքների, տպաւորութիւնների, մտապատկերների մասին սովորաբար խօսում են այն մտքով, կարծէք այդ հոգեկան գործողութիւնները մեր անձնական բացառիկ սեփականութիւն և մեր անհատական գիտակցութեան ճիգերի և աշխատանքի արդիւնք լինին։ Բայց դրանում շատ լուրջ մոլորութիւն է ծածկուած։ Մեր անձնական փորձն ու մեր անձնական գիտակցութիւնը մեզ տալիս են մի միայն հում նիւթ. ճիշտ է, այդ հում նիւթի սկզբնական վերամշակութիւնը մեր անձնական հոգեկան անգիտակցական աշխատանքի արդիւնք է. բայց պարզ հասկացողութեան վերջնական մշակութիւնը մենք կատարում ենք այլ մարդկանց գիտակցութեան օժանդակութեամբ։ Նոյն իսկ հոգեբանական ամենատարրական գործողութիւնը երկու միանման զգացողութիւնների և տպաւորութիւնների հաստատութիւնը՝ օրինակ երկու տեւրի գոյների նոյնութիւնը մեր անձնական մտքի արդիւնք չէ, ինչպէս որ թւում է մեզ։

Նոյն իսկ հոգեբանական այդ պարզ գործողութեան ժամանակ մենք հիմք ենք ընդունում այլոց կօնտրոլի ենթարկող փորձերը, որով նրանք էլ ընդունում են այդ նոյնութիւնը։ Կօնտրոլի այդ գործողութեան որպէս պարզ ապացոյց կարող է ծառայել դալտօնական կոչուած երևոյթը, երբ անհատը զուրկ է գիտակցութեան մէջ որոշ տպաւորութիւններ ըմբռնելուց, օրինակ չի տեսնում կանաչ գոյնը, կամ աւելի ուղիղն ասած երկու գոյնն էլ միատեսակ է տեսնում։

Այդ անձինք, չընայեա՞ծ իրենց գիտակցութեան այդպիսի թերութեան, այնու ամենայնիւ առարկայօրէն տարբերում են բոլոր գոյները, կամ ճանաչում շրջապատող առարկաների մէջ. այդպիսի անձանց մէջ կան նոյն իսկ նկարիչներ, որոնք կանոնաւոր կերպով կազմում են այն ներկերի խառնուրդը; որն իրենք անձնականապէս իրարից լաւ չեն որոշում:

Ի՞նչպէս է այդ ձեռք բերում: Ակներև է որ դաւտօնականութեամբ հիւանդ անձանց անհատական պակասութիւնը լրացում է այլ մարդկանց ցուցումներով: Այն տպաւորութիւնների տարբերութեան պարզ նշանների բացակայութեան միջոցին, որոնք ստացւում են երկու տարբեր գոյներից, լրացւում է կօնտրոլի ենթարկող հոգեկան աշխատանքով՝ լոգիքական անգիտակցական գործողութեամբ, որն այդ տեսակ անձանց գիտակցութեան մէջ ինչ որ նոր նշաններ և գծեր է ստեղծում նրան անըմբռնելի այդ գոյների համար: Դալտօնիստներն ասում են, ես չեմ տեսնում որ տերևների այս գոյնը առանձին բան լինի—այն, ինչ որ ուրիշները կանաչ են կոչում, բայց ես գիտեմ, որ նա այդպիսի է, և ես՝ թէև չըզիտեմ՝ ինչու, բայց ամեն տեղ, ուր միայն սպասում եմ, որ նրանք կան, իսկոյն ճանաչում եմ: Պէտք է խոստովանել, որ ցայսօր դեռ շատ քիչ է ուսումնասիրուած, թէ գիտակցութիւնն իւր զարգացմամբ ինչ չափով է պարտական ուրիշ մարդկանց այդպիսի կրթիչ ազդեցութեան: Այդ դեռ ապագայի խնդիր է՝—բաժանել գիտակցութիւնը սկզբնական, անհատական տարրերի և երկրորդական՝ օժանդակ ֆակտօրի (գործօնի), որի շնորհիւ ստացւում է իսկական գիտակցութիւն, այսինքն գիտութիւն, որը սեփականութիւն է ոչ թէ մի անհատի հոգու, այլ շատերի խմբակցական հոգիների:

Անհատական գիտակցութեան շրջանակից դուրս չըգալով, մարդս այդ գիտակցութեան մի քանի յատկութեանց մէջ հանդիպում է լուրջ դժուարութիւնների այն երևոյթներն ուսումնասիրելիս, որոնցից բաղկացած է մեր

ներքին աշխարհը: Վերև մենք ցոյց տուինք գիտակցութեան բոլոր երևոյթների երկու առանձնայատկութիւնը՝— նրանց անկայուն՝ թռուցիկ լինելը և մեր անընդունակութիւնը նրանցից միաժամանակեայ ամբողջութիւն ձուլելու, այսինքն գիտակցութեան շրջանակի սահմանափակութիւնը կամ այսպէս կոչուած—գիտակցութեան միութիւնը:

Դժուար է ասել, թէ այդ երկու յատկութիւններից որն է աւելի խանգարում մեր ինքնիշխանութիւնը և ահագին խոչընդոտ հանդիսանում մեր ինքնագիտակցութեան և ինքնաճանաչութեան: Ամենից աւելի ակներև է գիտակցութեան անկայունութեան դերը, մեր անընդունակութիւնը պայծառ յայանագործելու գիտակցութեան որ և է դրութիւնը, որպէս զի մենք գիտակցութեան որ և է արդիւնքի (պաշարի) մասին կարողանանք պարզ հաշիւ տալ, մենք պէտք է ընդունակ լինենք պայծառ վերարտադրելու մտապատկերն ըստ ժամանակի—տեղական դարձնել ինքնագիտողութեան գործողութիւնը: Մենք արտաքին առարկաների վերաբերութեամբ այդ ընդունակութեամբ օժտուած ենք շատ ուժեղ կերպով: Յանկանալով ծանօթանալ ֆիզիքական որ և է երևոյթի կամ առարկայի յատկութիւնների հետ, մենք ըստ ցանկութեան կարող ենք երկար գիտել այդ երևոյթը, եթէ նա ինքը երկար է շարունակուում: Մենք կարող ենք կրկին դառնալ նրան և կրկին մեր ընդհատուած գիտողութիւնը, ոչ մի նման բան չենք կարող անել մեր գիտակցութեան դրութեանց վերաբերութեամբ:

Սակայն մենք կողմնակի հնարաւորութիւն ունինք փոքր ինչ տեղականացնելու այդ պայծառ յայտնագործութիւնը (ֆիզսոպիան) նախ գիտողութեան ժամանակամիջոցն երկարացնելով, այսինքն արտաքին առարկաների ցուցադրութեամբ և երկրորդ՝ մենք դիմում ենք այդ երևոյթների կամայական կրկնութեան: Թէև, ինչպէս վերը յիշեցինք, ներքին պատկերի ներքին վերարտադրութիւնը շատ էլ չի համապատասխանում առարկայի կամ պատճառի արտաքին ցուցադրութեան, այնուամենայնիւ

մենք այդ միջոցով որոշ կայունութիւն ենք ձեռք բերում գիտակցութեան թուօցիկ և անկայուն լինելու դէմ: Գուցէ այդ պատճառով հոգեբանական երևոյթների այդ դասակարգը՝ զգացողութիւնների, առարկաների պատկերները՝ միւսների համեմատութեամբ հասել են ամենամեծ զարգացման և մենք աւելի բարձր ընդունակութիւն և ոյժ ունենք տպաւորութիւնների (մտապատկերների) և զգացողութիւնների վերաբերութեամբ:

Իսկ որտեղ մենք զուրկ ենք այդ թոյլ օժանդակութիւնից, շատ անբարեյաջող պայմաններում ենք լինում մեր հոգեկան դրութեան յատկութիւնները որոշելու խնդրում, որից և առաջ են գալիս սխալներ, ցնորքներ, մեր շատ մտապատկերների ծայրահեղ թերութիւնն ու աղօտութիւնը և նրանց վրայ հիմնած գատողութեան կեղծիքը:

Ինքնագիտողութեան ոչ պակաս լուրջ արդեւք է հանդիսանում գիտակցութեան ծաւալի սահմանափակութիւնը՝—նրա «միութիւնը»:

Գիտելով առարկաներն ու երևոյթները մեզ շրջապատող աշխարհում, մենք հնարաւորութիւն ունինք միաժամանակ, կամ համարեա միաժամանակ ընդգրկելու ինչպէս նման, այնպէս էլ տարբեր երևոյթներ: Գասաւորելով և համեմատելով նրանց իրար հետ, մենք զգալի չափով հեշտացնում ենք այդ երևոյթների ուսումնասիրութիւնը: համեմատութեան շնորհիւ յայտնի են դառնում տարբերութեան և նմանութեան ընդհանուր դժերը:

Հնարաւորութիւն ունենալով միաժամանակ կամ արագ յաջորդականութեամբ գիտելու նման երևոյթները, մենք կարողութիւն ենք ձեռք բերում ըմբռնելու նրանց այն ընդհանուր դժերը, որոնք յատուկ են և բոլորի համար ընդհանուր: Այդպէս չէ գիտակցութեան աշխարհում: Այստեղ գիտակցութեան ծաւալի սահմանափակութեան պատճառով հնարաւորութիւն չկայ համագրելու կամ իրար հետ համեմատելու հոգեբանական մի քանի զգացողութիւններն ու մտապատկերները:

Այդ գիտարութիւնը մեծանում է այն հանգամանքի շնորհիւ, որ հէնց մեր գիտակցութեան կեդրոնացումը իւր բովանդակութեան վրայ՝ աւելի է սահմանափակում նրան, և բաւական է, որ մենք հետաքրքիր մեր գիտակցութեան մէջ եղած որ և է մտապատկերով կամ զգացողութեամբ և նրա վրայ կեդրոնացնենք մեր ուշադրութիւնը: Իսկոյն մեր գիտակցութեան մէջ այդ վայրկեանին եղած մնացած բոլոր տպաւորութիւններն ու մտապատկերները միանգամայն անյայտանում են այնտեղից:

Գեռ այդ քիչ է. հէնց որ մենք մեր ուշադրութիւնը կեդրոնացնենք այդ տպաւորութեան որ և է յատկութեան վրայ՝ օրինակ լսած ձայնի փափկութեան կամ նրա բարձրութեան աստիճանի վրայ, իսկոյն շնորհիւ այդ կեդրոնացման՝ այդ տպաւորութեան միւս բոլոր յատկութիւնները մեր գիտակցութիւնից իսկոյն անյայտանում են: Այսպիսով ինքնագիտողութեան հիմնական պայմանը՝ կեդրոնացած ներքին ուշադրութիւնը թոյլ չի տալիս ուղիղ և անմիջական համեմատութիւն անել և համագրաբար դատել գիտակցութեան երևոյթները:

Այդ հանգամանքը անյաղթելի արդեւք կը լինէր համագրական ինքնագիտողութեան, բայց բարեբաղդաբար մեր գիտակցութեան ծաւալը թոյլ է տալիս որոշ ընդարձակութիւն՝ մանաւանդ տպաւորութիւնների մի քանի խմբերի՝—օրինակ տարածութեան և ձայնի վերաբերութեամբ: Այդ խմբի տպաւորութիւնները առաւել զգալի դարձնելու համար կարելի է նրանց աւելի տևողականացնել, որից բարւոքում են ինքնագիտողութեան պայմանները: Իսկ տպաւորութիւնների այլ խմբերի մէջ, ինչպէս և վերացական մտածողութեան, զգացմունքների, ցանկութիւնների միջոցին թէև սեւեռած ուշադրութիւնը առաջ է բերում շատ ուժգին կեդրոնացումն, բայց ինքնագիտողութեանը օժանդակ է հանդիսանում այդտեղ այդ գործողութեանց աւելի տևողական պայծառ վերարտադրութիւնը, որը գլխաւորապէս վերաբերում է լոգիքական գործողութեանց: Հաւանական է, որ դրանով պէտք է բացատրել ինքնագի-

տողութեան և ինքնազննութեան ամենամեծ յաջողութիւնը հոգեկան կեանքի սփերայում:

Չուտ հոգեկան գործողութեանց ժամանակ պայծառ վերարտադրութեանը օժանդակում է նաև իւրաքանչիւր լոգիքական գործողութեան տրամադրութիւնը՝ նման գաղափարներ վերարտադրելու մեր ունեցածին, կամ մեր գաղափարի հետ սերտ կապուած որոշ մտապատկեր ու գատողութիւններ: Այդ բանի շնորհիւ առաջ է գալիս մի պայման այդ հոգեբանական երևոյթների և առաւել յաջող ինքնազննութեան:

Ինքնադիտողութեան ժամանակ հանդիպած արգելքների շարքում պէտք է յիշենք և այն ոչ պակաս նշանաւոր հանգամանքը, որ մեր սեփական հոգեկան երևոյթների վրայ մեր ունեցած իշխանութիւնը անհամեմատ աւելի թոյլ է, քան մեզ շրջապատող ֆիզիքական աշխարհի վրայ:

Մեզ շրջապատող երևոյթների և առարկաների մեծագոյն մասը միշտ մեր տրամադրութեան ներքոյ է և կարող է ծառայել մեզ որպէս դիտողութեան նիւթ իւրաքանչիւր անգամ՝ երբ մենք միայն կըցանկանք: Միւսները մեր տրամադրութեան ներքոյ են որոշ ժամանակ, որը մենք կարող ենք նախատեսնել առաջուց: Երբորդ խմբին, որը մեզանից հեռու է գտնուում, կարող ենք մտենալ ինքներս, կամ նրանց մօտեցնել մեզ:

Հէնց միայն այն հանգամանքը, որ արտաքին աշխարհի առարկաներն ու երևոյթները մեզ հնարաւորութիւն են տալիս առաւել երկար ժամանակ տպաւորելու ըստ ժամանակի և տարածութեան, ահագին իրաւունք է տալիս մարդուն այդ երևոյթների վրայ այն տեսակետից, որ նա կարող է մեծ յարմարութեամբ և ազատապէս ընտրելով դիտել և ուսումնասիրել նրանց: Այդ հնարաւորութիւնը զգալապէս զօրանում է և նրանով, որ մարդուս կամքից է կախուած այս կամ այն առարկան դիտելու բոպէն, տեղն ու պայմանները:

Որպէս դիտող բոլորովին այլ պայմաններում է գտնուում մարդս իւր հոգեկան աշխարհի և իւր դիտակ-

ցութեան ներքին երևոյթների վերաբերութեամբ:

Ճիշտ է, առարկաների վրայ ունեցած իշխանութիւնը միևնոյն ժամանակ որոշ չափով մեզ իշխանութիւն է տալիս և որոշ զգացողութիւնների և մտապատկերների վրայ, որովհետև մեր քմայից համաձայն հնարաւորութիւն ունենալով կատարելու այս կամ այն առարկաների և երևոյթների դիտողութիւնը, հնարաւորութիւն ենք ձեռք բերում մեր ցանկութեան համաձայն առաջ բերելու այս կամ այն զգացողութիւններ և մտապատկերներ: Բայց վերև առաջ բերած պատճառների շնորհիւ այդ ընդունակութիւնն առաւել մեծ արդիւնք է տալիս բնութիւնը դիտելիս, քան ինքնադիտողութեան ժամանակ: Բացի դրանից, չպէտք է աչքաթող անել, որ կամայական ինքնազննութեան այդպիսի հնարաւորութիւնը, ինքնադիտողութեան այդպիսի կողմնակի ստորադրութիւնը մեր կամքին՝ տեղի ունի մի միայն մի քանի տպաւորութիւնների ժամանակ: Դրա փոխարէն առաւել բարդ մտապատկերների մեր մտաւոր աշխարհում, զգացմունքների և կամքի գործողութեանց արտայայտութեան և տրամադրութեան միջոցին և այլն, մի խօսքով մեր գիտակցութեան ամենազաղտնի (ինտիմ) և արժէքաւոր շրջանում: Ինքնադիտողութեան ժամանակ կամքի ազդեցութիւնը հաւասար է զրոյի:

Այս հակադրութիւնը՝ բնութիւնը դիտելու գործողութեան համեմատական կախումն մարդու կամքից, և այդ կամքի կատարեալ բացակայութիւնը զուտ ինքնադիտողութեան ժամանակ առանձին նշանակութիւն է ստանում այն պատճառով, որ մարդս տրամադիր է միանգամայն հակառակն երևակայելու, այսինքն նա տրամադիր է հաւատալու իւր կամքի կարողութեանը իւր իսկ հոգեկան աշխարհի վրայ:

Կարևոր է յիշել, որ դիտողութեան մեր կամքից կախուած լինելը փորձի ամենաէական պայմանն է, փորձի, որ ճշմարիտ դիտութեան իսկական ազրիւրն է, և ինքնազննութեան և ինքնադիտողութեան մեր կամքից կախ-

ուած չը լինելը ամենամեծ արգելք է հանդիսանում հոգեբանութեան մէջ փորձն ընդունելու:

Ինքնադիտողութեան և աշխարհի ուսումնասիրութեան աննպաստ պայմանների ցանկը լրիւ չի լինիլ, եթէ մենք չը յիշենք գիտակցութեան և մի առանձնայատկութիւնը— այն է գիտակցութեան բոլոր տարրերի չափազանց խառն և խճճուած դրութիւնը:

Դիտելով մեզ շրջապատող ֆիզիքական աշխարհը, մենք նրա բարդ երևոյթներից միշտ կարող ենք ընտրել այն երևոյթը, նրա ցանկացած մասը, կամ նոյն իսկ այն ցանկացած վայրկեանը, որը դիտելու կարևոր ենք գտնում: Այս վերլուծութիւնը, որին ֆիզիքան և բնագիտութիւնը պարտաւոր են իրենց փայլուն յաջողութիւններով, ձեռք է բերում հազարաւոր գործիքներով և յարմարութիւններով, որպիսիք իւր տրամադրութեան ներքոյ ունի տեխնիկան:

Մտաւոր աշխարհում՝ բոլոր տարրերի փոխադարձ խճճուած լինելու պատճառով որ և է տարրի այդպիսի առանձնացումը և վերլուծութիւնը չափազանց դժուարին է, իսկ երբեմն դառնում է բոլորովին անկարելի:

Ենթադրենք, որ մենք պէտք է վերլուծենք մեր կամքի որ և է գործողութիւնը, մենք իսկոյն համազում ենք, որ այն յատուկ կողմը, որը մենք ենթադրում ենք այդ գործողութեան մէջ, այն է՝ ընտրութեան վայրկեանը, կամ վճիռը և կամ ճիգը՝ չի առանձնանում գիտակցութեան մէջ: Կամքի գործողութեան մէջ՝ վերլուծելիս մենք գտնում ենք շատ հարուստ և բարդ բովանդակութիւն՝ նպատակ, ծածկած մօտիւններ, և նախընթաց դժուարութեանց գիտակցութիւն, և զգացմունք շատ տարբեր բնաւորութեամբ՝ սուած վճռին թեր և դէմ:

Մի խօսքով փոխանակ մեր սպասած հասարակ և տարրական գործողութեան, մենք հանդիպում ենք հոգեբանական երևոյթների բարդ խմբակցութեան և կազմի:

Նոյնն է լինում զգացմունքների և մտքերի ժամանակ վերջիններիս մէջ վերլուծութիւնը երբեմն երևան է

հանում բազմաթիւ ծածուկ խմբակցութիւններ, որոնց ուղղութիւնն իւր կարգին իւրաքանչիւր վայրկեանին կախուած է ոչ թէ միայն տրամաբանական մեխանիզմից, այլ նաև տրամադրութիւնից, ինքնազգացողութիւնից և այլն:

Թւում է, թէ տարրական գիտելիների գործողութեանց շրջանում՝ տպաւորութիւններ ստանալիս ինքնադիտողութեան պայմաններն առաւել նպաստաւոր են, այս դէպքում կարծէք արտաքսուած է զգացողութեան և մեր անձի ազդեցութեան տարրը, չի նկատուում խմբակցութեան մասնակցութիւնը և մտապատկերների և զգացողութիւնների կազմակերպութեան գործողութիւնը կարծէք հասցրած է ամենամեծ պարզութեան և տարրականութեան: Սակայն չը նայեամ, որ մեխանիզմն այստեղ իսկապէս զգալի պարզութեան է հասցրած, բայց և այնպէս նա այնքան պարզ չէ, որքան մեզ թւում է այդ սեփական ինքնադիտողութեան միջոցին:

Մտապատկերների կազմութեան գործողութեան վերլուծութիւնը այստեղ էլ երևան է հանում մի գործոն՝ (Ֆակտորի) ուշադրութեան մասնակցութիւն, որը երբեմն ծածկուած է, երբեմն էլ յայտնի երևան է գալիս: Նրա դերը մտապատկերների ծագման և կազմակերպութեան ժամանակ, նրա կատարելութեան, պայծառութեան և տեւականութեան համար՝ շատ մեծ է:

Այդ գործոնը, որ միևնոյն ժամանակ և հոգեբանական է և ֆիզիոլոգիական, այնքան պարզ և տարրական չէ, որքան առաջներն էին կարծում: Նա իւր մէջ բովանդակում է և շարժող տարր—կամքի արտայայտութեան և զգայական գոյնի—գոհունակութեան և դժգոհութեան հետքեր և ցանկութեան սաղմն, ուշադրութիւնն ինքը մեր անձի հոգեկան բարձր մեխանիզմի, մեր «ես»-ի հետ շատ սերտ կապ ունի:

Վերջապէս ինքը՝ հասարակ տպաւորութիւնների կազմակերպութեան մեխանիզմը, հանդիսանում է հոգեբանական մի բարդ գործողութիւն: Հէլմհոլցի տաղանդաւոր հետախուզութեանց շնորհիւ յայտնուեց, որ գիտակցու-

թեան ամենահասարակ և անվերլուծելի տարրի կազմակերպութիւնը որոշ՝ գիցուք կարմիր գոյնից ստացած տպաւորութիւնը հետեանքէ մաքի անգիտակցական եղբակացութեան, այսինքն մի այնպիսի գործողութեան, որը իւր կողմից կազմուած է մի քանի բաղադրական մոմէնտներից:

Վերոյիշեալ օրինակից կարելի է եզրակացնել, թէ որքան բարդ են հոգեբանական գործողութիւնները և որպիսի դժուարութեանց է հանդիպում անմիջական ինքնագիտողութիւնը:

Հոգեկան աշխարհում, մանաւանդ գիտակցութեան մէջ, բոլոր թելերը փոխադարձ խճճուում են, շարժման բոլոր դժերը փոխադարձ և բազմիցս ընդհատում են իրար, բոլոր հիմնական տարրերը, եթէ միայն նրանք իրականապէս գոյութիւն ունին, կուտակուած են իրար վրայ և կարծէք թափանցում են իրար մէջ՝ հակառակ բնական երևոյթների անթափանցելիութեան: Վերջապէս գիտակցութեան ամբողջ աշխարհը հանդիսանում է որպէս մի չք բանաձևի կմիք, որը ոչ սկիզբ ունի և ոչ վերջ, և որտեղ չի կարելի գննել որ և է թելի առանձին ընթացքը, առանձնացնել գործօններից որ և է մէկը:

Հոգեբանական տարրերի այդ փոխադարձ խճճումն մեր գիտակցութեան մէջ հետեանք է գիտակցական երևոյթների անբաժանելիութեան, առարկայականութեան վերածելու անհնարաւորութեան, հետեանք է նրանց անկայունութեան, և գիտակցութեան ծաւալի սահմանափակութեան, որը վերջի վեցջոյ յանգում է գիտակցութեան անձնականութեան:

Հոգեկան աշխարհիս ուրեկտիւ գրութիւնը (անձնականութիւնը), իւր ուղղակի և կողմնակի հետեանքներով լուրջ արգելք է հանդիսանում ինքնագիտողութեան և հոգեկան աշխարհի ուսումնասիրութեան: Միայնով էլ բացատրում է հոգեբանութեան՝ որպէս գիտութեան՝ յետամնաց գրութիւնը ֆիզիքայի և բնագիտութեան արած յաջողութիւնների համեմատութեամբ:

Եւ հոգեբանութեան այդ յետամնաց գրութեան ամենաշոշափելի արտայայտութիւնը նկատուում է նրանում, որ գիտակցութիւն ուսումնասիրող գիտութեան մէջ չափ չկայ հոգեբանական երևոյթները չափելու, իսկ առանց չափելու՝ գիտութիւն էլ չկայ:

Չափելը յատուկ և ամենահասուն ձևն է, ինչպէս մի քանի երևոյթներն իրար հետ՝ այնպէս էլ մի երրորդ անփոփոխ մեծութեան հետ համեմատելու:

Յիզիքական աշխարհում կան և չափելու մշտական մեծութիւններ, որոնք կարող են որպէս համեմատութեան միութիւններ համարուել և չափեր, հետեապէս կան համեմատելու և չափելու միջոյններ:

Գիտակցութեան թագաւորութեան մէջ մշտական մեծութիւններ չկան, այսինքն չկան միութիւններ, և թէկուզ էլ լինին, ինքնագիտողութիւնը հնարաւորութիւն չունի այն ըմբռնելու և հաստատուն դարձնելու: Գիտակցութեան մէջ չկան նաև ճշգրիտ, առարկայական կօնտրօլի ենթարկուող, համեմատութեան և չափելու պայմաններ: Այդ կէտում միանում են բոլոր թելերը, բոլոր աննպաստ պայմանները՝ ճշգրիտ ինքնագիտողութեան և հոգեբանութեան զարգացման դէմ:

Բայց միթէ պէտք է կարծել, որ այդ բոլորը կըմնայ իւր ներկայ գրութեամբ:

Ընդունենք այն հիմնական գրութիւնը, որ ինքնագիտողութեան աննպաստ պայմաններն այն ձևով, ինչպէս որ նրանց ներկայումս գտնում ենք, հետեանք են ուղեղի և նեարգային համակարգութեան, որոշ բնական յատկութեան, հոգեկան գործողութիւնների: Հէնց այդ բանով մենք իրաւունք կատանանք ընդունելու, որ ինչպէս գիտակցութեան յատկութիւններն, այնպէս էլ ինքնագիտողութեան պայմաններն ենթակայ են աստիճանական զարգացման և յառաջադիմութեան որոշ օրէնքներին:

Չափահաս մարդու գիտակցութիւնն անհամեմատ բարձր է մանկան գիտակցութիւնից. եւրոպացու հոգեկան կեանքը շատ աւելի հարուստ է, քան վայրենու հոգեկան

նեղ աշխարհիկը, խոշոր իմաստասիրի, բանաստեղծի կամ նկարչի գիտակցութիւնը իւր հարստութեամբ, ուժով և պայծառութեամբ մի քանի անգամ գերազանց է միջակ մարդու գիտակցութիւնից:

Այդ բոլորը մեզ իրաւունք է տալիս յուսալու, որ գիտակցութեան մեխանիզմը (կազմը) և գործողութիւնը, ինչպէս իւր ամբողջական, այնպէս էլ իւր մասնակի ձևերով կարող է և նոյն իսկ պարտաւոր է ապագայում աստիճանական զարգացման ընթացքով զգալի չափով առաջ գնալ իւր ներկայ գրութիւնից: Այս բոլորն այնքան ակնհայտ է, որ ապացոյցների կարիք չունի:

Սակայն մի կէտ կայ, որի վրայ այստեղ պէտք է մատնանիչ լինել, որպէս ապագայ հոգեբանութեան պատուանդան, հաւատալու հիմունք: Ամենքն էլ յօժարութեամբ ընդունում են, որ հոգեկան աշխարհում, մարդկային գիտակցութեան մէջ գոյութիւն ունի յառաջադիմութիւն, բայց հարցրէք որ հոգեբանին էլ կուզէք, թէ ինչու՞ն է կայանում այդ յառաջադիմութիւնը, և նրանք ձեզ մատնանիչ կանեն մեր հոգեկան հարստութեան գուժարի, մեր գիտակցութեան բարդութեան, կապակցութեան չափի աճեցողութեան, մեր ուշադրութեան և գիտակցութեան այլ ընդհանուր յատկութիւնների զարգացման վրայ: Բայց այդ անելիս զանց են առնում նոյնքան՝ եթէ ոչ աւելի նշանաւոր մի հանգամանք՝ հոգեոյ զուտ ֆիզիոլոգիական, գիտակցութեան միջի կազմի զարգացումը, ըստ ժամանակի աւելի հաստատուն վերարտադրելու ընդունակութեան աճումը, գիտակցութեան ծաւալի ընդլայնումը, կամքի ազդեցութեան և հոգեկան առանձին երևոյթների վրայ ուշադրութիւն դարձնելու ընդունակութեան աճումը:

Մեր կարծիքով հոգեկան կեանքի այդ ֆիզիոլոգիական հիմունքները, մեր գիտակցութեան ծագման այդ ծածկուած անգիտակից մեխանիզմը կազմում են մեր ամբողջ հոգեկան աշխարհի հիմքը:

Շատ հաւանական է, որ այն, ինչ որ մենք կոչում

ենք հոգեբանական տաղանդ, խորունկ վերլուծութեան շնորհք, մերձաւորի հոգեկան աշխարհը թափանցելու ընդունակութիւն, այդ բոլորը, շատ կարելի է, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ հաստատուն տպաւորելու և սեփական գիտակցութեան շրջանակն ընդարձակելու մեծ ընդունակութեան հետեանք ցանկացած ժամանակ յիշելու և պայծառ դարձնելու յիշած գրութիւնները:

Կարող է պատահել, որ բաւական է հոգեկան այդ տարրական կամ, աւելի ուղիղն ասած պսիխոֆիզիոլոգիական ընդունակութիւնների ամենամանչան բարձրացումը, որպէս զի կարելի լինի ինքնագիտողութեան սահմանում միանգամայն նոր հորիզոններ տալ:

Քաղաքակրթուած մարդու այդ ընդունակութիւնների աստիճանական զարգացումը ոչ թէ միայն զգալի չափով բարձրացնում է ինքնագիտողութեան և ինքնաճանաչութեան մեխանիզմը (մեքենան), այլ և միևնոյն ժամանակ հոգեբանական երևոյթների ուսումնասիրութիւնը մօտեցնում է իւրաքանչիւր ճշմարիտ գիտութեան իդէալական պայմաններին—առարկայականութեան և չափելուն:

Այդ հեռաւոր ապագային հասնելու համար, երբ մարդս ընկերվարական և հոգեկան աստիճանական զարգացման բնական ընթացքով առաւել ուժեղ կը հանդիսանայ իւր սեփական հոգու գաղտնիքների դէմ մղած կռուում, ժամանակակից մարդկութիւնը դժուարին, բայց շատ արգիւնաբեր աշխատանք ունի կատարելու՝ ինքնագիտողութեան եղանակները կատարելագործելու և խմբական գիտողութիւններ կատարելու:

Ահա գրանուամ է կայանում ժամանակակից գիտական, կամ աւելի ուղիղն ասած բնական—գիտական հոգեբանութեան խնդիրը:

Նախ և առաջ պէտք է նկատել, որ այժմս գիտողութեան սֆերան զգալի կերպով ընդարձակուել է. նա ժամանակակից հոգեբանութեան մէջ մարդկային հոգեկան աշխարհից հեռու է տարածւում և պարփակում է նաև կենդանիների հոգեկան կեանքը: Ստորին կենդանիների

հոգեկան աշխարհի ուսումնասիրութեան ամբողջ շարքը, մանաւանդ ընկերվարական և աշխատանքի ընդունակներին՝ ինչպէս մրջիւնների, մեղունների, հարկադրեց շատ բանում փոփոխել նրանց խելքի և բնազդման մասին մեր կարծիքը և զգալի կերպով ընդարձակեց մեր հասկացողութիւնը առհասարակ հոգեբանական երևոյթների մասին։ Վերջին ժամանակներս նատուրալիստ (բնագիտ) — հոգեբանները հոգեկան կեանքի ուսումնասիրութեան շրջանակն ընդարձակեցին մինչև նրա ծայրագոյն սահմանը, մինչև ամենաստոր միախորշ արարածները, որտեղ հազիւ թէ կարող է խօսք լինել մարդկայինի մտքով գիտակցութեան մասին և որտեղ ամենայն հաւանականութեամբ կայ միայն նեարդային գործունէութիւն, որն իւր մեխանիզմի մէջ երևան է հանում գիտակցական կեանքի նիւն բազմաթիւ գծեր։ Մարդկանց գիտելու շրջանակն էլ առաջուանից ատելի ընդարձակ և բազմակողմանի դարձաւ Վայրենիների, մանուկների, կոյրերի, համրների հոգեկան կեանքի ուսումնասիրութիւնը, հոգեկան հիւանդութեանց քննածական, սպիրիտիքական երևոյթների ուսումնասիրութիւնը, մարդկային հոգւոյ մասին եղած գիտութեան համար արժէքաւոր սակաւ նիւթ չեն մատակարարել ազէն։

Հոգեկան երևոյթների ուսումնասիրութեան գործում ամենամեծ քայլ պէտք է համարել տասնեկններորդ դարու երկրորդ կիսից՝ Վերերի, Հելմհոլցի և Ֆէրնների ժամանակներից ծնունդ առած փորձնական հոգեբանութիւնը, որը հիմնուած է գիտակցական երևոյթներ վերլուծելիս բնական մէթոդներ (եղանակներ) գործադրելու մէջ, Այդ ֆիզիոլոգիական դպրոցի բնորոշ առանձնայատկութիւններն ու հիմունքները հոգեբաններն համարում են հետեւելը։ —

Նախ և առաջ ուսումնասիրուում է հոգեբանական երևոյթների կապը մեր կազմուածքի գրութեան հետ, օրինակ, զգացմունքի և սյսպէս կոչուած յուզմունքների (աֆֆէկտների) զգացմունքների մեծ տատանման ուսուցման մէջ առաջին ատեղն է տուած այդ գրու-

թիւնների և մեր մկանունքների աշխատանքի, սրտի և մարմնի և այլ զգայարանների գործունէութեան կապին։ Նոյն ձևով ուսումնասիրուում է այդ ֆիզիոլոգիական մոմէնտների և հակառակ փոխազդեցութիւնը ընդհանրապէս մեր հոգու, մանաւանդ մեր զգացմունքների վրայ։

Այսպէս կոչուած՝ մտքեր կարդալու երևոյթի ուսումնասիրութիւնը նոր լոյս սփռեց մտքի անդիտակցական ինքնաշարժ մեխանիզմի աշխատանքի և նրա մեր մարմնի շարժումների վրայ ունեցած ազդեցութեան վրայ։

Այդ ֆիզիոլոգիական ուղղութիւնը գործադրուեց մի ամբողջ շարք ուսումնասիրութեանց միջոցին՝ մեր յոգնածութեան, ուշադրութեան, ուժասպառ դրութեան և քնի մասին, ալիօհոլի, ափիօնի և այլ գրգռող և թունաւոր նիւթերի ազդեցութեանց ժամանակ։ Ֆիզիոլոգիական հոգեբանութեան մէթոդի կերպնական կէտն է ինքնազդեցութեան աշխատանոցային (лаборатория) միջավայրը։ Աշխատանոցային իւրաքանչիւր գիտողութեան ժամանակ մասնակցում են մի քանի հոգի, որոնց մէջ բաժանուած են դիտողութեան աարբեր մոմէնտներ։ Այդպիսի դիտողութիւնից հանած եզրակացութիւնը միշտ հանդիսանում է խմբակցական աշխատանք մի քանի անձերի, գիտակցութեան մի քանի ազրիւրների, եթէ միայն կարելի է այդպէս կոչել։ Այդ դիտողութիւնները սովորաբար կատարուում են փոխադարձաբար՝ փորձին մասնակցող անձերի կողմից՝ միւսի վրայ։ Միաժամանակ որպէս լուրջ ուսումնասիրութեան պայման, պահանջուում է նոյն փորձի կրկնութիւնը բազմաթիւ անձանց վրայ և այն էլ իւրաքանչիւր անձի վրայ մի քանի անգամ։ Այդ պատճառով էլ դիտողութեան արդիւնքը ոչ թէ միայն հետևանք է խմբակցական աշխատանքի, այլ միևնոյն ժամանակ համեմատական բնատրութիւն ունի և հանդիսանում է միջին եզրակացութիւն առանձին առանձին կատարած մի շարք դիտողութիւնների։

Աշխատանոցային հետազոտութեան և ամբողջ ֆիզիոլոգիական հոգեբանութեան հիմնաբար պէտք է ընդունենք

անկասկած զանազան ֆիզիքական գործիքները և մանա-
ւանդ չափերի գործադրութիւնը հոգեկան երևոյթները հե-
տազօտութեան միջոցին:

Այդ եղանակով հնարաւոր եղաւ չափել այն ժամա-
նակամիջոցը, որ հարկաւոր է հոգեկան զանազան գործու-
ղութիւնները, զգացումները, գիտողութիւնները, կամքի
վճիռները և այլն ծագման համար, նաև որոշել զանազան
հոգեբանական գործողութիւնները տեղողութիւնն ըստ
ժամանակի:

Առաջին խմբի փորձերից յաջողուեց հանել այն մի-
անգամայն նշանաւոր եզրակացութիւնը, որ գիտակցու-
թեան մէջ որ և է հոգեկան գործողութեան ծագման հա-
մար այնքան աւելի շատ ժամանակ է պահանջուում, որքան
այդ գործողութիւնը բարդ է: Միայն այդ փաստն արդէն
շօշափելի կերպով ցոյց է տալիս, թէ ո՞ր աստիճանի սերտ
կապ կայ մեր գիտակցութեան և ուղեղի մէջ կատարուող
նիւթական գործողութիւնները մէջ: Որոշ աստիճանի հնար
եղաւ չափելու նաև գիտակցութեան զօրութիւնը և որո-
շելու, թէ ինչ աստիճանի է մեծանում զգացողութիւնների
զօրութիւնը, երբ այդ զգացողութիւններ արժարժող
դրդիչները ոյժը որոշ չափով աճում է: Որքան առաջին
փորձերը նշանաւոր են գիտակցութեան և նետարդային
գործունէութեան միջի կապը ապացուցանելու համար,
նոյնքան էլ վերջին հետեւանքները (Ֆէլսնի օրէնքը) հա-
մողիչ կերպով ապացուցանում են, որ մեր գիտակցութիւնը՝
գոնէ արտաքին առարկաներ ճանաչելու գործում՝ ըստ
քանակի կախուած է մեր զգայարանների վրայ ներգործող
բնութեան ոյժերից:

Մեր ժամանակ ֆիզիքական գործիքները կիրառու-
թիւնը ահագին ծառայութիւն է մատուցանում ինքնա-
գիտողութեան՝ նախ նպաստելով գիտակցութեան ուսում-
նասիրելի երևոյթների զօրութեան և երկրորդ նրանով,
որ շնորհիւ այդ գործիքների հնարաւոր է դառնում գի-
տակցութեան բարդ երևոյթների վերլուծութիւնը, իրեն
կազմող մասերի և բաժան տարրերի վերածելը:

Երբ մենք հատուածակողմի (պրիզմայի) օգնութեամբ
վերլուծում ենք արևի լոյսը իրեն կազմող մասերի՝ սպեկ-
տրալ գոյնների, չէ որ մենք միաժամանակ սպիտակ գոյնի
բարդ տպաւորութիւնները վերլուծում ենք լուսոյ տպա-
ւորութեան շարքերի—արտաքին նիւթական երևոյթի ֆի-
զիքական վերլուծութիւնը առաջ է բերում նաև մեր
գիտակցութեան վերլուծութիւն:

Երբ մենք գծողական գործիքով վերլուծում ենք մեր
ձեռքի շարժումները, կամ դէմքի մկանունքային շարժում-
ները մկանունքային առանձին շարժումների, մենք դրանով
կատարում ենք մեր կամքի գործողութեան վերլուծու-
թիւնը իւր կազմող մասերի:

Երբ մենք ալեչափների և ընդօնատօրների օգնու-
թեամբ երևան ենք հանում բարդ ձայնի մէջ որոշ բար-
ձրութեան ալիքներ, երբ մենք այդ ձևով պարզում ենք
բարդ ձայնի նրբութիւնը (տեմբրը) և այդպիսով պարզում
ենք նրա կազմութեան գլխաւոր ձայները, մենք միաժա-
մանակ կատարում ենք երկու զուգահեռական գործողու-
թիւն—ֆիզիքական երևոյթի վերլուծութիւն և մեր զգա-
յութեան և տպաւորութիւնների կազմալուծումն:

Հեղեբանական երևոյթների հետազօտութեան ժա-
մանակ ֆիզիքական գործիքների գործածութեան մէջ մենք
որոշ չափով միջոց ենք գտնում կուռելու ցայսօր մեր
անմիջական ինքնագիտողութեան գլխաւոր արդեւքներից
մինի՝ մեր գիտակցութեան կազակցեալ և անվերլուծանե-
լիութեան դէմ:

Սչխատանոցային հոգեբանութեան մէջ պակաս նշա-
նաւոր չէ փորձնականութիւն ստեղծելը հոգեկան աշխարհն
ուսումնասիրելիս: Ինչպէս յայտնի է, բնագիտութեան մէջ
փորձը՝ դնելով ուսումնասիրելի երևոյթը արհեստական
պայմանների մէջ, ոչ միայն հնարաւորութիւն է տալիս
այդ երևոյթը միւսներից բաժանելու՝ որոնց հետ նա
ձուլուած է, այլ և ստեղծում է համադրութեան պայ-
մաններ, որովհետև շնորհիւ ցանկալի և ըստ ցանկութեան
ստեղծած պայմանների, հնարաւոր է դառնում պարզել

այդ երևոյթի կապը այլ զանազան մոտենաների հետ:


Հոգեբանական փորձը՝ չափելու և վերլուծելու գործիքների օգնութեամբ նոյն բանն է անում հոգեկան աշխարհի համար: Այստեղ էլ դիտակցութեան զանազան դրութեան վաղորօք կատարած վերլուծութիւնը իրենց կազմող մասերի, ճանապարհ է հարթում այդ մասերի նորանոր համադրութեանց՝ արհեստականապէս կազմակերպելու հոգեբանական աւելի բարդ դրութիւններ: Իբրև այդպիսի փորձնական համադրութեան օրինակ հոգեբանական երևոյթները շրջանում, կարելի է մատնանիշ լինել նորագոյն ժամանակների փորձերի վերայ՝ գործիքների միջոցաւ ստեղծելու մտապատկերների աւելի բարդ խմբակցութիւններ և ուսումնասիրելու դազափարների կապակցութեան կազմը և օւղղութիւնը:

Վերջացնելով սոյն աեսութիւնը, աւելորդ չենք համարում մատնանիշ լինել այն բանի վրայ, որ փորձնական եզրանակը խոստանում է կողմնակի կերպով մի մեծ ծառայութիւն ևս անել հոգեբանական երևոյթների ուսումնասիրութեանը նրանով, որ դիտակցութեան աշխատանոցային հետազոտութիւնը արհեստական պայմաններում, անխուսափելի կերպով առաջ պէտք է բերի մարդումն և կատարելագործութիւնան հատական ինքնավերլուծութեան, այսինքն ինքնադիտողութեան արուեստի: Փիղիքական արուեստի կատարելագործութիւնը մեզ կ'առաջնորդի դէպի մեր ներազդացութեան աւելի մեծ նրբութիւնն ու ճշտութիւնը և մեզ կը դարձնի իշխող մեր սեփական ներքին աշխարհի վրայ:



12

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is extremely faint and illegible due to fading and the quality of the scan. It appears to be organized into several paragraphs or sections, but the specific words and sentences cannot be discerned.



ՀՀ Ազգային գրադարան



NL0150176

